The image shows the front cover of an antique book. The cover is decorated with marbled paper featuring a pattern of irregular, interconnected shapes in shades of red, black, and white, set against a light beige background. The spine of the book, visible on the left, is bound in a dark reddish-brown material. A small, rectangular, off-white paper label is affixed to the lower-left corner of the cover. The label contains handwritten text in blue ink, including a checkmark, the letters 'Ltn', and the year '1890'.

✓ Ltn  
1890

1999

1999

185

ՄԱՐԷՏԵՆ

ՍՊԵՐԵՊԵՏԻ 178

ԵՂԲՕՐ ՀԵԹՄՈՅ ԼՈՒԶՆՈՅ

ԼՐԻՆՅԻ ՀԱՅՈՑ

ՊԵՏՄՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆԵՑ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԵՒ

ՀԱՅՈՑ ՄՆԾԵՑ

ԸՍՏ ԿԱԳԻ ԺԱՄԱՆԱԿԱՑ

ИЗДАТЕЛЬСТВО


Издательство "Свет" в Константинополе

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ  
ՀԱԿՈՐ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

Ի ՄՈՍԿՈՒՆ

Ի Կոստանդուպոլիս Կոստանդուպոլիսի Կոստանդուպոլիսի

1856.



2182

0001  
8323700

181

424P373P0

80032-4839-93

80032-4839-93

4440-107023P

4440-107023P

44

83600 80032

80032-4839-93

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ:

на основании отзыва Адъюнкта С. Петербургскаго Университета Бероева, съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Ценсурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Санкт-петербургъ. Апрѣля 5 дня, 1856 года.

Ценсоръ Н. Елагинъ.

к. 8678



683

Ursachen der Gummifl

31 4.  
ՅԻՇԱՏԵԿ ՀՈԳԻՈՅ

ՊԵՅՆՆՈՒՆՓԵՅԼ ԿՈՄՄԻ

ԵՒ ԱՍԳԵՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ԿԱՐԳԻ

ՍՐԲՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՐՈՒՍԱԴԷՄԱՑԻՈՅ

ՏԵԼՈՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԼԵՂԱՐԵՆՆՅ

ԵՒ ԵՂՐՕՐ ՆՈՐԱ

ՏԵԼՈՒՆ ՅՈՎԼԿԻՄԱՅ ԼԵՂԱՐԵՆՆՅ

ՀԻՄՆԱԳՐԱՅ

611  
ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵԻԿԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ

Ի ՄՈՍԿՈՒԱ

ՆԱԳՐԻՄԱՆ

Գրքատեղիի համարը 123456

Ստեղծող Գրքատեղիի Յոհաննիսյան Երևանյան

համարը 123456

71890.60

28 1897

## ՅԼՈՒՆՔԼԵՒՆՆ

Պատմաբանս այս անուամբ և եթէ էր ծանուցեալ բազմաց ՚ի մերոց մատենագրաց, գուցէ և ամենեցուն. քանզի Սիբայէլ Ա. Չամչեան յիշատակէ զնա ՚ի շարս այնոցիկ հեղինակաց՝ որոց գրուածք չէին հասեալ ՚ի ձեռս իւր (1): Իսկ արդ յերևան գայ նա և իւրովն գրաւորական երկասիրութեամբ, Պատմութեամբս ասեմ՝ զոր փութամն հրատարակել տպագրութեամբ ՚ի վայելումն բարեմիտ վերծանողաց և բանասիրաց Ազգիս մերոյ:

Ի բուն բանից հեղինակիս ցուցանի, թէ էնա Սմբատ Սպարապետ Ղաունդստապէն (2) կուչեցեալ՝ եղբայր հեթմոյ Լ. արքային հայոց, այն՝ որ յամի Տեառն 1246 կամ 1248 ՚ի

(1) Ի Պատմ. Հայ. հատ. Խ. յեր. 18.

(2) Զանունս Ղաունդստապէն կամ Ղաունդստապէս կամ Ղաունդստապէն (որ է բառ Լատինական, և նշանակէ Արտուստապէս - Шталмейстер) եբմե անունս պատուոյ տային Հայք մեծի Սպարապետի ՚ի ժամանակս Ռուբինեանց:

նմին իսկ 'ի Հեթմոյ իբրև դեսպան առաքեցաւ  
 առ Ղախուք կամ Ղաչուկ Սյան (Թ)աթարաց՝ 'ի  
 նորոգել ընդ նմա զգաշն խաղաղութեան, և 'ի  
 խնդրել զքանի մի քաղաքսն Հայոց՝ զորս առեալ  
 էին (Թ)աթարք 'ի ձեռաց Լ՝միրային Լ՝կոնիոյ (1):  
 Եւ զայս պատմէ նա ինքն Սմբատ պարզ բանիւ  
 յասելն (յեր. 115). » 'ի Թուին ողէ գնացի  
 ես Սմբատ Ղուկմուստապլս 'ի (Թ)աթարն. և  
 'ի Թուին ողթ դարձայ առ իմ եղայրն Հեթ  
 Թում Թագաւորն (2) »:

(1) Տե՛ս 'ի Պատմ. Հայ. Չամչ. հասար Դ. յեր. 222.

(2) Պէտքէ այսմ և Հեթում Պատմիչ ('ի գլ. Եգ.) բայց 'ի  
 զիրս նորա անունս Սմբատ՝ 'ի պատճառս Թարգմանութեանն  
 'ի Գաղղիական լեզուէ 'ի Լատին և 'ի Լատինէ 'ի Հայ՝ փոխեալ  
 է 'ի Սեմեթողոյ, (որդէս և անունս Սմբողանոյ՝ 'ի Սեմար-  
 գանոյ, և անունս Շապուհ՝ 'ի Շապուքէոս, եւ):  
 Բանն յիշատակեալս Պատմչի այս է. » Յամի Տեառն 1253,  
 արքայն Հայոց տէր Հեթում. . . . խորհեցաւ անձամբ երթալ  
 առ ինքնակալն Թաթարաց, զի առաւել զիւրաւ գոցէ զչնորհ  
 և զսէր նորա, և մտրթացի կրել զգաշն խաղաղութեան ընդ  
 նմա: Եւ նախ առաքեաց զպարսն Սինիբաղա Գուկմուս-  
 տապլն Թագաւորութեան Հայոց զիւր մտերիմն, զի հրաման  
 առեալ անբոյթ կարացէ երթալ. ուստի այն սա եղբայր  
 արքայի դնաց առ ինքնակալն Թաթարաց՝ լնուլ բարաք ըզ  
 դարձս պաշտաման իւրոյ. և յետ չորից ամաց դարձաւ 'ի  
 Հայս՝ պատմել զոր ետեան և զսր լուաւ »:

Վա ինքն ուրեք ուրեք յընթացս պատմու  
 թեանն ծանօթս տայ սակաւութ և զայլոց գոր  
 ծոց իւրոց՝ մերթ յառաջին դէմ և մերթ յերրոր  
 դըն կարգելով զբանսն. զոր օրինակ (յեր. 113.  
 114) »Ճողովեաց (Բայի Սոսրով Շահն) հե  
 ծեւ, և առաջնորդութեամբ պարոն Աոստանդնայ  
 Ամբրոնի տիրոջն՝ մտաւ ընդ Պապաւոնին լեա  
 ունն ՚ի վայր, ու այրեաց զամէնն: Աւ թա  
 գաւորահայրն պարոն Աոստանդին ու Սմբատ  
 Ղոււնդուստապըն եկին մտան ՚ի Տարսուս. և  
 թագաւորն իւր հեծեւովն կայր ՚ի Ղաանա:  
 Թաւուրքն սղարեաց զՏարսուս. իջան ՚ի դարոտն  
 հետ գետին, գերեցին զամէն երկիրն. և կե  
 ցան վեց օր. և ապա եւ ածին՝ որ ելնէին  
 ընդ Աուկկայ կապանն: Թագաւորն հեծեւովն  
 ՚ի հետ եւ, և թագաւորահայրն, և Սմբատ  
 Ղոււնդուստապըն, և հասին ՚ի տեղ մի՝ որ  
 Մայծաւ ասեն: Վա դարձան անթիւ շատ ՚ի  
 յետ. մեք դիպաք (զօրաց թշնամւոյն) ու Ղա  
 սուծով խանգրեցաք, և կոտորելով վարեցաք  
 ինչվի Պուտանդէ. . . . : Ի թուին ողե արա  
 ըին շատ ժողովք, ու եկին մտան ընդ Աու  
 կըրկայ կապանն երկու հարիւր և վաթսուէն հա  
 շար) մարդ. և բոլոր պատեցին զՏարսուս:  
 Թագաւորահայրն, և ես Սմբատ Ղոււնդուս

տապը , մտաք 'ի Տարսուս : Այլ եթէ զամէն ներդուծիւն բաբնաց ու զկուիւ գրեալ էաք , նա կարի շատ էր լեալ : Հենց որ 'ի Պլու մոնին դեհն ու 'ի Պլուեւին՝ աղէկ նետընկէց մի՝ փլուցին զպարիսպն , շատք մեռան յերկուց կողմանցն , բայց 'ի դրացէ՝ ( իմն՝ արտաքուստ , յերկըցն արտաքոյ ) հարիւրապատիկ . զի ունէաք ընդ ներքս աղէկ Պլուանկի չարխուորք : »

Հայելով և յայլ հատուածս ինչ բանից որ 'ի մատենիս՝ տեղեկանամք , նախ՝ թէ եկաց նա առ Ժամանակօք երկուց Թագաւորաց մերոց , Հեթմոյ Ա. և Աւոնի Պ. յորոց առաջինն Թագաւորեաց 'ի 1224 ամէ Տեառն ց1268 , և երկրորդն՝ 'ի 1269 էն ց1288 : Արկրորդ՝ թէ էր մի 'ի մոտերմագոյն սիրելեաց նախայիշատակեալ արքային մերոյ Աւոնի , և մեծարոյ յոյժ յաչս նորա , որպէս ինքն իսկ խոստովանի ասելովն ( յեր. 98. 99 ). » Այլ արքայն Աւոն իմաստուն և հաճարեղ , զուարթ տեսով , և առատասիրտ 'ի հեռաւորս և 'ի մերձաւորս՝ 'ի մեծամեծս և 'ի փոքունս՝ 'ի վաներս և յեկեղեցիս՝ յիշխանս և յուամիկս . . . : Աւր իմանայր՝ թէ գոյ այր իմաստուն , և գիտուն , և աջող 'ի գործ կամ 'ի զխուորուծիւն , կամ 'ի

խօսս և 'ի պատասխանիս, յղէր և կոչէր խոստմամբ, և հանգուցանէր պարգևօք. յորոց մի էս եմ Սմբատ Սպարապետ՝ Թարգմանող տառիս:»

Օմնհուանէ Պատմաբանիս, և զհասակէն՝ յորում վախճանեցաւն, գիտե՛լ արժան է. զի Սիքայէլ Ս. Չամչեան 'ի խօսելն զՍմբատայ Սպարապետէ՝ զեղբօրէն Հեթմոյ Մ. չասէ՝ Թէ նա ինքն է պատմիչն Սմբատ (քանզի և չկարէր իսկ ասել, ըստ որում չունէր զնորա գրուած սըն 'ի ձեռին). սակայն զարիական մնհուան նորա զպատմութիւն լիագոյն հանգամանօք աւանդէ՝ առեալ 'ի յիշատակարանէ Ռամանոսի ժամանակից վարդապետի և յայլոց գրուածոց՝ օրինակ զայս. » Եհաս, ասէ, գուժկան (առ արքայ Սևոն Պ. յամի Տեառն 1275), եթէ Մմիրայն Նգիպտացւոց. . . . Ժողովեալ անհամար զօրս՝ վերստին գայ այսր զայրացեալ: Օայս լուեալ Սևոնի՝ Ժողովեաց զզօրս իւր, և բազում բանիւք յորդորեալ զնոսա՝ քաջալերեաց մարտընչիւ գոնէ 'ի վերայ հաւատոյ: Ալ իբրև լուր եհաս՝ Թէ մօտ են Նգիպտացիք մտանել յաշխարհն Աիւլիկիոյ, բաժանեաց զզօրսն 'ի վեց գունդս. զմին էառ ինքն. զերկրորդն ետ 'ի ձեռս հօրեղբօր իւրոյ ծերունւոյն Սմբատայ,

որ Սպարապետն էր՝ և Ղաունդստապէն կոչիւր .  
 և զայլն 'ի ձեռս այլոց : Սմբատայ հրամա-  
 յեաց ելանել նախ իւրով սակաւաձեռն զնդաւ  
 ընդդէմ Ագիպտացւոց . և զայլ գունդս եդ  
 'ի դարանս շուրջանակի . և ինքն դիմեալ ընդ  
 զանխուլ ճանապարհ՝ էանց 'ի յետին կողմն  
 զօրուն Ագիպտացւոց : Այլ իբրև սկսան Ագիպ-  
 տացիք դիմել 'ի ներքին սահմանս Աիւլիկիոյ ,  
 ել ընդ յառաջ նոցա Սմբատ զնդաւ իւրով :  
 Օայն տեսեալ նոցա՝ կարծեցին , թէ այնչափ  
 միայն իցեն զօրք Հայոց . վասն որոյ վստահու-  
 թեամբ յարձակեալ 'ի վերայ նոցա՝ սկսան մար-  
 տնչիլ և վանել զնոսա : Այլ 'ի շփոթել Հայոց  
 զյարձակմունս նոցա՝ հասին և դարանամուտքն  
 ըստ ժամադրութեան իւրեանց շուրջանակի .  
 եհաս զկնի և Աւոն . և ամենեքին 'ի մէջ փա-  
 կեալ զԱգիպտացիսն՝ կոտորեցին զնոսա 'ի  
 բերան սրոյ . և այնչափ եղեն անկեալքն 'ի  
 նոցանէ , մինչև դիականց նոցա խափան լինել  
 փախստեան մնացելոցն : Այլ 'ի ղերծանիլ անդ  
 զօրագլխի Ամիրային սակաւութեամբ , պնդեցաւ  
 Սմբատ զհետ նորա . այլ 'ի սաստկագոյնս ար-  
 շաւելոյ երիվարին՝ ուժգին հարեալ զոտն իւր  
 զծաւոյ՝ վտանգեցաւ . և ոչ կարացեալ տանիլ  
 ցաւոյն վասն ծերութեան՝ դարձաւ յետս .

և կացեալ աւուրս քանի մի՝ մեռաւ (1): »

Լ՝ յօրինակ ահա՛ յաղթական փառօք կնքեաց զերեկոյացեալ կեանս իւր՝ արժանին յաւերժա կան յիշատակի մերս Պատմաբան Սպարապետ յամի Տեառն 1275:

Թէ քանի՛ ամաց էր նա՛ ՚ի մեռանէն, այս ոչ նշանակի ճշդիւ ՚ի նախայիշատակեալդ պատմութեան. այլ զի ՚ի մատենի աստ տեսանի ուրոյն ժամանակ ծննդեան նորա նշանակեալ, ըստ որում ասի (յեր. 106). » ՚ի թուին Հայոց ո՞՞՛է (այն է ամ Տեառն 1208) ծնաւ Սմբատ Ղառնսդուստապէն՝ թարգմանող (2) պատմութեանս »: յայտմանէ ինքնին ՚ի յայտ դայ՝ թէ էր նա ՚ի մեռանէն՝ 66 կամ 67 ամաց:

Որովհետեւ ըստ վերագրելոցս՝ մահ Պատմաբանիս եղև յամի Տեառն 1275, երևի՛ թէ ցայն վայր և եթ կարաց նա հասուցանել զՊատմ

(1) ՚ի Պատմ. Հայ. հատ. 7. յեր. 277. 278.

(2) Աստանօր, որպէս և ՚ի միւսումն հատուածի՛ որ ՚ի վեր


անդր ՚ի մէջ բերաւ, չէ՛ պարտ զբառդ թարգմանող՝ իմանալ վերածող կամ իրիող զբան ՚ի միոյ լեզուէ յայլ, այլ՝ ճտող կամ պարծող. զի և ըստ սցոյցիկ նշանակութեանց ՚ի կիր առնուն մեր նախնիք զբառդ թարգմանէլ, որպէս ցուցանէ օրինակօք նորատիպ ընդարձակ բառարանն լեզուիս:

մագրութիւն իւր՝ սկսեալ 'ի Թուականէն Հայոց 1, ց' 2) Վ, այն է՝ յամէ Տեառն 955 ց 1275: Իսկ որ ինչ յետ այնորիկ պատմի ցԹուականն Հայոց 22 և այսր ևս, Թուի լինել Շարունակութիւն յայլմէ ումեքէ, այս է՝ կամ 'ի Ռամանոսէ վարդապետէ 'ի վեր անդր յիշատակելոյ, և կամ յայլմէ յանժանօթ գրչէ, զոր՝ կարծեօք իմն համարելով Ս. վարդապետի Չամչեան՝ Թէ իցէ Սմբատ Աիւլիկեցի, զհատուած մի բանից նորա 'ի մէջ բերէ 'ի պատմելն զարշաւանս Ագիպտոսացոց յաշխարհն Աիւլիկիոյ յամի Տեառն 1335, կամ 'ի Թուին Հայոց 22 Վ (1): Յաւելուած 'ի Շարունակողէն Թուի լինել և այն՝ որ կայր 'ի վերնագրի մատենիս զկնի այլոց բառից օրինակ զայս. » Այս յայտ ժամանակէ ժամանակագրութիւն » որոյ փոխան 'ի տպագրութեանս պատշանձ դատեցաւ զնել » Պատմութիւն . . . . ըստ կարգի ժամանակաց » , հայելով յայն՝ զի երկոցունցն ևս գրուածք՝ յիշատակութիւնք անցից միայն են ըստ կարգի ժամանակաց, կամ պարզ ևս ասել՝ կարճառօտ ժամանակագրութիւնք:

Տպագրութիւն մատենիս եղև ըստ միոյ և եթ գրչագիր օրինակի՝ զոր ունէի 'ի ձեռին :

(1) 'ի Պատմ. Հայ. հատ. 4. յեր. 335.

Աստի և չհամարձակելով առանց բաղդատու  
 Թեան ընդ այլում օրինակի՝ ըստ մտի ինչ առ  
 Ել ուղղագրութիւնս, ուշ եղի պահել յամե  
 սյնի զհարազատութիւն բնագրին, մինչև ըզ  
 տնարհմունս անգամ բայից և զհոլովս ինչ ան  
 ւանց՝ որք բազում ուրեք ըստ ձևոյ աշխարհիկ  
 Էզուի այնր ժամանակի եղեալ էին, անփոփոխ  
 յոյնութեամբ պահել ջանացայ: Միայն զյայտնի  
 առասխալս գրչի և զկետադրութիւնսն ուղղել  
 ըստ կարի՝ ոչինչ խղճեցի, ակն ունելով՝ Թէ  
 անբասիր կացուցեն զիս յայսմ բարեմիտ ըն  
 Թերցողք. յորոց 'ի վայելումն՝ Թէ Տէր յա  
 ղողեացէ՝ 'ի մտի ունիմ յորժամ ձեռնհաս գը  
 յայց՝ 'ի տիպ արձանացուցանել հետ զհետէ և  
 լայլ գրչադիրս առաջնոց բարեվաստակ մատե  
 ադրաց Մղգիս՝ որք արդէն առ իս կան, և որք  
 Ընին հասանիլ յիմ ձեռս: Այլ այս յայն սակս՝  
 ի մի՛ պատուական գանձքն այնորիկ՝ իբրու Թա  
 ւուցեալք 'ի խորս երկրի՝ անօգուտ մնացեն:





ՍՄԲԵՏԵՅ  
ՍՊԵՐԵՊԵՏԻ

ԵՂԲՕՐ ՀԵԹՄՈՅ ԱՌԱՋՆՈՅ

ԵՐԻՆՅԻ ՀԵՅՈՅ

Պատմութիւն Յոնաց 'ի Կոստանդնուպօլիս ,

և Հայոց Մեջաց ,

ըստ հարգի ժամանակաց :



Ի ժամանակս Թագաւորութեանն Յունաց  
Ռամանոսի որդւոյ Կոստանդեայ, և 'ի հայրապե-  
տութեանն Հայոց տեառն Լ'նանիայի, և յիշխա-  
նութեանն Պարսից Մահմուտ սուլտանին, և 'ի  
Թուականին Հայոց ն, Թագաւորէ Ղազիկ Տագ-  
րատունի տանն Հայոց , որ էր որդի Լ'շոտոյ . և  
Լ'շոտ՝ որդի Լ'բասայ . և Լ'բաս՝ որդի Սմբատայ :  
Լ'շր Թագաւորս այս՝ քաջ, բարետեսիլ և ահար-  
կու, ողորմած և քաղցր 'ի վերայ ամենեցուն ,  
զարդարեալ ամենայն բարեձևութեամբ՝ հան-  
դոյն նախնի Թագաւորաց սրբոց , և յաղթող  
'ի պատերազմունս Թշնամեացն Քրիստոսի . որ

Ն .

և օգնականութեամբ Մատուծոյ զօրացեալ՝ խաղաղացոյց զաշխարհն ըստ իւրաքանչիւր կերպի, զեկեղեցականս և զիշխանս, զուամիկս և որ ընդ իշխանութեամբ նորա էին. պայծառացան և եկեղեցիքն խաւարեալ և կործանեալ յազգացն Սահմետի, և ամենեքեան առ հասարակ գոհանային զտեառնէ Մատուծոյ:

ՆԺ.

Իսկ 'ի Թուականութեանն Հայոց նժ հարկաւորեալ հայրապետն սուրբ և ամենայն իշխանք Ղազկայ, և առաքեալ դեսպան առ կաթողիկոսն Մղուանից տէր Յովհաննէս, և առ Թաղաւորն նոցա Փիլիպէ, կոչեցին զալ 'ի յօժումն Թաղաւորին Ղազկայ. որոց եկեալ քառասուն էպիսկոպոսօք և բազում իշխանօք. և միաբանեալ՝ օճեցին զՂազիկ Թաղաւոր Հայոց: Օր թէպէտ ունէր զիշխանութիւնն, այլ ոչ էր ընկալեալ զԹաղ Թաղաւորութեանն 'ի գլուխ իւր: Եւ եղև ուրախութիւն և հանդէս մեծ յաւուրն յայնմիկ 'ի քաղաքն Մնի. և կատարեալ զաւուրս ուրախութեանն՝ դարձուցանէին զկաթողիկոսն և զԹաղաւորն մեծամեծօքն յաշխարհն իւրեանց մեծաւ պատուով:

ՆԺԲ.

Իսկ զկնի երկուց ամաց մեռաւ Թաղաւորն Յունաց Ռամանոսն, և Թողոյր որդիս երկու՝ զԱլասիլ և զԿոստանդին: Եւ զկնի նորա Թա

գաւորեաց Նիկիֆօս . և զորդինն նորա պատուէր առ իւր զգուշութեամբ և պատուով :  
 Եւ սա այր սուրբ և առաքինի և գեղեցկատեսիլ, և 'ի պատերազմունս քաջ և յաղթող, և ողորմած յոյժ : Սորա ժողով արարեալ՝ եկն յաշխարհն Նիկիեցւոց 'ի վերայ զօրացն Տաճկաց . և էառ զմայրաքաղաքն Տարսոն, զՄտանա, և զՍիս, և զՆաւարղայ . և կոտորեաց զզօրնն մինչև 'ի դուռն մեծին Մետիոքու . և դարձաւ մեծաւ յաղթութեամբ 'ի Կոստանդնուպօլիս :

Իսկ 'ի Թուինն ՆՃԳ ժողովեցան զօրքն ՆՃԳ հայոց 'ի գաւառն Տարօն . և հարեալ կոտորեցին զզօրնն Տաճկաց, և ըմբռնեցին զբազում իշխանս, և յայնմ հետէ աղատեցին զգաւառն զայն՝ յիշխանութենէ աղտեղի ազգին Սահմետի :

Եւ զայսու ժամանակաւ գնաց վարդապետն հայոց Ղևոնդ 'ի Կոստանդնուպօլիս, և խօսեալ ընդ վարդապետն Յունաց, անպարտելի երևեալ 'ի մէջ նոցա, և ընկալեալ պարգևս 'ի Թագաւորէն՝ դարձաւ յաշխարհն հայոց : Սա Թարգմանեաց զպատմութիւն մատին սուրբ առաքելոյն Պետրոսի, որ բերաւ 'ի հայս :

Յայնմ ժամանակի մատեան առ Թագաւորն Նիկիֆօս աղտեղի կրտերն, և չարախօս եղէն առ նա վասն հայոց, եթէ հայք ոչ ունին զուղ-

ղափառ հաւատս, և ոչ կատարեն զօր ծննդեանն  
 Վրիստոսի, և ոչ զտօնախմբութիւն սրբոց :  
 Եւ թագաւորն թէպէտ և յոյժ սիրէր զՊապիկ,  
 այլ պատրեալ 'ի չարասէր և յանմարդի դասուցն՝  
 ցաննոյր . և զօրու ծանու յարուցեալ գնայր  
 յաշխարհն Հայոց՝ ջնջել առ հասարակ զՀայաս-  
 տան զազգս : Օ՞որ լուեալ Պապկայ՝ հիացեալ  
 զարմանայր յոյժ, եթէ զի՛նչո՞ւ այսպիսի քրիստո-  
 նեայ արքայ գայ խրոխտալով և բարկութեամբ 'ի  
 վերայ եկեղեցւոյն Վրիստոսի : Եւստի հրամայէր  
 և նա ժողովել զզօրան Հայոց 'ի պատրաստութիւն  
 պատերազմին : Եւ թագաւորն Վիկիֆօն զօրօք  
 ելանէր յարևելս . և մինչ հասանէր 'ի քաղա-  
 քն Ռիւթանացոց Վիկիա, հայրապետ քաղաքին  
 հարցանէր զպատճառս գնալոյն . և արքայն պատ-  
 մէր զպատճառսն կարգաւ . և սուրբ հայրապետն  
 ծանուցանէր թագաւորին զուղղափառ հաւատս  
 Հայաստանեայց եկեղեցւոյ՝ զոր ունին անթերի  
 առ սուրբ Երրորդութիւնն և մի Եւտուածունն,  
 և առ Վրիստոսի մարդեղութիւնն : Օ՞որ ծա-  
 նուցեալ թագաւորին ճշմարտութեամբ, և տե-  
 ղեկացեալ 'ի սուրբ հայրապետէն յաղագս քա-  
 ջութեան Պապկայ և զօրացն Հայոց, և որպէս  
 'ի քնոյ զարթուցեալ 'ի զուր ցասմանէն՝ դոհա-  
 նայր զՏեառնէ, որ խափանեաց զանիրաւ պատե-

րազմն : Այլ հրամայէր հայրապետն գրել առ Պա-  
զիկ զսրատճառս գալստեանն . և առնէր սէր և  
միաբանութիւն 'ի մէջ երկուց թագաւորացն ,  
զոր և արալն իսկ . և դարձան յիւրաքանչիւր  
սեղիս :

Իսկ 'ի թուին Հայոց նժը խորհեցաւ կինն 'ՆՅԸ .  
'Նիկիֆորայ խորհուրդ չար . և զայր ոմն մնա-  
հապարտ՝ որ յաքսորս էր 'ի կղզւոջ միում՝  
Յովհաննէս անուն Չմչկիկ , գաղտ առաքեալ  
հանէր՝ որպէս թէ հրամանաւ թագաւորին . և  
եբէր 'ի Կոստանդնուպօլիս՝ առանց գիտելոյ  
թագաւորին . և 'ի ծածուկ առնէր ընդ նմա  
խորհուրդ սպանանելոյ զթագաւորն . և խոստա-  
ցաւ լինել նմա կին , և նստուցանել զնա յաթու-  
թագաւորուէ : Օ որ յանձն առեալ 'Չմչկիկն՝  
հաւանեցաւ առնել զկամս անօրէն թագուհոյն :  
Այլ զայս առնէր չարարուեստ կինն յաղագս վաւա-  
շտ իւրոյ ցանկութեանն . քանզի թագաւորն ողջա-  
խոհ էր և պարկեշտ 'ի մարմնական ցանկութիս ,  
և ոչ կատարէր զանասման յուզումն իւրոյ չար  
ցանկութեանն անխափան : Իսկ թագաւորն ունէր  
սովորութիւն , զի 'ի խաղաղական ժամու հան-  
գըստեան երեկոյին մտանէր 'ի սենեակն օթանոցի  
իւրոյ առանձինն , և ընթեռնոյր զգիրս Լստուա-  
ծաշունչս . և ապա յարուցեալ առնէր զսովորական

աղօթս իւր, և տարածեալ յանկողնի ննջէր: Իսկ  
 կինն աղտեղի յերեկոյին՝ մինչ ընթեռնոյր թա-  
 գաւորն զգիրսն՝ եկեալ նստէր մերձ, և շաղա-  
 պատէր զթագաւորաւն. և առեալ զսուսեր թա-  
 գաւորին՝ կապէր փոկօքն պնդագոյն անելանելի,  
 և ելանէր արտաքս առ խորհրդակիցսն իւր: Եւ  
 եկեալ Սմչկիկ ծածկաբար՝ վազեաց 'ի ներքս  
 'ի սենեակն՝ ուր էր թագաւորն. զոր տեսեալ  
 թագաւորին՝ զարմնացաւ, և ասէ « շնն կատաղի,  
 զինչ ուզես աստ » . և առեալ 'ի ձեռն զսու-  
 սերն՝ ոչ կարաց հանել: Յայնժամ Սմչկիկն  
 դազանաբար յարձակեալ՝ խողխողեաց սրով զմար-  
 մին սուրբ թագաւորին, որ ունէր այծազգեստ 'ի  
 վերայ մարմնոյն՝ ներքև թագաւորական ծիրա-  
 նեացն. և այնպէս աւանդեաց զհոգին թաթաւեալ  
 յարեան: Օ որ տարեալ թաղեցին արժանաւո-  
 րապէս պատուով և մեծաւ ողբովք 'ի սուրբ տե-  
 ղոցն:

Եւ նստաւ թագաւոր անարժանն Սմչկիկ,  
 և հնազանդեցոյց զամենայն աշխարհն Յունաց:  
 Իսկ զորդիս Ռամանոսին փախոյց յանօրէն թա-  
 գուհւոյն 'ի Սասկաւան 'ի Հանձիթ գաւառին,  
 զի մի մահացու դեղօք սպանցէ զնս: Բայց վսնի-  
 րաւ մահուան Սիկիֆօւայ 'ի մեծ արտմնութիւն էր  
 թագաւորն Սմչկիկ զամ աւուրս կենաց իւրոց:

Իսկ յորժամ եղև Թուականն նի, մեռաներ  
 արքայն հայոց Պապիկ խաղաղական մահուամբ :  
 Եւ եղև հակառակութիւն 'ի մէջ որդւոց  
 իւրոց Յովանիսի և Լճոտոյ . քանզի Յովանէս  
 աւագ էր, և էր այր իմաստուն, այլ տարտամ և  
 հեղձ գոլով, և Թուլամօրթ 'ի պատերազմննս  
 և անկիրթ. իսկ Լճոտ՝ այր քաջ էր, անպարտելի  
 և յաղթօղ 'ի պատերազմննս : Իայց բռնակալեաց  
 Յովանէս զաթոռ Թագաւորութեանն : Իսկ  
 Լճոտ շրջէր զօրօք, և աւար հարկաներ զբազում  
 տեղիս, և նեղէր զքաղաքն Լճի . և գնացեալ  
 առ Սենեքերիմ արքայն Սասպուրականի՝ որ էր  
 երկրորդ Լպուսահլին որդւոյ Պապկայ՝ Լճրծրու  
 նի ազգաւ, և առեալ զօրս 'ի նմանէ՝ անցաներ 'ի  
 լեառն Սարագ . և մտեալ 'ի վանս սրբոյ Սշանին՝  
 երկրպագէր սուրբ խաչին և պատկերի սուրբ  
 Լստուածածնին . և տայր պարգևս բազումս յոսկ  
 ւոյն Լճրբացւոց . և արար զայն պահարան սրբն,  
 զոր պարգևեալ էր նմա արքայն Իաբէլացւոց .  
 և զայր հասաներ զօրօք բազմօք 'ի քաղաքն Լճի :  
 Օր լուեալ Յովանէս՝ հաներ զզօրսն իւր 'ի  
 պատերազմ ընդդէմ նորա . և ինքն նստեր 'ի գա  
 հոյսն, որպէս և էր անհմուտ 'ի պատերազմի . և  
 դղրդեալ քաղաքն ելանէին 'ի դէմ Լճոտոյ 'ի  
 պատերազմն :

Իսկ ոմն իշխանն 'ի Թագաւորէն Սլրաց եկել  
 դեսպան առ Յովանէս . և յաւուր յայնմիկ  
 անդ էր , և խոստանայր Թագաւորին և ասէր .  
 » Թագաւոր հրամայեա՛ զի ցուցցեն ինձ զԱշոտ  
 և ես առեալ ձեռամբ ածից զնա առաջի քո » :  
 Եւ զայս ասէր այրն յաղագս քաջութեան անձին  
 իւրոյ . զի էր այր պատերազմող : Եւ ասէր Թա-  
 գաւորն . » մի արհամարհեր զկորիւնն առիւծու ,  
 մինչև տեսցես » : Եւ յորժամ ելին ճակատ առ  
 ճակատ , իշխանն Սլրաց ձայն բարձեալ լնդրէր  
 զԱշոտ . և լուեալ Աշոտոյ և զայրացեալ , ընթա-  
 ցան առ իրեարս . և հարկանէր Աշոտ զնա սուսե-  
 րաւն 'ի վերայ սաղաւարտին , և հերձել ընդ մէջ  
 յերկիր ընկենոյր . և եղև սաստիկ պատերազմն :  
 Եւ պարտեալ զօրք Թագաւորին՝ եղէն փախստա-  
 կան . և Աշոտ զինի նեղէր , և ոչ ետ նոցա անկանել  
 'ի քաղաքն , այլ ելից զամենեսին 'ի գետն :

Ապա խորհեցան Պաշաւունիքն և Ռազրատու-  
 նիքն առնել խաղաղութիւն 'ի մէջ երկուց եղ-  
 բարցն : Յայնժամ սուրբ հայրապետն Մանսիա և  
 իշխանք քաղաքին ելին առ Աշոտ . արարին խաղա-  
 զութիւն այսպէս . զի լիցի Աշոտ Թագաւոր Պարուց  
 աշխարհին , և Յովանէս նոցի յԱնի . և եթէ  
 յառաջագոյն մահ հասցէ Յովանիսի , Աշոտ լիցի  
 Թագաւոր ամենայն հայոց : Եւ հաւանեալ Ա-

շոտ, յայնժամ նստաւ Լ՛բաս 'ի կարս Թաղա-  
ւորական իշխանութեամբ հրամանաւ Յովանիսի  
և Լ՛շոտոյ, և Ղարգի՛ յաշխարհն Լ՛ղուանից .  
զի էին յազգէ Թաղաւորաց . և կային 'ի հնա-  
զանդութիւն երկուց Թաղաւորացն Յովանիսի և  
Լ՛շոտոյ . և Լ՛շոտ ոչ ժամանեաց մտանել յԼ՛նի  
զամենայն աւուրս կենաց իւրոց :

Իսկ իշխան ոմն Լ՛պիրատ անուն, որդի Հասա-  
նայ, վասն մտերմութեանն զոր ունէր առ Լ՛շոտ՝  
երկեաւ գնալ առ Յովանէս . փախեաւ գնաց առ  
Լ՛պուսահլ Պարսից զօրավարն երկոտասան հազար  
հեծելով . և նա զառաջինն պատուով ընկալաւ  
զնա . ապա 'ի սարբելոյ իւրոց իշխանացն և  
յերկեղէ քաջութեան կասկածեալ՝ կորուսանէ  
զԼ՛պիրատն գաղտնի 'ի զօրաց իւրոց . և իշխանն  
Սաբի առեալ զկինն և զորդինն Լ՛պիրատին ,  
գայր մեծ սգով յԼ՛նի առ Յովանէս . և Յովա-  
նէս յոյժ ապաշաւեաց զանիրաւ մահ նորա . և  
տայ որդւոցն նորա և ամենայն զօրացն գաւառս  
և իշխանութիւնս :

Օ՛այսու ժամանակաւ զօրապետն Պեւմնաց  
բազում զօրօք հասանէր 'ի գաւառն Հայոց յամուրն  
Ի՛ջնի: Ա՛ստակ Պալհաւունի սպարապետն Հայոց՝  
տէր Ի՛ջնոյ՝ որդւով իւրով Ղարիգորիւ և այլ փա-  
ռաւորագոյն ազատօքն բազմեալ կայր 'ի գահոյն,

և ուրախացեալ 'ի գինարբուս՝ հայեր ընդ ճա-  
 նապարհ լերինն . և ահա գայր ոմն Թէզ : Օ՞ որ  
 տեսեալ Սասակայ՝ ասէ . խապրբեր է այրն այն :  
 Եւ հասանէր այրն 'ի դուռն բերդին , և մեծաւ  
 աղաղակաւ ասէր . գերեցաւ ամենայն դաւառս :  
 Յայնժամ յարուցեալ քաջն Սասակ , յանձն  
 առնէր զտուն իւր և զամրոցն՝ Գրիգորի որդւոյ  
 իւրոյ . և հաղորդեալ 'ի կենարար մարմնոյ և  
 արեանն Քրիստոսի , հագնէր զբեհս և վառէր  
 զինու 'ի կուի՝ հանդերձ ազատօք՝ որ մերձ պա-  
 տասեցան . և ոչ ժողովեաց զչորսն իւր բովանդակ .  
 զի ունէր արս իբրև հինգ հազար : Եւ առեալ  
 զՓիլիպէ , և զԳորգ Չորտուանելն ; և զքաջն  
 Սեհրան , կազմեցան 'ի պատերազմ հարիւր  
 զօրօք միայն . և ելին գնացին դէմ այլազգեացն ,  
 և պատասեցան բազում զօրաց , որք 'ի գեղ մի  
 փախուցեալ էին՝ և լցեալ յեկեղեցին . և շուրջ  
 առեալ կոտորէին իբրև զգառինս : Յայնժամ  
 քաջն Սասակ գոչեաց զէտ առիւծ , և յար-  
 ձակեցաւ 'ի վերայ այլազգեացն . և կոտորեցին  
 'ի նոցանէ իբրև երեք հազար . և որք զերծան՝  
 գնացին փախստական 'ի բանակն իւրեանց . և շար-  
 ժեալ բանակն ամենայն դայ 'ի վերայ քրիստո-  
 նէիցն : Իսկ նոցա զմահ յանձն առեալ՝ անկան  
 'ի մէջ նոցա և հերձեալ զբանակն յայս կոյս և

յայն կոյս՝ արարին զարմննալի կոտորուածս :

Իսկ 'ի զօրաց այլազգեացն ելանէր այր մի ահաւոր սե խափշիկ • զոր յաղագս քաջութիւն եօթն գայլ անուանէին • և 'ի ձայն բարձր աղաղակէր և ուզէր զՍասակ, և գայր սե ըւրմբովն դէմ Սասակայ • և Սասակ յառաջ երեկ՝ Թրովն եզարկ զնա 'ի վերայ գլխոյն • որ յերկուս հերձաւ և անկաւ յերկիր • մոլորեցան 'ի միմեանց զօրքն Սասակայ • և 'ի բազմութենէ զօրաց այլազգեացն ոչ գտանէին զմիմեանս : Յայնմ աւուրն քաջն Սեհրան սպանաւ 'ի պատերազմին • և Սասակ պատուէր զզօրսն բանակին , և ելեալ դառնայր յետս • և զատեալ 'ի Թշնամեացն՝ հանգիտ խնդրէր • զի յոյժ ձանձրացեալ էր 'ի պատերազմին • և հասեալ 'ի քարանձաւ ինչ ննջէր : Իսկ այր ոմն եկեալ գտանէր զնա , և գիտաց թէ 'ի Թշնամեացն է • և ուժով բախեալ ընկէց և ձգեաց զնա 'ի վերուստ 'ի վայր • և այնպէս կատարեցաւ քաջ զօրականն Քրիստոսի :

Իսկ 'ի Թուին նիա զօրավարն Յունաց Պեւտակոսն խաղացեալ բազում զօրօք գայր 'ի վերայ քաղաքին Սելտինոյ • և շատ ներդելով սովով և ծարաւով՝ հաւանեցոյց զնա • և ելեալ գայ 'ի վերայ քաղաքին Տեգրանակերտի , որ կոչի Միթ • և զօրքն Տաճկաց ելեալ ընդդէմ նորա

ՆԻԱ

'ի պատերազմ, եղև խիստ կոտորուած 'ի դուռն քաղաքին . և պարտեալ զօրքն Տաճկաց՝ դարձան 'ի փախուստ , և մտին 'ի քաղաքն . և զօրքն Յունաց մեծաւ յաղթուեամբ դարձան , և ելին բանակեցան առ ավին դետոյն՝ որ կոչի Մուսլ :

Յետ սակաւ աւուրց եղև Մսուուածասաստ բարկութիւն յերկնից , և շնչեաց հողմն սաստիկ . մինչ զի մթացաւ 'ի մէջ աւուրն . և խաւարեցան աչք 'ի տեսանելոյ . զի կահն և կարասի զօրացն 'ի բռնութենէ հողմոյն 'ի գետ անդր լցեալ լինէր : Օ, որ տեսեալ անօրինացն դիմեցին 'ի վերայ նոցա , և կոտորեցին անխնայ . և կալան զՎեմեսկլոսն , և իշխանս քառասուն . և սակաւք էին՝ որք զերծան 'ի քրիստոնէիցն :

Մպա 'ի միտս եկեալ իշխանք այլազգեացն վասն մեծ վնասուն՝ որ եղև 'ի զօրս քրիստոնէից , և զարհուրեալք երկեան յահէն՝ Սիկիֆօուայ արքային , զի դեռ չէր տարածեալ համբաւ սպանման նորա . և խորհեցան երդմամբ սիրով արձակել : Մինչ դեռ յայս խորհուրդս էին , եհաս համբաւ սպանման Սիկիֆօուայ . և անհոգ եղեալ՝ խընդացին յոյժ , և տարան զիշխանսն կապած 'ի Պաղտատ առ խալիֆայն . և ամենեքեան անդ մեռան :

Իսկ Վեմեսկլոսն գրեաց առ Չմչկիկն անէծսցաւագինս այսպէս . թէ » մեք զարիւն մեր

հեղաք 'ի դուրս Տեղբանակերտի . և մարմինք  
մեր չեղեն արժանի գերեզմանի օրհնելոյ . արդ  
զարիւն մեր 'ի քէնէ ուզէ Մտուած յօրն դա  
տաստանի , [Թէ ոչ առցես զվրէժ արեան մեր  
յազգէն Մահմետի] : Իբրև լուաւ զայս Չմշկիկ ,  
շարժեցաւ 'ի բարկութիւն , և ժողովեաց զամ'  
զօրան Յունաց , և էառ օգնականս 'ի Ֆուանկոյն .  
և կամեցաւ նա յառաջ հայոց տիրել . և երեկ  
բնակեցաւ 'ի Ախլիկայս . և ծածկեաց զօրօք զսահ  
մանս Տարսոնի . և ելաւ համբաւ գալոյ նորս  
յաշխարհն հայոց :

Յայնժամ ժողովեցան առ արքայն հայոց  
Ղշոտ՝ կապանին թագաւորն Փիլիպէ , և թագա  
ւորն Մղուանիցն Գեորգի , և Մբաս կարուց  
տէրն , և Սենեքերիմ՝ Ասպուրականի տէրն , և  
Գորգէն Մնձեաց տէրն , և ամէն տունն հայոց՝ և  
զօրքն արքունի , զոր էառ քաջ արքայն Ղշոտ . և  
բնակէր ամենայն քաջօքն 'ի հարբ գաւառին , որոյ  
թիւ համարացն էր հեծելոցն երեք հարիւր հազար  
և վեց հարիւր , յորժամ 'ի գիր առին զօրս  
գլուխքն : Եւ երեկ դեսպան թագաւորին Չմշկայ  
առ թագաւորն Ղշոտ . և տեսաւ զայն մեծ պատ  
լաստութիւն պատերազմի և գնաց պատմեաց թա  
գաւորին : Մուաքեաց դեսպան թագաւորն Ղշոտ  
առ արքայն Չմշկիկ զհետ դեսպաներոյն Յունաց ,

եպիսկոպոսք և վարդապետք . և արարին սէր ընդ  
երկուց թագաւորաց :

Եւ ելաւ Չմշկիկն Յովհաննէս 'ի Արիւիկոյ , և  
եհաս 'ի դաւառն Տարօն շատ բազմութեամբ  
եկն և թագաւորն Մշոտ շատ զօրօք ընդ առաջ  
նորա . և դիպեցան իրերաց ողջունիւ և սիրով .  
և երեւո Մշոտ օգնութիւն նմա զօրս ութսուն  
հազար ձիաւորս , և հետեակ քսան հազար , և  
զօրագլուխ զքաջն Գորգի , և ապուրս և ոռձիկս  
բազումն . և զեպիսկոպոս տէր Սարգիս , և  
զվարդապետ Ղևոնդ , և զիշխան Եւանէ . առա  
քէ զնոսա . և ինքն դարձաւ յաշխարհս իւր :

Եւ կայսրն Չմշկիկ գնաց 'ի կուիւ 'ի վերայ  
զօրաց Տաճկացն , և արեամբ նոցա ներկեաց զեր  
կիր , և շատ բերդս և քաղաքս 'ի հիմանէ շրջեաց .  
երեք հարիւր քաղաք հնազանդեցոյց մինչ 'ի  
դուռն Րաբելոնի՝ որ կոչի Պաղտատ . կոտորեաց  
զզօրսն Խալիֆային , և խլեաց 'ի յիւրմէ հարիւր  
հազար ձի և ջորի . և դարձաւ 'ի վերայ Մթայ :  
Եւ տէրն Մթայ կին էր և քոյր Համոյ Մմի  
րին Տաճկաց : Ելաւ կինն 'ի վերայ պարսպին ,  
աղաղակէր և ասէր . թէ 'ի վերայ կնոջ գաս կուիւ ,  
ով Չմշկիկ , և Համարիս քեզ նախատինք :  
Եւ թագաւորն ասաց երդուեալ եմ քակել  
զպարիսպ քաղաքիդ : Եւ ասէ կինն . քակէ զկան

դարայն նորա 'ի վերայ Պագլաթ գետոյ, և կատարէ  
 այնուլ զերդումն քո: Եւ արար այնպէս և գնաց:  
 Եւ ասէին թէ յառաջ թագաւորն շողաշարեալ  
 էր մեղօք. քանզի Չմշկիկն այն 'ի խոզնայ էր  
 'ի Չմշկածակուցն. նոյնպէս և կինն այլ անտի  
 էր: Ամէր և զԱւուհա քակել. և վասն շատ վա-  
 ներոյն խնայեաց և եթող, և գնաց զներքին կող-  
 մամբ երկրի: Վնաց Արուսաղէմ, և ազատեաց  
 զամենայն քրիստոնէայքն 'ի ծառայութենէ անօրի-  
 նաց: Եւ դարձեալ գայ 'ի Աիլիկիա, և առաքէ զիշ-  
 խանն Հայոց և զգօրսն և զեպիսկոպոս բազում զօ-  
 րօք և պարգևօք առ թագաւորն Լշտ, և պար-  
 գես թագաւորին շատ գանձս՝ ոսկի և արծաթ,  
 և գիր այսպէս.

»Լշտոյ արքայի Հայոց մեծաց. հոգևոր որ-  
 դւոյ իմոյ 'ի Տէր խնդալ:

Մանիցէ իմաստութիւնդ քո, թէ որչափ եղև  
 ողորմութիւն Լստուծոյ 'ի վերայ մեր, և ետ մեզ  
 յաղթութիւն 'ի վերայ թշնամեացն մերոց. զի  
 ոչ կարացին կալ 'ի դիմի մեր: Ասան որոյ մնշե-  
 ցաք 'ի սուր սուսերի զգօրսն Տաճկաց, և զմնա-  
 ցուածս արարաք հարկատու մեզ. և բազում  
 աւարաւ և գերութեամբ նոցա դարձաք 'ի ներքին  
 կողմն աշխարհին, և հանաք զնշխարս սուրբ Յա-  
 կոբոյ 'ի Սժբին քաղաքէ և տարաք զհետ մեր:

Ալ եկաք զներքին կողմամբքս մեր, ջնջեցաք իս  
 պառ զԹշնամիս մեր. և յետ այնր դարձաք և  
 ձմերեցաք 'ի դուրս, և տուաք զօրաց մերոց  
 հռոք. և ապա եկաք 'ի մեծն Անտաք, առաք զնս  
 և գերեցաք զամէն աւարս նորա շուրջնակի.  
 հասաք 'ի Համն և 'ի Համն. և հարկատուք մեր  
 հնազանդութեամբ ընկալան զմեզ: Ղանացաք 'ի  
 յանառիկն Հալապ. և ելան պատերազմ դէմ  
 մեր. և կոտորեցին զնոսա զօրքն մեր, և շատ  
 գանձ ոսկի և արծաթ և աղջկունս խլեցին 'ի  
 նոցանէ: Աոյնպէս արարին Օւնաստօլիքն: Ղանա  
 ցաք 'ի Վաշխ, և կամեցաք պաշարել զնս. խնկ  
 քաղաքապետն՝ այր իմնստուն և ալեոր, ել բա  
 զում ծախօք և եկն յառաջ մեզ. և աղաչեաց  
 լինել հարկատու մեզ. առին 'ի մէնջ զօրավար,  
 և տուին մեզ գիր ծառայութեան: Ղանացաք և  
 'ի Տիբերա, ուր Տերն մեր շրջեալ առնէր զՄու  
 տուածային սքանչելիսն և զնշանս. և նոքա այլ  
 բերին մեզ գանձս շատ. և առին 'ի մէնջ զօրա  
 վար, և տուին մեզ գիր ծառայութեան: Ղանա  
 ցաք 'ի Ազարեթ, ուր սուրբ կոյսն Սարիամ  
 զաւետիքն ընկալաւ 'ի հրեշտակէն: Ալաք 'ի  
 լեառն Թաբօր, ուր Տերն մեր այլակերպեցաւ,  
 և երկիր պագաք: Ալ ահն մինչդեռ անդ էաք,  
 եկին առ մեզ յԱւամէ և յԱրուսաղէմէ, շատ

անլաճեցին տալ մեզ հարկս, և առնուլ 'ի մէնջ  
 զօրավարս: Ամեցաք զուրբ գերեզմանն ազա-  
 տել 'ի ծառայութենէ Տաճկաց. և սարեցաք բա-  
 զում հեծեալս, և զօրավար յամենայն դաւառան.  
 և եղին մեզ հարկատուք: Առաք զԱբբայ և զՏրա-  
 սոլիս, և զամենայն բերդս և զքաղաքս ծովեզե-  
 րովն. և զՂեպէն և զՀեսուն և զՊուրզաւ,  
 և դրաք յամէնն հեծեալս. և շահեցաք 'ի Պա-  
 բաւոն զհողաթափն Քրիստոսի, և 'ի Ռերիտոն  
 զպատկերսն Քրիստոսի, զոր յետ ժամանակի  
 հրեայքն խաչեցին. և զհերս Յովաննու Ակրտ-  
 չի. և առաք տանիմք 'ի պահպանութիւն Աս-  
 տուածապահ քաղաքին մերոյ Արտանդինուսոլի:  
 Արդ լսելով զայս ամենայն՝ ուրախ լեր, և  
 փառս տուր Աստուծոյ, որ 'ի ձեռն մեր թագա-  
 ւորութեանս լայն և արձակ փառաւորի անունն  
 Քրիստոսի: Քանզի 'ի մեծէն Աեսարիոյ մինչև  
 'ի Պաղտատ հնազանդ արարաք ծովեզերովն 'ի  
 ներքև մեր հրամանացս. ընդ որում գոհութիւն  
 տացուք Աստուծոյ մերոյ»: Վրեաց և 'ի Պո-  
 թոսպաթարն, և 'ի Տարօնոյ զօրավարն. զի տար-  
 ցեն առ թագաւորն հայոց Աշոտ զԱլուսաֆուլն,  
 և դեկան ոսկի երեսուն հազար. և ծառայս երկու  
 հազար, ձի տասն հազար, և ջորի հազար վասն  
 սիրոյն և միաբանութեանն՝ զոր արար ընդ նմն:

Գրեաց Մշոտ և առ վարդապետն Պանտալեոն  
 և առ Սպաթարն՝ զի արագ արագ 'ի Առստան  
 դնուպօլիս երթիցեն շատ եպիսկոպոսօք՝ մեծ տօն  
 կատարել Քրիստոսի պատկերին և հողաթափացն,  
 և հերացն Յովաննու . և զի խօսեսցին ընդ վար  
 դապետսն Յունաց առաջի արքային . զոր և առա  
 քեաց հայրապետն անդանդաղ : Գնացին՝ և մեծաւ  
 պատուով և ընծայիւք դարձան 'ի Շիրակ :

Արդ յետ այսր անկանէր ահ 'ի սիրտ թաղա  
 ւորին, և երկիւղ մահու, և ահ դատաւորին Մս  
 տուծոյ վասն անիրաւ սպանմանն՝ Սիկիֆօսայ : Այլ  
 յետ հինգ ամի թագաւորութեան իւրոյ, առաքեաց  
 և եբեր զորդիսն Ռամանոսի . և մեծաւ ժողովով  
 եղ զթագն 'ի գլուխ Սասլին և երկիր եպագ  
 նմա . և ինքն գնաց՝ կրօնաւոր եղաւ 'ի յապաշխա  
 րել զմեղս անձին իւրոյ :

ՆԻԴ.

Ի թուին նիդ եղև կոտորուած 'ի զօրացն  
 հայոց 'ի գաւառն Մնձևացեաց՝ նենգութեամբ  
 Մպլղարիպայ, որ էր զօրապետ թագաւորին  
 Մնձևացեաց Պերենկայ . և նա ձգեալ էր զնա 'ի  
 պատուոյ ստրատելատութեանն, և դրեալ 'ի տեղի  
 նորա զոմն Սարգիս, ընդ որում վիրաւորեալ  
 էր Մպլղարիպն . զի էր այր քաջ և պատերազ  
 մող : Այլ այսր աղազաւ բանատու լինէր այլազ  
 գեացն և ասէր՝ թէ ես ոչ կուռիմ ընդ ձեզ .

ձեզ նշան այն, որ իմ վրանն կարմիր է 'ի վերայ  
բլրին : Իսկ Թագաւորն ազատօքն նստեալ էր  
անհոգ 'ի գինարբուսն մեծ ուրախութեամբ : Աւ  
յանկասկած եկին 'ի գիշերի զօրք այլազգեացն 'ի  
վերայ նորա, և արարին մեծ կոտորուած, և բռն  
նեցին զԹագաւորն՝ տարան գերի 'ի Հեր . և 'ի  
սահմանք վրանի Մպլղարիպին չիչխեցին անցա  
նել : Ի յայն օրն Արագ, և ամենայն վա  
նորեայքն անէծս ցաւազինս դրին 'ի վերայ Մպլղ  
ղարիպին . և որոշեցին զնա 'ի քրիստոնէական  
հաւատոյն :

Իսկ Մպլղարիպն եկեալ 'ի միտս՝ լայր դառնա  
պէս, և ապաշաւէր զկորուստ ծառայիցն Մստուծոյ .  
ապա քննէր վասն Թագաւորին՝ Թէ յորձմբ բան  
դի է արգելած : Իբրև իմացաւ՝ Թէ Մմիրայն  
Մպլհաճապ արձակեաց զնա, և յամենայն ժամ  
հանէ զնա 'ի խաղ գնդին, յոյժ ուրախ եղև . և  
յղարկեաց առ Թագաւորն գաղտ . Թէ 'ի յայս նիշ  
ժամու զօրօք իմնվք կամ յայս անուն տեղոջ 'ի  
մէջ անտառախիտ ծառոցն . դու զգոյշ լիւր, և այն  
օրն ձի սուր հեծիւր և ել շտապելով առ իս հասիր .  
և այլ մի հոգաս : Օ որ և արարն իսկ . սա  
րեց ձի սրընթաց, և նովաւ (եւ) 'ի խաղն . և  
առեալ զգունդն՝ տանէր հեռագոյն . և Թողեալ  
գնայր առ Մպլղարիպն՝ յուսալով յՄստուած :

Ալ տեսեալ Միւրայն՝ յարձակեցաւ զօրօք զկնի  
 մեծաւ զարմնցմամբ . և Թադաւորն քաջապէս  
 հասանէր առ Մալղարիպն : Ալ 'ի զօրաց անօրի  
 նացն խափշիկ մի՝ այր հզօր՝ դիմեաց 'ի Մալղար  
 րիպն . և նա եհար զնա սուսերաւն . և պատա  
 ուեաց զնա մինչև յերանսն, զոր տեսեալ անօրի  
 նացն փախեան . և Մալղարիպն զօրօք վարէր 'ի  
 հետ զՄիւրայն մինչ 'ի դուռն քաղաքին . և քա  
 ջապէս եղարկ պողպատկովն զերկաթէ դուռն .  
 և պատառեալ զերկաթն՝ 'ի Թափ անցուցանէր .  
 որ անքակտելի մնաց շատ ժամանակ : Ալ այնպիսի  
 քաջութեամբ դարձաւ և եբեր զԹագն 'ի տեղի  
 իւր՝ ազատեալ 'ի ծառայութենէ . և օրհնեցաւ  
 'ի վանորէիցն և յամենայն բերանոյ : Ալ եղև  
 այս 'ի Ղուաշ գաւառին Հայոց , 'ի գեօղն որ  
 կոչի Ռակ՝ սահմանակից Սասպուրականի :

ԵԻԵ. Իսկ 'ի Թուին նիէ փոխեցաւ յաշխարհէ  
 սուրբ հայրապետն Մնանիա : Ալ հրամանաւ  
 սուրբ Թադաւորացն Յովանիսի և Մշոտոյ ձեռ  
 նադրեցաւ 'ի տեղի նորա Սահան, այր սուրբ և  
 առաքինի : Հայս ժամանակս իշխան մի Սիկլաուոս  
 անուռն . մուտեալ 'ի Սասէն Յունաց արքա  
 յէն՝ ժողովեաց առ ինքն շատ 'ի զօրաց անի  
 րաւաց , և շատ վնաս առնէր յաշխարհն Յունաց .  
 և դայր մտանէր յաշխարհն Հայոց . և առնէր

չատ կոտորուած յորոյ վերայ հասեալ զօրքն  
 Հայոց՝ քաջապէս յաղթեցին նմա, և փախուցին  
 զհեծեալս նորա. և ինքն փախեալ գնաց 'ի Պաղ-  
 տատ. և յետ երեք տարւոյ դարձաւ յաշխարհն  
 Յունաց. և անդ սատակեցաւ :

Ի Թուին նշք մեռաւ սուրբ հայրապետն 'ՆԼԻ.  
 Սահան. և դրին 'ի տեղի նորա զՍտեփանոս՝  
 այր բարի՝ հրամանաւ Թագաւորացն :

Յայս ժամանակս անօրէն ամիրայն՝ Սամվոն  
 գայր ահագին զօրօք 'ի վերայ աշխարհին Հայոց  
 և աւերէր՝ այրելով և գերելով զաշխարհն և  
 զհեկեղեցիսն, և հասանէր յաշխարհն կուրապա-  
 ղատին Պաւթի 'ի գաւառն Ապահունեաց :  
 Աւ յղէ առ Պաւթի բանս ամբարտաւանս, և  
 ասէ՝ տո՛ւր ինձ մնալ տասն տարւոյ, և զորդիսն  
 քո գրէ՛ ծառայ ինձ. ահա՛ գամ 'ի վերայ քո. և  
 ո՞վ է Աստուած՝ որ փրկէ զքեզ 'ի ձեռաց իմոց :  
 Առեալ զայս Պաւթի՝ ժողովեաց զօրք 'ի  
 Արաց և 'ի Հայոց, և բանակ հանէր յանուն  
 Տեառն, և գնայր ընդ առաջ անօրինին, և զվա-  
 նորայնս յաղօթս և 'ի պաղատանս յորդօրէր. և  
 իջեալ զօրօք 'ի սահմանս Ապահունեաց՝ կայր  
 յաղօթս առ Աստուած. և զՎրամրակէն զայր  
 քաջ եօթն հարիւր հեծելով դնէր պահապան  
 գիշերոյս : Աւ յառաւօտունս պահուն գայր ոմն 'ի

զօրաց Տաճկաց հազար մարդով . և 'ի գիշերի  
 Կամրակէն և նա հարան ընդ միմեանս : Սակաւ  
 մի յառաջ եկեալ էր ցօղ անձրևի, և յայնմ  
 ժամու պայծառացաւ լոյս լուսնին . և փայլին լե-  
 րինք և ամենայն ինչ 'ի տեսիլ երևեալ : Օյն  
 տեսեալ անօրինացն՝ կարծեցին, թէ բազմու  
 թիւն զօրաց քրիստոնէիցն է, և ահաբեկեալ փա-  
 խեան յետս . և Կամրակէն զհետ երթայր և կոտո-  
 ըէր . և կալաւ զկինն Սամընայ . և փութանակի ազդ-  
 առնէր 'Դաւթի, որ և հասանէր զօրօքն 'ի վերայ,  
 և սաստիկ առնէր կոտորուած . և Սամընն մա-  
 զապուրծ եղեալ՝ զնաց մեծաւ ամօթով :

Իսկ զինի ամաց ինչ անցանելոյ, արք անօրէնք  
 'ի տանէն 'Դաւթի խորհեցան սպանանել զ'Դա-  
 ւիթ՝ զայր սուրբ և Լստուածասէր . և գտին  
 օգնական չարեացն զանօրէն եպիսկոպոսն Իլա-  
 րիոն . և սա հանգոյն չարեացն Սրջմկայ գոր-  
 ծեալ՝ խառնեաց զդեղն մահու 'ի դեղն կենաց 'ի  
 սուրբ խորհուրդն փրկական, և ետ 'Դաւթի :  
 Պիտացեալ Լստուածասիրին՝ ոչ երկմտեաց .  
 և եղէն մեծ զարմանք . զի դեղն մահացու եղև  
 դեղ բժշկութեան, և ողջացոյց զցաւս անձին  
 իւրոյ : Իսկ անօրէն եպիսկոպոսն ոչ շատացաւ  
 այնու չարեօք . յաւուր միում մինչ ննջէր 'Դա-  
 ւիթ 'ի սենեկի իւրում, մտեալ առնոյր զբարձն

'ի անարուցն , և եղեալ 'ի վերայ բերանոյն՝  
անկեալ 'ի վերայ խեղդեաց զերանելին : Օր  
յետ սակաւ ինչ աւուրց ըմբռնեալ Աստին  
զանարժան եպիսկոպոսն և զչար զորժակիցսն  
իւր , կապէր քար 'ի պարանոց նոցա , և ձգէր 'ի  
խորան Ավկիանոսի :

Ի թուին նշգ մեռանէր տէր Ստեփանոս , ԳԼԴ .  
և ձեռնադրեաց յաթոռն իւր զտէր Սաչիկ , զի  
էր այր իմաստուն յոյժ :

Իսկ 'ի թուին նշէ եղև սաստիկ շարժ ընդ ԳԼԵ .  
ամենայն արարածս , և փլոյց զսուրբ Սոփի 'ի  
Կոստանդնուպօլիս :

Եւ 'ի սոյն ամի առաքէ Աստիլ կայսրն առ  
Լաւրիան Սանն Առլզարաց , և պատրեալ 'ի  
նոցանէ՝ յաղթեցաւ և ամծթալից դարձաւ յետս .  
և դարձեալ յետ երկուց ամաց եմնւտ 'ի Առլզ  
արս՝ առնուլ զվրէժ կոտորածին իւրոյ . և ոչ  
այլ ինչ կարաց առնել , բայց եթէ աւարաւ  
դարձաւ 'ի Կոստանդնուպօլիս :

Ի թուին դձիս մեռաւ տէր Սաչիկ . և ԳԼԵ .  
ձեռնադրեաց զտէր Սարգիս 'ի տեղի իւր :

Յայսմ ամի ելին 'ի Սորայ ազգ Լաւրացւոց  
'ի գաւառն Լնտիոքայ . և արարին բազում աւ  
ւերս . և զօրքն Յունաց ելին ընդդէմ նոցա 'ի  
պատերազմն . և յաղթեալ 'ի նոցանէ՝ եղեն փաւ

խտական . և Արաբացիքն կալան զիշխանս 'ի  
նոցանէ և տարան Աղգիպոսս :

Իսկ յետ երկուց ամաց ելաներ Տուկ մի Յու  
նաց բազում զօրօք յաշխարհն Հայոց . և սկսան  
կոտորել զհաւատացեալն Քրիստոսի իբրև  
զանօրէնս : Ալին ընդդէմ նոցա զօրքն Հայոց ,  
և մաշեցին զնոսա 'ի սուր սուսերի , և մնացեալքն  
ամթալից դարձան : Ալ 'ի սոյն ամի երևեցաւ  
աստղն գիսաւոր յերկինս :

Ն 15 թ .

Ի Թուին նխթ եղև սէր ընդ Ալասին  
և ընդ Աինիքերիմ արքայն : Ալ յայտ ամի վախ  
ճանեցաւ մարզպանն տէրն Արուստեաց խաղա  
ղութեամբ :

Ն Ժ .

Ի Թուին նճե դարձեալ եմուտ Ալասին 'ի  
Պուլղարս բազում զօրօք . և բազում ժամն  
նակս արար անդ մեծաւ պատերազմաւ :

Ինդ աւուրն ընդ այնոսիկ եղև խուժու  
թիւն մեծ 'ի Արստանդնուպօլիս . քանզի մոլորե  
ցան 'ի ճշմարիտ զատկէն , և արարին տօն գալըս  
տեան Տեառն : Այնպէս արարին Արուստաղէմ .  
և առ հայրապետութեան իւրեանց հակառակեալ  
բաժանեցան յամենայն ազգաց . և յայնմ զատկի  
ոչ վառեցաւ լոյն : Իսկ ազգն անօրինաց որ  
կային Արուստաղէմ իբրև տեսին զայնպիսի մո  
լորումն , յարձակեցան սրով յաղթարանսն և

կոտորեցին, մինչև լցաւ արեամբ յատակ տաճարին  
յարութեանն :

Իսկ Թադաւորն Սասիւ Հնազանդեցուցեալ  
զՊուլղարս՝ դարձաւ 'ի Կոստանդնուպօլիս . և  
իմացեալ զմոլորական զատիկն , հարցանէր ընդ  
իմաստունն Յունաց . և նոքա ստայօղ բանիւք  
հաւանեցուցանել կամէին . սկսան զԹադաւորն  
մոլորեցուցանել . զոր ծանեալ Թադաւորն գրէ  
'ի Հայս՝ առ արքայն Հայոց Յովանէս . զի վասն  
այս բանից Թէզ առաքէ զՅուսէփ Հայր Բնակ  
ացի . և զՊողեոն Յովհաննէս . բայց նոքա ոչ  
կամեցան անդ գնալ . այլ Թղթով ծանուցին  
զսրտձառն . որում ոչ հաւանեցան կլերիկոսքն  
Յունաց , վասն որոյ միւսանգամ գրէ առ կաթու  
ղիկոս տէր Սարգիս . և առ Թադաւորն Յովանէս  
վասն դմին իրի : Եւ նոքա առաքէն առ նա զվար  
դապետն Սամուէլ . ընդ որ յոյժ ուրախ եղև  
(Թադաւորն) . և կացուցանէ յատենի խօսել  
ընդ իմաստունն Յունաց . և նոքա յառաջ բերին  
զամենայն գրեալն տանն Յունաց , և ոչ կարացին  
ստել զնա 'ի ճշմարտութենէն : Եւ սկիզբն արար  
Սամուէլն յառաջին աւուր արարչութենէն , և  
կացուցանէր անողալ մինչ 'ի պատկեր վերջին  
աւուրն , և զամենայն պատձառս պատձենիցն՝ ըստ  
առաջին իմաստնոցն հաստատ կացուցանէր : Հա

Ճեցաւ արքայն ընդ բանս նորա . և ցըցուցին իմաստունքն Յունաց այր մի Ս, հուա 'ի Արարոս կղզի , յոյժ իմաստուն և հզօր 'ի գիտութիւն . զոր թագաւորն տարեալ 'ի Արտանդնուպօլիս , որոյ կացեալ յատենի՝ հաւանեցաւ վարդապետին Հայոց , և յոյժ գովեաց զիմաստութիւն նորա , և յամօթ արար զիմաստունս Յունաց : Ինդ որ սրտմտեալ թագաւորն՝ ընկեց զնոսա 'ի պատուոյ՝ և զվարդապետն Հայոց բազում պատուով դարձոյց յարևելս :

ՆԾԷ. Դարձեալ յաւուրս Աստին 'ի Թուին նճեկաւ ասող մի 'ի անսիւլ հրոյ . և եղև շարժ սատտիկ ընդ ամենայն երկիր : Օհետ այն բարկութեանն ցաւ անկանէր՝ որ անուանէր Արոյլիկ , և երևէր յայտնապէս 'ի մարմինն . և 'ի դառնութենէն ոչ ժամանէր (հիւանդն) հասանել հարդորութեան . այլ առ ժամայն խեղդէր ցաւն զմարդ և զանասուն . և բազումք մեռանէին :

ՆԿ. Ի Թուին նկ դարձեալ եմուտ Աստին 'ի Պուլղարս , և աւերեաց զաշխարհն արևմտեց . և մահադեղով զթագաւորն Ալօսխան Էհան 'ի կենաց . և զկին և զորդիս նորա էած 'ի գերուութիւն 'ի Արտանդնուպօլիս :

ՆԿԵ. Ի Թուին նկե եղև աստուածասատտ բարկութիւն 'ի վերայ քրիստոնէից : Այլ անթիւ

խուժադուժ ազգն՝ որ Մուղալ կոչի՝ ահագին  
 շատ . և մտան յաշխարհն Հայոց՝ ՚ի գաւառն  
 Սասաւուրականի , և սկսան անխնայ կոտորել  
 զհաւատացեալն ՚ի Քրիստոս : Հասաւ համբաւն  
 առ Սենեքերիմ : Յայնժամ առաքել Նա  
 զՊաւլոս զորդի իւր ամենայն զօրօք դէմ նոցա :  
 Հարան ընդ միմեանս ահաւոր կռուով . և  
 տեսին զնոսա աղեղնաւորս և հերարձակ իբրև  
 զկանայս . և սկսան նետելով խոցել զզօրս Հայոց .  
 վասն զի անպատրաստ էին դէմ նետից զօրքն  
 Հայոց : Իսկ Պաւլոս ՚ի յուժ իւր վստահա  
 ցեալ՝ ոչ կամէր դառնալ ՚ի պատերազմն .  
 և յորժամ դարձան յետս , սրտովցին Սենեքե  
 րիմայ զզանազան կերպարանաց այլազգեացն : Այ  
 նա յոյժ վիրաւորեալ՝ ոչ եկեր , և ոչ հարբ ,  
 այլ լայր և ապաշաւէր զաւերումն աշխարհին  
 Հայոց և զկորուստ քրիստոնէից : Յայնժամ խոր  
 հեցաւ տալ զաշխարհն հայրենեաց յարքայն  
 Յունաց Սասին , և առնուլ իւր զՍեաստ . և  
 վաղվաղակի գրէր առ Թագաւորն : Օ , որ լուեալ  
 Սասին՝ ուրախ եղև յոյժ . և տայ նմա զՍեաստ .  
 և տայր Սենեքերիմ զաշխարհն Սասաւուրականի  
 Թիմն բերդս երկոտասան . գեղս չորս հազար  
 և չորս հարիւր . վանորայս ոչ ետ . այլ պա  
 հեաց իւր աղօթարարս . և զայն ամենայն

ետ գրով 'ի Աստիւն . և հարիւր հնգետասան  
վանք այլ ետ . և առաքեաց առնուլ զորդին նոր  
Պաւլիթ Թագաւորական իշխանութեամբ . և  
և յղարկէր 'ի հետն որդիս ազատաց երեք հազար  
և զեպիսկոպոս . և բարձած ջորի գանձով երեք  
հարիւր . և պէսպէս սարութեամբ և տաճիկ ձեռ  
հազար : Եւ այսպէս փառօք մտաւ Պաւլիթ 'ի  
Սոստանդնուպօլիս . և դղրդեցաւ քաղաքն ընդ  
առաջ նորա և զարդարեցին զփողոցն և զղար  
պանն . և շատ գանձս ցանկին 'ի վերայն ընդ որ  
գնայր : Եւ խիտ ուրախացաւ Թագաւորն ընդ  
տեսին Պաւլիթի , և տարաւ 'ի սուրբ Սովի , և  
արար որդեգիր . և ամենայն իշխանքն խիտ  
մեծարէին զնա զէտ որդի Թագաւորի :

Եւ ելեալ Սենեքերիմ՝ ամենայն տամբ և  
ընտանեօք՝ եկն 'ի Սեաստ , և անդ տիրացաւ :

Կ.Ճ.

Պարձեալ 'ի Թուին դձհեւ Աստիւն յարեւ  
ելս անթիւ զօրօք , և խնդրեաց զԱնի և զՎարս  
և Յովանէս որդի Պապկայ խորհեցաւ տալ  
վասն Թուլութեան սրտի իւրոյ :

Իսկ Աստիւն գնաց յաշխարհն իւր . և գրեաց  
առ Պորդի Թագաւորն Սրաց գալ նմն 'ի հնա  
զանդութիւն , զոր ոչ առ յանձն : Յայնժամ  
գայ Աստիւն զօրօք 'ի վերայ նորա . և զօրքն  
Սրաց գնացին ընդդէմ նորա : Եւ Սեաստն և

Օ՛րոյսան՝ արք. քաջք՝ եղբարք Ս իսարտին՝ ուժ-  
գին քախէին զգօրսն Ս ասլին . մինչև սպանաւ  
Ռ՛ւաան՝ 'ի խրեւ ձիոյն իւրոյ 'ի ջրաբուխ տե-  
ղիս . և ապա փախչէին զօրքն Ս րաց առջև զօրաց  
Ս ասլին : Այլ կեցաւ Ս ասիւն անդ ամիս երիս ,  
մինչև հաւանեցոյց և զնոսա . և երեկ 'ի Տրա-  
պիզոն ձմերեց :

Գնացին առ Թադաւորն Ս ասիւ տէր Պեա-  
րոս կաթողիկոս , և Յովհաննէս Աղղեոն , բա-  
զում սպասուք . և Թադաւորն մեծարեաց զնոսա  
մեծ պատուով . և հասեալ 'ի մեծ օր մկրտու-  
թեանն Քրիստոսի մեծարեաց Թադաւորն  
զտէր Պետրոս , և զվարդապետն Հայոց , և  
երեա կանգնեցնել բարձր քան զառաջնորդսն  
Յունաց : Այլ նախ տէր Պետրոսի հրամայեցաւ  
օրհնել զջուրն . որ իբրև ելից զտուրբ մեռոնն  
'ի ջուրն՝ հուր սաստիկ երևէր 'ի ջրին վերայ .  
և կապեցաւ ջուրն պահ մի : Այլ տեսեալ Թա-  
դաւորն և ամէն ժողովն՝ զարմացան : Այլ խո-  
նարհեալ Թադաւորն , արկանէր զօրհնեալ  
ջուրն 'ի վերայ գլխոյն աջովն Պետրոսի : Այլ  
դարձաւ տէր Պետրոս յաշխարհն Հայոց :

Իսկ Ս ասիւն գայ յետ ժամանակաց Մնտիոք  
'ի ծածուկ երեք հաւատարիմ մարդով . և գայ  
'ի Սև լեառն՝ որ կոչի Պաղակձիակ , և 'ի հօրէն

առնու զքրիստոսական կնիքն . և յայնմ հետէ եղև  
որպէս հայր աշխարհիս Հայոց :

ՆԷԱ

Իսկ 'ի Թուին նհա մեռաւ տէր Սարգիս  
կաթուղիկոսն , և նստի տէր Պետրոս :

Յայնմ ամի իշխան ոմն յաղթանդամ 'ի  
տանէն Յունաց՝ Նիկիֆօս անուն Օւովիզ  
ապստամբեաց 'ի վերայ Ալասին , և կոչեաց  
յիւր միաբանութիւն զԹագաւորն Ալբաց Ղորղի  
և զորդիսն Ղազկայ Յովանէս և Լշոս : Ղնաց  
և յահէ նորա Ղաւիթ առ նա զօրօքն Հայոց ,  
և եղև ահ մեծ 'ի վերայ Ալասին : Եւ յղեաց  
Ալասին աղաչանս առ Ղաւիթ՝ զի հնարեսցէ  
զկորուստ նորա : Եւ Օւովիզն յոյժ սիրէր ըզ  
Ղաւիթ , և խոստացաւ նստուցանել զնա յաթո  
թագաւորութեանն Հայոց : Իայց Ղաւիթ չկա  
մեցաւ ստել զդաշինս Ալասին . և յաւուր մի  
ում մինչ գնայր 'ի տուն իւր խոովութեան  
աղաղաւ , ելաւ Նիկիֆօս միայն զհետ . և  
գրկեալ զնա՝ աղաչէր դառնալ յետս : Իսկ  
Ղաւիթ խոթէր մարդկացն . և նոյն ժամն սպա  
նին զՕւովիզն . և զօրքն նորա փախեան : Իսկ  
Ալասին և ուրախացաւ . և տայ օժիտ Ղաւիթ  
զկէսարիա և զՕամնդաւ և զԱլաւատանէք հան  
դերձ սահմանօքն :

Եւ Ալասիւ մեծ զայրացմամբ գայր 'ի վերայ

Գորգի Արաց Թագաւորին . և առջև Չիծնիս  
բերդին արարին մեծ կռիւ : Այլ Գորգի փախեալ  
և անկաւ յամուր բերդ , և գրէր զանձն ծառայ  
Ասալին , և տայ զորդին պանտանդ :

Յետ այսորիկ գնաց Ասալին յաշխարհն  
Պարսից , և բնակէր 'ի դուռն քաղաքին Հերայ .  
և էր ժամանակն ամառն : Այլ օր մի երեկ շատ ձիւն  
'ի վերայ հեծեւին , և չգիտէին՝ Թէ ինչ այն  
էին . և փախեան 'ի մեծ տագնապէն . և ծովացաւ  
երկիրն 'ի շատ ջրէն . և եկին 'ի տիղմ , և  
չկարէին անցանել 'ի տղմոյն , և չգիտէին  
զինչ արասցեն : Ապա Թագաւորն կոտորեալ 'ի  
հետեակացն երեքտասան հազար մարդ՝ լցին 'ի  
մօրատն , և անցան 'ի վերայ , և եկին ձմերել 'ի  
Սելտինի . և անտի գնացին 'ի Աոստանդնուպօլիս :

Ի ժամանակս Ասալին 'ի Թուին ն՛չը նչը  
երեւեցաւ յերկինս սոսկալի նշան . որպէս Թէ  
պատառեցաւ երկինքն , և լոյս սաստիկ յերկիր  
անկաւ . և զահի հարան ամենեքեան ընդ լուսոյն  
հեղումն : Յայնժամ ժողովեցան առ վարդապետն  
հայոց Յովհաննէս Արղեւն , և հարցանէին վասն  
սոսկալի նշանին : Այլ նա արտասուօք սկսաւ  
պատմել զչարուԹիւն յետին ժամանակիս զոր  
ինչ գալոց էր 'ի վերայ երկրիս :

Այլ յայտարի մեռաւ Ասալին , և տայ զԹա-

գաւորութիւնն 'ի Արտանդին եղբայրն իւր .  
 և յանձնեաց 'ի նա զաշխարհն Հայոց , կացեալ  
 Թագաւոր ամն յիսուն և ութ : Ալ զԱտոմ և  
 զԳաւիթ զորդիսն Սենեքերիմայ , և զԱպու  
 սահն և զԱրտանդինն և զամենայն իշխանս Հա  
 յոց հոգաբարձութեամբ յանձնէր 'ի նա , և զամե  
 նայն աշխարհն Հայոց :

Յայսմ ամի մեռանէր Սենեքերիմ արքայն .  
 և Թաղեցին 'ի Արագայ վանն . և նստաւ յա  
 Թուն Գաւիթ : Սեուա և Թագաւորն Արաց  
 Գորդի . և նստաւ Ռագրատ որդի նորա :

Իսկ Արտանդին արքայն Յունաց եղև այր  
 բարի և ողորմած . և զամենայն բանտարգեալս  
 ազատեաց . և շրջեաց զտունն կորսեան՝ յորում  
 Ասիլն կախեալ էր զգետիւք զմեծամեծսն  
 Յունաց ընդ փողից և ընդ ճանկ երկաթի : Օ որ  
 տեսեալ Արտանդին՝ լայր և ապաշաւէր զնոսա ,  
 և հրամայէր Թաղել զնոսա . և մեղ դնէր եղբօրն  
 և ասէր , Թէ մնալ մահկանացու զի՛արդ յայսպիսի  
 մեղս յանդգնի վասն կենաց անցաւորի . և ինքն  
 փոխի առ Քրիստոս կեցեալ ամն չորս : Ալ մինչ  
 կենդանի էր՝ փեսայացոյց զմն Ռամանոս . և էր  
 Ռամանոս իշխան . քանզի ոչ գոյր Արտանդնի  
 որդի . և ամենեքեան հնազանդեցան Ռամանոսի :

ՆՃԹ

Ալ 'ի Թուին նճթ ելաւ Ռամանոս բա

զում՝ զօրօք և եկն 'ի վերայ Տաճկաց աշխարհին .  
 և հասեալ 'ի քաղաքն մեծ 'ի Հալալ՝ պաշարեաց  
 զնա : Եւոզովեցան Տաճիկք , և եկին 'ի վերայ  
 նորա պատերազմու . յորոց վախեցեալ՝ փախըս-  
 տական եղև 'ի գիշերի . և այլազգիքն զհետ  
 մտեալ՝ կոտորեցին յոյժ . և մնացեալքն փախեան  
 և եղևն ցիր և ցան : Իսկ այր ոմն շինական 'ի  
 Կուրիսոյ գտաւ զԹագաւորն , որ անկեալ էր  
 'ի մէջ ծառոց՝ ընդարմացեալ 'ի սովոյ իբրև  
 զմեռեալ . և տարաւ 'ի տուն՝ կերակրեաց և  
 արձակեաց , ոչ գիտելով Թէ ո՞վ էր : Եւ զնաց  
 (Թագաւորն) 'ի Մարաշ . և Ժողովեցան առ նա  
 'ի ցրուեալ զօրացն , և տարան զնա 'ի Կոս-  
 տանդնուպօլիս : Եւ այս եղև ընդ նա , զի էր  
 Թոյլ՝ և չար բարուք՝ և հայհոյիչ հաւատոյ :  
 Իսկ զայրն որ կերակրեաց զնա՝ կոչեաց , և ետ  
 նմա շատ գանձ :

Յաւուրս յայս՝ Սուհա քաղաքն էր երկու  
 Ամիրայ , որոց մինն սպան զմիւսն . և անկա  
 խուովութիւն 'ի քաղաքն . և եկին 'ի շատ տեղաց  
 Տաճիկք և հարան ընդ միմեանս . և քաղաքն 'ի  
 վտանգի էր : Եւ անձարեալ այրն որ ունէր զԱլը-  
 լայն՝ կոչեաց զՄանիակն 'ի Սամուսատայ զայր  
 բրիտոնէ . ած զնա 'ի Ալայն , և ետ 'ի ձեռս  
 նորա զամրոցն : Եւ իբրև այս եղև , յայնժամ՝

յամենայն կողմանց ժողովեցան Տաճիկք և կրու  
ուէին 'ի վերայ Ալային . խորհեցան այրել զքա  
ղաքն և գնալ . և Մանիակն կայր 'ի վտանգի  
խիտ ջանիւ . և քաղաքացիքն աղաչեցին զնոսա ,  
և (նոքա) չայրեցին , այլ գնացին : Իսկ Մանի  
ակն 'ի վտանգի էր , և զօրքն 'ի սովոյ նեղեալ  
չգտանէին կերակուր . և հրամանաւ Թագաւորին  
տանէին դեսպանք շալկով 'ի գիշերի ցորեն շատ  
'ի քաղաքն : Իմացան Տաճիկքն , և սպանին  
զամէնն , և առին զցորենն , և Մանիակն 'ի  
տազնապ էր , մինչև արար Թագաւորն ընդ նոսա  
սէր . և եղև խաղաղութիւն մեծ : Եւ այս եղև

ԿԶ . 'ի Թագաւորութեանն Ռամանոսի 'ի Թուին նձ :

Իսկ յետ շատ նեղութեանց՝ զոր կրեաց  
Մանիակն , փոխեաց զնա Ռամանոսն . և ետ  
զՌուհա Լսուպաքայ վրանապահին 'Դաւթի  
կուրապաղատին :

ԿԶԱ . Իսկ 'ի Թուին նձա եղև սով սաստիկ ընդ  
ամենայն երկիր . և յայս ամի մեռաւ Թագաւորն  
Ռամանոս մահադեղով 'ի կնոջէ իւրմէ Աեռա  
Օոյեայ դստեր Թագաւորին Աոստանդեայ : Եւ  
էաւ Թագուհին զՍիխայն և նստոյց յաթու  
Թագաւորութեանն :

Եւ յայն ամի մեռաւ Թագաւորն 'Դաւթ  
որդի Սենեքերիմայ . և Թագաւորեաց Լտով

եղբայրն իւր, այլ լի առաքինութեամբ, և ողորմած առ ամենեւեան :

Ի սորա աւուրս 'ի Թուին ն՛ձդ ելին զօրք **ՆՁԴ.**  
Տաճկաց, անցան ընդ Ափրատ, և կոտորեցին զզօրսն Ուսայու, և զամենայն սահմանս նորա : Աւ եղբայր Թադաւորին Միխայլին գայ զօրօք 'ի վերայ Տաճկաց, և հասեալ 'ի Մեւիսի՛ չիշխեր ելանել 'ի կուիւ : Աւ վախեցան 'ի նուցանէ զօրքն Տաճկաց՝ և գնացին . այսպէս և զօրքն Յունաց գնացին :

Իսկ 'ի Թուին ն՛ձե եղև խաւարումն արեւ **ՆՁԵ.**  
գական . և եղև տիւն զէտ գիշեր . և սասանեցան մարդիկ ընդ սոսկալի նշանն : Յայնժամ Թադաւորն Հայոց Յովանէս, և կաթողիկոս տէր Պետրոս, յղարկեցին արս առ վարդապետն Հայոց Յովհաննէս Աղզեոն՝ հարցանել զպատճառ նշանին . և նորա եկին գտին զՅովհաննէս՝ զի անկեալ 'ի վերայ երեսացն՝ աղօթէր մեծաւ ողբով . և նստան առաջի նորա, և ուսանէին 'ի նմանէ : Իսկ նա պատմէր զյետին ժամանակի դաւնութիւնն, զզօրանալ անօրինաց և զտկարանալ քրիստոնէից, զխաւանութեան եկեղեցւոյ, զծուլութիւն քահանայից, զծուումն դատաստանաց, զրկանս իշխանաց, զանիրաւութիւն Թադաւորաց, և զապականութեան ամենայն ժողովրդեանն

Լստուծոյ յառաջնորդաց՝ յիշխանաց՝ ՚ի սուր  
քահանայից՝ յանարժան պատարագաց զայլացեալ  
հովուաց, և զշատանալ պէսպէս մեղաց: Օպսոս  
սիկ պատմեաց սուրբ վարդապետն, և արձակեաց  
զնոսա:

Յայսմ ժամանակի Ղանձի ոմն անուն իշխան  
Հայոց ժողովեաց շատ հեծեալ, գնաց ՚ի վերայ  
քաղաքին Տերկրոյ և առ զնա, և կոտորեաց զՊար  
սիկս, և էառ սղարիւ զՎլայն, և նստաւ անհոգ  
զօրօքն յուտել և խմել: Իսկ տէրն իմացաւ  
և առնու զօրս իւր ՚ի յօգնութիւն. եկն եգիտ  
զնոսա անհոգ, և սպան զՂանձի. և կոտորեաց  
զամենայն զօրս նորա:

ՆԶԹ. Իսկ ՚ի թուին Նճթ երեւեցաւ աստղն գի  
սաւոր յերեկոյն յարեմտից կողմն, և յետս  
սողալով եկն ՚ի հարաւ ընդ բազումքն (\*) և  
ընդ լուսնին ՚ի մէջ, և այլ չերեւեցաւ:

Եւ ՚ի սոյն ամի մտաւ Սիւսայն շատ զօրօք ՚ի  
Պուլղարս. և արարին շատ կոտորուած ՚ի զօ  
րաց նոցա: Իսկ նոքա միաբան աղաղակեցին  
առ Լստուած, և դարձան ՚ի վերայ Յունաց և  
անխնայ կոտորեցին, և զթագաւորն փախուցին,

(\*) Պիտի խմանալ Տապապէղի, որ է համատեղութիւն  
ինչ՝ յայլոց Տոյլ ասացեալ:

և առին զամենայն զէնս և զինչս զօրացն: Յայսմ  
հետէ ազատեցան 'ի չար ազգէն Յունաց:

Յայսմ ամի մեռանէր արքայն Հայոց Աշոտ,  
եղբայր Յովանէսի. և տարեալ թաղեցին (զնա)  
յԱնի. և մնաց նորա որդի հնգետասան ամաց՝  
անուն Ղազիկ: Եւսկ զինի մահուանն Աշոտոյ  
թուլացան և աղարտեցին զպատերազմ, և սիրե-  
ցին զգինի և զգուսանս, և մտան 'ի ծառայու-  
թիւն ազգին Յունաց, և լուծան 'ի միաբանու-  
թենէ միմեանց. և տեսեալ զի երկիր ընդ սրով  
այլազգեացն անցանէր, ապաշաւէին զմիմեանց  
կորուստ, և լային՝ զի թափեցան յարիագոյն և  
'ի քաջ գլխոյ:

Յայսմ ամի ժողով արար ամիրայն Վարսից  
Ապուսվար, և եկն յաշխարհն Աղուանից. և 'ի  
գաւառն Անհողինին Ղաւթի, և մեծ կորուստ  
գործեաց հաւատացելոցն: Ղաւթի լատեցաւ  
կռուիլ ընդ նոսա. և Ապուսվար էառ գաւառս  
և բերդս շատ. և զամ մի անդ դադարեալ՝  
հնազանդ արար զմեծ մանն աշխարհին: Եւ առա-  
քեաց առ թագաւորն Յովանէս՝ Ղաւթի և ասէ.  
Ընր ինձ օգնական՝ զի կացից ընդդէմ Ապուս-  
վարայ. և թէ ոչ՝ լինիմ նմա հնազանդ, և լինիմ  
առաջնորդ նմա, և խաւար ածեմ ազգիդ Շիրա-  
կայ: Եւսեց Յովանէս, և ետ նմա օգնութիւն

ձիաւորս երեք հազար : Սոյնպէս առաքեաց  
 (Պաւլիթ) առ Թադաւորն Լճիսաղաց. և նա ետ  
 նման ձիաւորս հինգ հազար: Եւ յողովեաց (Պաւլիթ)  
 զիւրն իբրև երկոտասան հազար. կոչեաց և զկա  
 Թուղիկոսն Լճուանիցտէր Յուսէփ՝ եպիսկոպոսօք  
 և վանականօք, քահանայիւք և ժողովրդովք,  
 և եբեր ՚ի բանակն զամենայն բնակիչս երկրին՝  
 կին և տղայ, և ասէր ընդ ամէնս. » Օհն զխաջն  
 Քրիստոսի և զաւետարանն առցէ (ամենայն ոք)  
 ՚ի ձեռս. և որ ցանկայ մարտիրոսութեան, այս  
 է ժամն: » Եւ եղև ամենայն բանակն՝ խաչ և  
 աւետարան. զոր իբրև ընդ Լճուսվար՝ ծիծաղե  
 ցաւ ՚ի վերայ նոցա: Իսկ Պաւլիթ քսան հազար  
 հեծելով ճակատեցաւ ընդդէմ նոցա. և միտ  
 ցան իբրև ՚ի ծով ՚ի բանակն այլազգեաց: Իսկ  
 քահանայքն և ժողովուրդքն առ Լճուստուած համ  
 բարձին զձայնս իւրեանց՝ և ասեն. » Լճի տէր  
 օգնեա՛ մեզ վասնանուան քո » : Յայնժամ վա  
 խեան զօրքն այլազգեաց հաւասար : Եւ զհե  
 մտեալ զօրքն քրիստոսեաց՝ ջնջեցին զնոս  
 իսպառ : Եւ Պաւլիթ յաւուրս երիս դարձոյց  
 յինքն զամենայն աշխարհն իւր. և ետ պարգևս  
 զօրացն և եպիսկոպոսացն. և եղև խաղաղու  
 Թիւն մեծ :

Յայտ՛ ամի ոմն անօրէն յիշխանացն Սենեքե

րիմնայ գնաց առ Թագաւորն Յունաց, և հաւա-  
 նուութիւն առնէր վասն Ատոմայ, Թէ խորհին  
 մուտել 'ի վերայ քո, և առնել խուովութիւն  
 ընդ քեզ: Աւատաց Թագաւորն. և յղարկեց 'ի  
 Աւաստ զակալութն իւր հնգետասան հազար  
 հեծելով՝ բերել զնոսա ուժով զի մի փախի-  
 ցեն: Աւ նոքա լուեալ զայն՝ գնացին 'ի Արս-  
 տանդնուպօլիս. և իբրև մտին 'ի քաղաքն՝ դի-  
 մեցին լալով 'ի գերեզման Ասլին. և զգիր  
 երդմանն նորա եղին 'ի վերայ հողոյն, և ասա-  
 ցին. « ո՛վ հայր մեր՝ դու բերեր զմեզ յաշխարհս  
 յայս. արդ դատ արա մեզ 'ի սպառնալեաց  
 մահու եկելոցս 'ի վերայ մեր »: Օր լուեալ  
 Թագաւորին՝ հիանայր ընդ իմաստութիւն նոցա  
 և ընդ անմեղութիւն. և հրամայեաց սպանանել  
 զչարսխօսքն. և զնոսա մեծ սարգեօք յղարկեաց  
 'ի Աւաստ:

Ի Թուին նդ մեռաւ Յովանէս արքայն հաւ նր:  
 յոց, և Թաղեցաւ ընդ հարսն յԱնի: Իսկ Թագա-  
 ւոր Յունաց Սիխայլն բազում զօրօք հասանէր 'ի  
 գաւառն հայոց, և աւերէր զաշխարհն սրով  
 և գերութեամբ. քանզի Յովանէսն յառաջագոյն  
 գիր էր տուեալ Յունաց. որ յետ իւր մահուանն  
 լինի 'ի նոսա դառնայր: Օր անօրէնն Սար-  
 գիս 'ի հայոց՝ ազդ առնէր Սիխայլին, և 'ի տուր

տայր զաշխարհս նայոց . և ինքն յափշտակեալ  
 շատ գանձս թագաւորաց՝ բերդամուտ լինէր ,  
 և աւանդս բազումս սրահեր , և կամէր թագաւո-  
 րել նայոց . զոր չկամեցան Ռագրատունիք : Յաւ-  
 ներ և Մնհոզին ասպատակաւ 'ի վերայ աշխար-  
 հին նայոց , և շատ գաւառք հնազանդեցան նմա՝  
 զի չկայր գլխաւոր նայոց :

Իբրև եկին Յոյնք 'ի վերայ թագաւորական  
 քաղաքին Մնիոյ , յայնժամ ժողովեցան զօրքն  
 նայոց առ մեծ սպարապետն Ահարամ Պաշաւու-  
 նին , և խնդրէին կուուել ընդ զօրսն Յունաց .  
 վասն զի ոչ կարէին տանել հայհոյութեան նոցա  
 և նախաստանաց : Եւ յիշեալ զանուն Մստուծոյ՝  
 յարձակեցան 'ի վերայ նոցա , և զայնքան զօրու-  
 թիւնն նոցա կոխան արարին ձիոցն , և մաշե-  
 ցին 'ի սուր սուսերի . և որք ջանային փախչել  
 'ի յահագին ձայնէ քաջացն նայոց՝ չկարէին  
 փախչել , մինչ ընդ միջ անցեալ սպարապետն  
 Ահարամ , բազում աղաչանօք կարաց հաւանեցու-  
 ցանել զզօրսն նայոց՝ սակաւ մի թոյլ տալ փախ-  
 չել . որ և 'ի հարիւր հազարաց նոցա հարիւր  
 զերծան . և յայնմ հետէ այլ ոչ ևս յիշեցին  
 զՄնի :

Եւ 'ի թուին նայոց նրա ժողովեցան իշ-  
 խանքն նայոց հրամանաւ մեծին Պրիգորի որդւոյ

Սասակայ . և զնացեալ առ սուրբ կաթուղիկոնս  
 տէր Պետրոս , օծեցին զորդին Նշոտոյ զՊաս-  
 գիկ թագաւոր Հայոց . զի էր զարգացեալ և  
 վայելուչ , և իմաստուն և հմուտ Նստուածային  
 ուսմանց հին և նոր կտակարանաց . և եղև այլ  
 բարի և Նստուածասէր , և անպարտելի յիմաս-  
 տասիրաց դասն , և իմաստութեամբ հաստատեաց  
 զաթու թագաւորութեան Հայոց : Յայնժամ 'ի  
 ձեռն զօրաց իւրոց ըմբռնեալ զանօրէն Սարգիսն՝  
 խոշտանկանօք անուոյր 'ի նմանէ զամբոցն և զգան-  
 ձըն արքունի՝ զոր յափշտակեալն էր , և զգաւառն՝  
 զոր ըմբռնեալ էր : Եւ զօրքն Յունաց դադարեցին  
 'ի ինդրելոյ զՆնի . և խաղաղացաւ աշխարհն  
 Հայոց :

Յայնժամ ժողովեալ Պագիկ զզօրսն Հա-  
 յոց՝ զնաց ընդ կողմանս աշխարհին հայրենեաց  
 իւրոց , և զամենայն ապստամբեալսն 'ի հնազան-  
 դութիւն էած , և զհակառակսն հերքեալ հալա-  
 ծեաց . և երթայր բազում զօրօք բնակէր յԵւ-  
 բարատ գաւառն 'ի Սաղարշապատ քաղաք . առ-  
 նոյր վրէժ յազգացն հարաւայնոյ :

Յայնժամ սպառազինեալ մեծն Պրիգորիոս  
 Պալհաւունին՝ որդին քաջին Սասակայ . և եր-  
 թեալ բանակ հարկանէր 'ի վերայ Նխուրեան  
 գետոյ , մերձ յամուրն Ռջնի . և զօրք այլազ-

գեացն դնային 'ի պատերազմ 'ի վերայ զօրացն  
 Հայոց . և եղև սաստիկ պատերազմն . և զառա  
 ջինն յաղթեցին զօրացն Հայոց . և ապա օգնու  
 թեամբն Քրիստոսի (զօրքն Հայոց) դարձուցին  
 զզօրս անօրինացն 'ի փախուստ և կոտորեցին յոյժ,  
 և զիշխանս նոցա արարին ձեռնակապեալս . և  
 մնացեալքն գնացին փախստական 'ի Պարս :

Օայսու ժամանակաւ մեռանէր Թագաւորն  
 Յունաց Սիլսայն . և Թագաւորեաց Կեսաւոս  
 որդի քեռ նորա ամիսս չորս . վասն զի համարձա  
 կեալ գործեաց գործ լրբութեան և զԹագուհին  
 Կեռա Օռոյի զդուստրն Կոստանդեայ կայսերն  
 խուզել համարձակեցաւ որպէս զպոռնիկ, և առա  
 քեաց յաքսորս . նոյնպէս և զպատրիարզն ըմբռու  
 նեալ՝ եղ 'ի բանտի , քանզի կամէր զանօրէն և  
 զպիղծ ազգն յառաջ բերել յօգնականութիւն  
 Թագաւորութեանն իւրոյ : Դսկ պատրիարքն  
 իմաստութեամբ զերծեալ՝ անկաւ 'ի սուրբն  
 Սոփի , և արար անդ ժողով իշխանաց . և կա  
 լեալ զԿեսաւոսն և զազգականս իւր՝ խաւարե  
 ցուցին զաչս նոցա . և դարձուցին զԹագուհին  
 և զամենայն արտաքս ելեալ իշխանան մեծաւ  
 պատուով 'ի Կոստանդնուպօլիս :

Յայսմ ամի զօրաժողով արարեալ տէրն Հե  
 րայ և Սալամաստայ՝ եկն 'ի վերայ գաւառին

Ասպուրականի : Խաչիկ (իշխան տեղւոյն) էր  
 այր քաջ և պատերազմող . այլ ծերացեալ էր  
 և պարապեալ բազում ժամանակաւ . և որդիքն  
 նորա Հասան և Ննճղուկն էին առ Թագաւորն  
 Յունաց Միխայլն . և կրտսեր որդին՝ իշխանն՝  
 տղայ էր տարօք : Այա հարկաւորեալ՝ ինքն  
 ելանէր 'ի պատերազմն սակաւ զօրօք , և հալա  
 ծէր քաջապէս զբանակն այլազգեացն : Խսկ տղայ  
 որդին՝ իշխանն՝ առանց կամաց հօրն յարձակեցաւ  
 'ի պատերազմն , և անպատրաստ եմուտ 'ի մէջ  
 Թշնամեացն , և սպանաւ անդ : Խսկ պարոն Խա  
 չիկ տեսեալ զայն՝ լքեալ 'ի զօրուԹէնէ՝ սպա  
 նաւ և նա 'ի պատերազմին : Օկնի քիչ աւուրց  
 եկին որդիքն նորա յարեմտից՝ սգացեալ սուգ  
 'ի վերայ հօրն և եղբօրն : Յայժամ՝ աւագ որդին  
 Հասան կոչեաց Քուրդ սիրելի մի . տայր նմա  
 հազար դեկան ոսկի , և ասէր . մուտ 'ի Հեր և  
 'ի Սալամաստ . ասա՛ եթէ աշխարհն Ասս  
 պուրականի անմարդ է , զի՞ կայք պարապ . և  
 բազում ծառայք և հօտք ոչխարաց անմարդ  
 շրջին : Արար Քուրդն այնպէս . և ժողովեցին  
 այլազգիքն զօրս բազումն , և եկեալ բանակեցան  
 'ի նոյն տեղւոջն : Աւ գայր Քուրդն պատմէր  
 պարոն Հասանայ . ժողովեցին և նոքա զզօրսն  
 իւրեանց , և պատրաստեցան ընդդէմ՝ նոցա 'ի

մարտ պատերազմի . և Հասան ձայն տուեալ այլ  
 ազգեացն՝ ասէ . ո՞ր է այրն որ սպան զհայրն  
 իմ՝ Խաչիկ : Այլ ասն այր մի սև հզօր յանդուզն  
 յարձակմամբ ասէր . ես եմ . և ասն ձին իւր  
 և սլէհն : Այլ քաջն Հասան յարձակեցաւ 'ի վերայ  
 նորա սրովն , և պատառեաց զնա ընդ երկուս ,  
 և դարձոյց զձին և զսլէհն հօրն : Աոյնպէս և  
 խնդրեաց Ղ'նձիուկն զսպանողն եղբօրն . և մէկ  
 մի այլ պարծէր ասելով՝ [Թէ ես եմ : Այլ նա  
 եհար զնա ըւրմբովն 'ի սիրտն , և 'ի [Թափ ան-  
 ցոյց և ընկէց՝ առեալ զձի եղբօրն և զգէնն . և  
 քաջապէս կոտորեցին զնոսա , և առին զաւար  
 և զձիս , և դարձան ուրախութեամբ :

ԵՂԲ .

Իսկ 'ի [Թուին ն՞ղբ [Թաղաւորեաց Յունաց  
 կոստանդին Ս'ոնմասն . որ [Թարգմանի մեհա-  
 մարտիկ : Այլ 'ի նոյն ամի յարեաւ 'ի վերայ նորա  
 Ս'անիակն՝ այր քաջ , որ յառաջնեաւ զՍուռհա ,  
 և կապեաց [Թաղ , և ժողովեաց զօրս բազումն՝  
 ունելով [Թիկունս յօգնականութիւն զաշխարհն  
 Հռոմայեցւոց . և 'ի յահէ նորա հնազանդեցան  
 նմա ամենայն արեւմուտք . զի էր այր յաղթան-  
 դամ և քաջ 'ի պատերազմնն : Իսկ Ս'ոնու-  
 մասն ամենայն Յունօքն զնաց ընդդէմ՝ նորա  
 'ի պատերազմն . և յանկարծակի եհաս մահ Ս'ա-  
 նեակին . և խաղաղացաւ տունն Յունաց :

Օչայսու ժամանակաւ անօրէն Սարգիսն՝ որ  
 էր յարևելս, ազդ առնէր Սոնումսին և ասէր •  
 կոչեան զՂազիկ պատճառանօք սիրոյ 'ի Կոս-  
 տանդնուպօլիս, և մի թողուր ելանել 'ի քաղա-  
 քէն, մինչև զքաղաքն Լնի առցես 'ի նմանէ :  
 Եւ արմատացաւ 'ի սիրտ նորա այս սերմն չարու-  
 թեան առ 'ի բառնալ զթագաւորութիւնն Հա-  
 յոց • և գրեաց թուղթ առ Ղազիկ արքայն  
 Հայոց, և կոչէր առ ինքն մեծամեծ երդմամբ՝  
 սուեալ միջնորդ սուրբ զխաչն և զաւետա-  
 րանն Քրիստոսի : Եւ լուեալ Ղազիկ՝ ոչ  
 կամեցաւ գնալ • իսկ անօրէն Սարգիս հանդերձ  
 համախոհօքն իւրովք մատեան առ թագաւորն,  
 և քաջալերէին զնաասելով • Էրվախեսս գնալ, ո՛վ  
 թագաւոր, և երկմտիս յայս մեծ երդմանս • և  
 թէ առ մեզ ունիս կարծիս • ահա անձինք մեր  
 մեռանին վասն քո : Եւ գրին միջնորդ զտէր  
 Պետրոս • բերին զսուրբ խորհուրդն, թացին  
 անդ զգրիչն • և արարին մեծ երդումն յաւուրն  
 յայնմիկ :

Յայժամ անվախ եղև Ղազիկ • և գնաց 'ի  
 Կոստանդնուպօլիս • և ամենայն քաղաքն հրամա-  
 նօք թագաւորին մեծ խնդութեամբ ելին ընդդէմ  
 նորա, և մեծ պատուով ընկալան զնա, որպէս  
 վայել էր թագաւորի : Կսկուրացողքն Քրիստոսի՝

որք արեամբն Մստուծոյ կապեցին զերդումն ,  
 առաքեցին առ Մոնոմախն զքաղաքին Մնոյ քա-  
 ռասուն բանալիք , և գիր զինի , թէ ամենայն արե-  
 ելք քո եղև : Առջեաց թագաւորն զՂազիկ , և  
 զբանալիքն և զթուղթն առաջինորա եդ և ասաց ,  
 թէ զամենայն արեւելք քո ետուն ինձ : Այլ ասէ  
 Ղազիկ ցՄոնոմախն . թագաւոր Հայոց ե՛ս եմ .  
 և ես ո՛չ տամ զՄնի ՚ի քեզ . զի սուտ երդմամբ  
 ածեր զիս ՚ի տեղս . և երեսուն օր պնդեալ Ղա-  
 զիկ՝ ո՛չ հանէր : Այլ յորժամ ճարակ չգտաւ ,  
 ետ զՀայք ՚ի ձեռս Յունաց : Այլ ետ Մոնոմախն  
 Ղազիկայ զԱլալօն պաղատ և զՍիզու : Այլ յղեաց  
 Ղազիկ ՚ի քաղաքն Մնի , և ինչք զոր ունէր՝ ետ  
 բերել ՚ի Յոյս . և կայր պանդուխտ ՚ի մէջ  
 անագորոյն և չար ազգին : Մայց ուր հասանէր՝  
 մեծ նեղութիւն արկանէր ազգին Յունաց . զի  
 որպէս թագաւոր ահարկու կայր ՚ի մէջ նոցա :

Ն Գ Գ .

Իսկ ՚ի մէկ այլ տարին ՚ի թուին ն՝ զքառա-  
 քէր Մոնոմախն Աուրտ մի Պառակամանոս անուն՝  
 շատ զօրօք յարեւելս ՚ի ինդեր քաղաքին Մնոյ ,  
 որ եկեալ հասաւ ՚ի դուռն քաղաքին : Այլ ազգն  
 Հայոց որ էին ՚ի քաղաքին՝ չհաւանեցան տալ  
 զքաղաքն . այլ ուզէին զՂազիկ թագաւորն իւր-  
 եանց . և միաբան ելան ՚ի կռիւ ընդ զօրսն Յու-  
 նաց , և կոտորեցին և փախուցին . և շատ աւա-

րաւ մտան 'ի քաղաքն . և Պառակամանոսն ձմեռ  
 նեաց յԱւստիքն 'ի դաւառն թէ ուղուսօլեայ :  
 Յայնժամ զօրքն Հայոց իբրև տեսին՝ թէ թա-  
 դաւորն իւրեանց Ղազիկ այլ ոչ ելանէ յարևելս,  
 ժողովեցան 'ի գերեզմանս Հայոց թագաւորացն ,  
 և լացին երեք օր զանտիրանալն իւրեանց , և անէ-  
 ծըս կարդային նենգաւորացն Ղազկայ : Լ'պա  
 յուսահատեալք գրեցին առ Պառակամանոսն , և  
 կոչեցին զնա , և ետուն զԼ'նի 'ի ձեռս նորա :  
 Լ'ստանօր բարձաւ թագաւորութիւնն Հայոց ,  
 և անկաւ տէրութիւն ազգին Ղազրատունեաց :

Դ՛ թուին նորէ եղև խիստ շարժ , և փո- Գ, ԳԱ .  
 խեցաւ դոյն լուսաւորացն 'ի կարմրութիւն , և  
 մառախուղ ունէր զերեսս երկրի . և 'ի շարժէն  
 եկեղեցիք և մեծք շինուածք խախտեցան : Լ'ս  
 Եզնկայն առ հասարակ փրաւ . և պատառեցաւ զե-  
 տինն և եկուլ բազում արս և կանայս . և շատ  
 օրեր գայր ձայնն նոցա 'ի խորոց անտի :

Յայսմ ամի խաղացեալ զօրքն Յունաց , գնա-  
 ցին 'ի վերայ քաղաքին Ղալնա . և կուռեալ ընդ  
 այլազգիսն՝ յաղթեալ կոտորեցան անդ . ընդ  
 որս և մեծ սպարապետն Հայոց պարոն Սահրամ ,  
 և իւր որդին Ղարիգորն սպանաւ 'ի կռիւն : Դ՛  
 նոյն ամի շարժեալ 'ի տանէն Պարսից եր'ք  
 Լ'միրայ . և շատ զօրօք եկին 'ի սահմանս Ս'օս .

լայ . և տէրն Մօսլայ շատ Լ՛րաբացօք գնաց 'ի վրան նոցա . և խառնեալ ընդ միմեանս՝ սպանաւ նէին զիբեարս . ապա յետոյ Պարսիկն փախոյց զՄօսլացին : Յայնժամ տէրն Մօսլայ ձայն տուեալ 'ի Տաճկաստան՝ ժողովեաց զօրս բազումըս , և արար զնոսա փախստական , և դարձոյց զգերութիւն իւր և զնոցայն , և խիտ վարեաց զնոսա մինչ 'ի սահմանս Հանձիթոյ : Իսկ փախրստականքն դիմեալ յաշխարհն իւրեանց . շատ գերութիւն և հեղումն արեանց առնէին 'ի Քրիստոնեայսն՝ ընդ որ գնային . և հասեալ մինչև յԼ՛րձէշ քաղաքն Հայոց , և առաքեալ առ կատապանն Յունաց որ կայր անդ՝ խոստացան նմա շատ ինչք , զի խաղաղութեամբ թողցէ զնոսա գնալ : Իսկ նա ոչ առ յանձն , այլ ելաւ ընդդէմ նոցա 'ի պատերազմ . և յաղթեալ 'ի նոցանէ՝ կոտորեցան զօրքն Յունաց . և կատապան կիր Ստեֆանէ բռնուեցաւ . և տարան գերի 'ի Հեր քաղաք , և անդ մեռաւ :

Յայնժամ առաքէր Մոնոմախն կուրդ մի Տեւարիս անուն զօրօք բազմօք 'ի վերայ Ղալնայ քաղաքին . և էր ձմեռն . որ եկեալ՝ 'ի սաստիկ անձրևէն իրք չկարաց առնել , այլ՝ դարձաւ յետս : Իսկ յամսուն եկն Տեւարիս 'ի վերայ Ղալնայ , և պաշարեաց զնա , և չկարաց առնուլ .

ապա աւերեաց զսահմանս գաւառին, և դարձաւ :

Եւ 'ի սոյն ժամանակի այր ոմն 'ի քաղաքէն Մնդրեանուպօլսէ այր քաջ՝ որ կոչէր Թառնիկ, յառնէ 'ի վերայ Մոնոմախին • և զօրօք արեւմտեց գայր 'ի վերայ քաղաքին Աոստանդնուպօլսի, և 'ի մեծ տազնապ ունէր զքաղաքն, մինչ կալան քարով զդուռն քաղաքին: Իբրև չկարացին կալ 'ի դիմի, գրեցին առ Թառնիկ սուտ երդումն ըստ իւրեանց սովորութեանն՝ դնել զԹառնիկ Աեսառոս, ասելով թէ՛ զկնի մահու Մոնոմախին՝ Թառնիկ լիցի Թագաւոր: Եւ ելին պատրիարքն և իշխանքն առ Թառնիկն, և երդմամբ դրին ուխտ ընդ նմն • և եղև խաղաղութիւն • և ածին զԹառնիկ 'ի Աոստանդնուպօլիս • և յետ աւուրց հանին զաչք նորա:

Ի Թուին նոր յաւուրս Մոնոմախին, ԿԶԸ ելին հրամանօք Տօղրիւ Սուլտընայ Պարսից՝ զօրագլուխք երկու շատ զօրօք, և եկին 'ի Հայք: Եւ այս վասն այսորիկ եղև՝ զի զզօրս քաջս վերուցին Յոյք, և դրին 'ի տեղ նոցա Աուրտ զօրագլուխք • և այնով կամէին պահել զտունն արևելից: Եւ յորժամ իմացան այլազգիքն՝ եթէ անտէր է աշխարհն Հայոց, եկին 'ի վերայ քաղաքին՝ որ կոչի Մրծն • և տեսին զնա անպարիսպ, և լցեալ անչափ գանձով և մարդով,

սկսան կռուել ընդ նմա : Աւելան քաղաքացիքն  
 և խիստ կռուով զմիմեանս կուփէին , քանզի չու-  
 նէին տեղ փախչելոյ կամ յոյս օգնութեան . նա՛  
 զմահ արարին յոյս . և ՚ի խիստ բարկութեան  
 անօրինացն՝ փախեան . և այլազգիքն զհետ պըն-  
 դեալ՝ (մտին) սրով ՚ի քաղաքն , և ՚ի սուր սուսերի  
 մաշեցին զամէնն . և լցան ոսկուով և արծաթով  
 և ազգի ազգի դիպակօք : Այր անդ քոր եպիսկոպոս  
 մի՛ Պաւլիթ անուն . առին զգանձս նորա . բար-  
 ձան քառասուն ըլտու . և հարիւր վեց բեռն եւ  
 զանց ելանէր ՚ի տանէն : Այսր ՚ի քաղաքն եկե-  
 ղեցի եօթն հարիւր . և փարթամ էր և վայե-  
 լուչ քաղաքն այն , զոր անցուցին ազգն անօրի-  
 նաց սրով . և շատք անթաղ մնացին՝ զորս կերան  
 գազանք և թռչունք . և աղուոր կանայք տղայօք  
 գնացին գերի յաշխարհն Պարսից յանգին ծա-  
 ուայութիւն : Աւ այս եղև սկիզբն կորստեան  
 աշխարհին հայոց . և այս էր առաջին քաղաք՝  
 որ առուաւ սրով ՚ի հայոց : Յայտմ հետե-  
 լեցէք մի ըստ միոջէ զայն զոր պատմեմք :

Իսկ Ս՝ոնոմանն իբրև լուաւ զհամբաւս զայս .  
 յղարկեաց զորս յարևելք . և եղ զօրագլուխ  
 զՊարիզոր Պալհաունի զմագիստրոսն զորդին  
 Աստակայ . և զԿամենն . և զքաջն Ախպարիտ  
 զեղբայրն Ռընաղտին . զի պահէն զաշխարհքն ՚ի

Թշնամեաց :

Ի Թուին ն՛ղը գրեաց Մոնոմախն առ ՆՂԸ.  
 Կաթուղիկոս տէր Պետրոսն , և կոչեաց զնա :  
 Այլ նա զսուրբ մեռոնն 'ի գիշերի հանեալ՝ եր-  
 կաթէ ամանովք Թաղեաց 'ի գեան , որ չգար-  
 տակէին եկեղեցիք Հայոց 'ի սուրբ ձիթոյն . և  
 ինքն գնաց ազատօք տանն իւրոյ երէք հարիւր  
 մարդով և եպիսկոպոսօք , և 'ի մտանել նորա՝  
 գղրղեցաւ քաղաքն ամենայն 'ի հանդիպումն նորա .  
 և մեծ փառօք տարան զնա 'ի սուրբն Սոփի . և  
 եկին առ նա Թագաւորն և պատրիարքն . և  
 հրամայեաց իջուցանել զնա յաղուոր տուն . և  
 տալ ծախք յամէն աւուր 'ի պէտս նոցա : Օր  
 մի գնաց սուրբ հայրապետն առ Թագաւորն : Այլ  
 ելաւ Թագաւորն 'ի յոտն նմա , և նստուցանէր  
 զնա 'ի յաթուռ ոսկի : Այլ երբ ելաւ տէր  
 Պետրոս , էառ զաթուռն տէր Աղիսէ . և ճոր-  
 տերն չթողէին . և չկարացին առնուլ 'ի նմանէ :  
 Օր հարցաւ Թագաւորն ցտէր Աղիսէ . և նա  
 ասէ՝ ո՛վ Թագաւոր , Աթու հայրապետական  
 է , չէ՛ պարտ նստիլ 'ի վերայ այլ մարդ : Այլ  
 Թագաւորն հրամայեաց Թողուլ : Այլ օր աւուր  
 փառօք տեսանէին զնա . կեցաւ ամիսս չորս . և  
 դարձաւ 'ի Հայք մեծ պատուով :

Ի Թուին ե՛ճք եղաւ սքանչելիք յՆստիոր . ԸԲ .

քանզի էին անդ Մտորիք շատք բնակեալք ոսկեալ և արծաթով . և յամէն ժամ կնկով և տղայով զարդարած երթային յեկեղեցին յօրս տօնից : Օչարեցան Յոյնքն ընդ նոսա . և այր մի Մտորի հրապուրեալ 'ի Յունաց՝ եղև 'ի կրօնս նոցա . և սկսաւ չարախօսել զազգէն իւր , թէ չունին ուղղափառ հաւատս և դաւանութիւն՝ զոր ունի կաթուղիկէ եկեղեցի : Այլ վասն այս նախանձու միաբան պատրիարզն ազգօքն հրամայեաց զաւետարանն Մտորուց հրով այրել . և յորժամ ձգեցին 'ի հուրն , ձայն դայր 'ի յաւետարանէն , և թուչեր 'ի կրակէն : Իսկ նոքա յանդնեալ երկու անգամ ձգեցին զաւետարանն 'ի հուրն . և դարձեալ ողջ ելանէր 'ի հրոյն : Աս՝ երեք անգամ արկին կատաղի լրբութեամբ . և յերեք անգամն այրեցաւ աւետարանն : Այլ իբրև այրեցաւ , դարձաւ պատրիարքն մնորդովն յեկեղեցին սուրբ Պետրոս . գօչեաց յեկեղեցին 'ի ձայն մեծ , և դղրդեաց քաղաքն ամենայն : Իսկ միւս օրն անկաւ հուր յերկնից 'ի վերայ եկեղեցւոյն սրբոյն Պետրոսի , և այրեցաւ 'ի հիմանէ քարն . և պատուեցաւ խորանն , և զսուրբ սեղանն տարաւ յանդունդս՝ զոր կազմեալ էր ոսկով մեծն Կոստանդիանոս , և այլ չկարացին դանուլ : Ըրդ յորժամ այս եղև բեկեցան քաղաքացիքն . և

սկսան արթնել առ Մատուած : Այլա պատրի-  
արքն քահանայիւք և ժողովրդօք , շրջէր 'ի  
քաղաքն արթնելք . և զհետ գնացին 'ի մէյտանն .  
ուր փոքր կամուրջն էր . յանկարծ գոչեաց գե-  
տինն , և շարժեալ 'ի կէս օրն՝ պատառեցաւ  
գետինն , և եկուլ զպատրիարքն և բիւր մի  
'ի մարդկացն . և հնգետասան օր գայր ձայն նոցա  
'ի յանդնդոց . և ապա կնքեալ երկիրն՝ անշքն  
չացոյց զնոսա :

Ա թուին ե՛ճգ շարժեցաւ Տօղրիւ Սուլ ԸԳ.  
տանն Պարսից , և եկն շատ զօրօք 'ի հայք՝ 'ի  
քաղաքն Ռերկրի , և հաւ զնա : Այն ապա յՆր  
ձեշ , և յոյժ նեղէր զքաղաքն ութ օր . և քա-  
ղաքացիքն շատ ընծայիւք ուզեցին զհնազան-  
դութիւն . և հաւանեցուցին զնա նախ առնուլ  
զՄանձկերտ : Այլ նա գնաց բնակեցաւ 'ի տե-  
ղին՝ որ Քար գլուխ ասի . և պատեալ զքաղա-  
քն՝ նեղէր կուուլ : Այր գլխաւոր քաղաքին՝  
պարոն Ասիւ որդի Մարգարայ , այր քաջ .  
և սկսան փորել զհիմն քաղաքին : Օ որ իմացեալ  
բրիտոնեկցն՝ փորեցին դէմ՝ նոցա . և կալեալ  
զնոսա սպանին : Մա զայրացեալ Սուլտանն .  
յղեաց զօրս 'ի Ռաղէշ , և ետ բերել զմեծ  
բարանն՝ զոր Ասիւ կայսրն վասն քաղաքին  
հերայ էր շինեալ , և եդեալ անդ հնգետա .

սան օղիւ՝ ահաւոր բարձրութեամբ . և յորժամ  
 կանգնեցին, դողաց քաղաքն յահ նորա : Յայնժ  
 ամ երեց մի գտաւ թէզմ՝ ՚ի քաղաքն փոքր  
 բաբան մի , և կանգնեաց ընդդէմ նորա . և  
 առաջին քարն եղարկ զնա ՚ի խողակն և եբեկ .  
 և զօրացան քաղաքացիքն : Ապա յետ աւուրց  
 այլազգիքն նորեցին զբաբանն . և սկսան հարկա  
 նել զպարիսպն մեծամեծ քարովքն . և զարհու  
 րեցաւ քաղաքն : Յայնժամ ձայնեաց սարոն Ա ա  
 սիւլ ՚ի քաղաքն՝ թէ ո՛վ ելնէ և այրէ զբաբանն,  
 նա տամ իւրեան շատ ոսկի և արծաթ , և ՚ի  
 թաղաւորէն փառս և իշխանութիւն . և թէ  
 ինքն մեռանի , որդիքն և ազգն ժառանգէն զխոս  
 տումն : Այլ եկն յառաջ Ֆռանկ մի և ասաց .  
 ես այրեմ զնա . և զարիւն իմ հեղում վասն  
 քրիստոնէից , զի ես չունիմ զոք որ լան զիս :  
 Այլ ետուն նմա ձի աղուոր և զրեհ և սաղաւարտ .  
 և հեծաւ և կապեաց յինքն Փաթ երեք շիշ .  
 և կապեաց թուղթ ՚ի ծայր ըւրմիւին . և խընդ  
 րէր աղօթս յամէնէն . գնայր ՚ի վերայ այլազ  
 գեացն . և նոքա գիտէին՝ թէ թղթաւոր է . և  
 չխօսեցան ընդ նա : Այր ժամն կէս օր և շող .  
 և ամենայն արք պատերազմին ննջէին ՚ի խորանս  
 իւրեանց . և երեկ Ֆռանկն առ բաբանն . և  
 նոքա կարծէին՝ թէ ընդ մեծութիւն նորա հիա

նայր : Ալ եհան զմէկ շիշն , եղարկ 'ի բաբան .  
 և շոյտ շուրջ առեալ զնովաւ՝ հարկանէր զեր-  
 կրորդն և զերրորդն . և վառեցաւ բաբանն բո-  
 լոր : Ալ Ֆուանկն դարձաւ 'ի փախչել , և ամե-  
 նայն բազմութիւն զօրացն 'ի հետ , և անկաւ  
 անվնաս 'ի քաղաքն . և ետուն նմա ինչս բազու-  
 մըս : Մոնումախն լուեալ՝ տարաւ զնա 'ի Աոս-  
 տանդնուպօլիս . և ետ նմա իշխանութիւն մեծ :  
 Իսկ Սուլտանն զարմացաւ ընդ գործ Ֆուանկին .  
 և ուզէր պարօն Ասալէն՝ զի տեսցէ զնա . և  
 մեծ երդմամբ խոստանայր տալ պարգևս նմա .  
 և պարօն Ասալին չկամեցաւ տալ : Այս սկսան  
 փորել ներքև պարսպին . և քաղաքացիքն դէմ՝ նո-  
 ցա փորեցին . և երկաթէ ճանկօք հանին 'ի դուրս  
 և սպանին : Ալ աւին խող մի՝ դրին 'ի բաբանն  
 և ձգեցին 'ի բանալն . և ձայնեցին 'ի Սուլտանն  
 և ասէն . պսակուէ՛ ընդ խողդ , և տամք զՄանծ-  
 կերտ պռոյգ քեզ : Ալ նա եղաւ ամօթով , և  
 սպան զբերողն . և գնաց յաշխարհն իւր :

Ի թուին շի մեռաւ Մոնումախն և թաղաւ ՇԳ.  
 ւորեաց քենեկալն իւր Աէու թափուսն . և կեցաւ  
 թաղաւոր ամս երկու և ամիս երեք , և մեռաւ . և  
 նստաւ թաղաւոր Միխայլ ալեորն : Ալաւ յայսմ՝  
 ամի իշխան ոմն հակառակ Միխայլին . և էառ  
 ջօրօք զԱոստանդնուպօլիս , և թաղաւորեաց . և

յետ քիչ ժամու յղարկեր և բերեր զՏուկն  
Ուրհայու զՏուկիծն, և եդիր Թագաւոր. և ինքն  
միակեաց եղաւ :

ԸԵ. Ի Թուին ե՛՛ճե փոխեցաւ առ Քրիստոս  
կաթուղիկոսն տէր Պետրոս, կացեալ յաթուն  
ամս երեսուն և երկու. եդիր կաթուղիկոս զտէր  
Խաչիկն :

Յայսմ ամի ելաւ ամիրայ մի Ղինար անուն. և  
եկն աւերեաց զքաղաքն Մեղիսի. և էառ  
շատ գերի և գանձ. և եկն ձմերեաց 'ի Հան-  
ձիթ : Իսկ 'ի լինել գարնան՝ զնաց 'ի գաւա-  
ւըն Տարոնոյ. և իջան առ ստորոտով Տորոսի  
մերձ 'ի Սասունք : Տեսաւ զայն իշխանն Հայոց  
պարոն Թուոնիկ, որդին պարոն Մուշեղայ. և  
զօրօք հասանէր 'ի վերայ այլազգեացն. և խառ-  
նեցան յերար : Յայնժամ համբարձ քաջն Թուո-  
նիկ զաչս իւր 'ի վանք սուրբ Արապետին և ա-  
սէր. Ղլակայ (\*) վանից սուրբ Արապետ,  
հասիր յօգն մեղ, և արն զօրս զայս երևելիս  
'ի վերայ հաւատացելոցս 'ի քեղ : Այլ քաջա-  
պէս վարեաց զնոսա Մատուծոյ կարողութեամբն,  
և կոտորեաց յոյժ. և էառ զառ և զգերու-  
թիւնն քրիստոնէից. և դարձաւ ուրախութեամբ :

(\*) Ի ձեռագրին. ԱԼՄ ԱԼՄ :

Ի սոյն ամի 'ի ձմեռն երեկ խիստ ձիւն վաթս  
սուն օր յամենայն տեղիս . գիշերն գայր՝ ցերեկն  
հալէր . և էր ջուրն կարմիր և լեղի : Այլ յայս  
սաստէս եղև սով վայրի անասնոց և թռչնոց , և  
չգտանէին կերակուր . և նեղեալք 'ի սովոյն՝  
դիմեցին ամէնն 'ի մարդիկ և 'ի շէնս . և նոքա  
անխնայ կոտորէին զնոսա : Իսկ ողորմածքն կերա-  
կրէին զնոսա 'ի տունս իւրեանց և արձակէին . և  
ամենայն մարդ 'ի գութ ողորմութեանն շարժէր  
'ի վերայ նոցա : Այլ տէրն՝ Ափրկերտոյ մեծ Ամի-  
րայն՝ Ստրտօրն յամէն օր հրամայէր քառասուն  
քուրճ ցորեն , և քառասուն դարի , և քառասուն  
կորեկ , և շատ խոտ և յարդ ճապղէր 'ի վերայ  
դաշտաց . որ ուտէին թռչունք և անասունք :  
Այլ յայս տարիս եղև սով սաստիկ ընդ ամենայն  
երկիր վասն զի 'ի պակասութէնէ ձմռանն չկա-  
րացին ցանել :

Ի թուին շը շարժեցաւ ամենայն տունն Պարս  
սից . և շատ զօրօք դային 'ի վերայ քրիստո-  
սէից . և շատ գաւառս 'ի սուր և 'ի գերութիւն  
մասնեցին 'ի Հայոց . և եկին 'ի Սևաստ : Իսկ  
որդիքն Սենեքերիմայ պարօն Ատոմ և Ապու-  
սահլ յառաջ իմացան զգալն , փախեան 'ի Խա-  
ւատանէքն . և Տաճիկքն յառաջ չհամարձակեցան  
մտնուլ 'ի քաղաքն . զի հեռու տեսանէին սպի-

ԸԸ.

տակ զգուժեցէ թա եկեղեցեացն . և կարծեցին՝ թէ վրանք զօրացն Յունաց է : Իսկ յորժամ խմացան՝ թէ դատարկ է քաղաքն՝ ՚ի զօրաց, բոլորապատեցին՝ և սրով կոտորեցին զբազմութիւն քաղաքին : Ըրբ և կանայք պատուականք, քահանայք և սարկաւազք անկեալ ՚ի մէջ արեանցն, յապաժոյժ թաւալէին . և ոչ ոք ողորմէր, կամ ծերի խնայէր . այլ գիզեալ կային իբրև զփայտ կոտոր, և ամենեքեան թաթախեալ յարեան ճապաղիս : Հրով այրեցին զքաղաքն, և նստան ՚ի նմա ութ օր . լցան անչափ գանձով և աւարաւ, և անհամար գերութեամբ գեղեցկատեսիլ աղջրկանց և մանկանց :

Եւ ո՞վ կարէ պատմել զանցսն՝ որ անցին ընդ քրիստոնեայքն յազգացն Սահմետի յանտիրութենէ և ՚ի չար ազգէն Յունաց . որ ըստ իւրեանց չար և անբարի բնութեանն խաւարածին Հայոց ազգին : Քանզի շատ ջանիւ քակեալ հանին յաշխարհէն Հայոց զյաղթող թագաւորսն, որք արիական ջանիւ հալածէին զգունդս անօրինացն, որպէս բազա զերամն կաքաւուց . և փոխանակ նոցա կուտակալք և գաւառապետք զՎըրտերն սահմանեցին ՚ի տեղ քաջացն Հայոց . և այլ չխոկային դորժ քաջութեան կամ պատերազմի : Իսայց թէ քաջ զօրական գտանէին ՚ի

Հայոց, զաչքն հանէին. և իւրեանք, որպէս տը  
 կար շունք՝ որ չկարեն պահել զհօտ՝ ի գայլոցն՝  
 այնպէս փախչէին և թողուն զաշխարհն՝ թըշ-  
 նամեացն՝ յաւար և ՚ի գերութիւն. որ ՚ի մէկ  
 տարին հասան մինչ ՚ի դուռն Արասանդուսուսի.  
 և առին զամենայն քաղաքսն ծովեզերովն և զկըզ-  
 զիս նոցա. և արարին զնոսա զէտ զընտանաց ՚ի  
 Արասանդուսուսիս: Այլ յիրաւի կրէին զայս. զի  
 փոխան զրեհիցն՝ զոր կուռող քաջքն հագնէին,  
 նոքա զծոցս և զստորոտս և զթեզնիս հալաւին  
 մեծացուցանէին. և փոխան սաղաւարտիցն՝ զծայր  
 գտակացն սրացնէին. և փոխան արանց պատերազ-  
 մողաց՝ զՎրտերն հռոգէին. և սկսան ուտել  
 և ըմպել. և սուտ հաւատոյ քննութիւն առնել  
 ընդ ամենայն ազգս. և բարձրամիտ հպարտացեալ՝  
 զամենայն ազգս քրիստոնէից ատեցին զէտ ան-  
 հաւատ. և սուտ անուամբ զարդարեցին զանձինս՝  
 ատելով զքրեական անունն, որ կոչի Յոյն, և  
 առեալ ՚ի վերայ իւրեանց զանուն Հռոմայ՝ կո-  
 չին Հռոմ. և փոխան զինուք զթշնամիս հար-  
 կանելոյ, զլեզուս սրեալ՝ զազգս քրիստոնէից սկսան  
 աղճատել. և զիւրեանք միայն կարծեն քրիստո-  
 նեայս. և այսպէս չար կամօք նոցա մատնեցան ա-  
 մենայն հաւատացեալք ՚ի սուր և ՚ի գերութիւն:

Օայսու ժամանակաւ խորհեցաւ Տուկիծն

խափանել զհայրապետութիւն յազգէն Հայոց, զոր  
արարն իսկ. և տարաւ զկաթողիկոսն զտէր խաչիկն  
յետ մահուան տէր Պետրոսի հանդերձ եպիսկոպոսօք:  
Խնդրէին 'ի նմանէ զգանձն տէր Պետրոսի . և պահեցին  
յաքսորս երեք տարի: Յարուցանէր հալածանս քրիստոնէից .  
և առնէր քրննութիւն հաւատոյ . և կամէր ամենայն ջանիւ  
դարձուցանել զՀայոց քրիստոնեայքն 'ի դաւանութիւն  
Քաղկեդոնի: Յայնժամ թագաւորն Հայոց Պագիկ,  
և որդիք Սենեբերիմայ Լտոմ և Լպուսահլ . և իշխանքն Հայոց, գունդ  
հեծելոց գործեալ՝ հանին զկաթողիկոսն զտէր խաչիկ .  
և նստուցին յաթու հայրապետութեան 'ի թաւբլուր .  
'ի սահմանս Կոկիսոնի . և կացեալ էր անդ ( 'ի  
Կոստանդնուպօլիս ) ամս երեք:

ՇԺԱ. Ի թուին շիա գայ հրամանօք Տօղրիւ Սուլ  
տընայ Պարսից՝ զօրագլուխ մի՝ զօրօք . և հասեալ  
'ի դաւառն թըլխմոյ և Լըկնի, արարին անթիւ  
կոտորուածս . և առին շատ գերի:

ՇԺԲ. Ի թուին շիգ Լբասլան Սուլտանն եկն  
շատ զօրօք 'ի վերայ քաղաքին Լնոյ, և պատեաց  
զնա շուրջանակի: Քաղաքացիքն ելին ընդդէմ  
նոցա 'ի կռիւ . և անօրէնքն բազմութեամբ  
յաղթեալ՝ դարձուցին (զնոսս) յետս և

արգելին 'ի քաղաքն . և 'ի յամեւ կռուոյն բեկեցան (քաղաքացիքն)՝ ոչ ունելով օգնութիւն ուստեք . միայն յաղօթս ապաւինեալ՝ զԱստուած խնդրէին յօգնութիւն . և էր քաղաքն լցեալ բազում ամբօխիւ . և բաբնօք փլուցին զպարիսպ քաղաքին , և չկարացին մտնուլ 'ի քաղաքն . խորհեցան դառնալ 'ի յետս : Իսկ իշխանքն զոր դրեալ էին պահապանք քաղաքին , պարոն Սըմբատ հայր Բագրատայ , և պարոն Ղարիգոր որդին Բակուրնայ , սկսան ամրանալ 'ի կլայն . և Սուլտանն և զօրքն կամեցան գնալ : Իսկ քաղաքացիքն յամրանալ իշխանացն՝ բեկան . և ամենայն ոք 'ի փախուստ դարձաւ . և գլխաւորք քաղաքին անկանէին 'ի վերայ հողոց թագաւորացն , լային դառն զանտիրանալն իւրեանց : Աւիմացան անօրէնքն , դարձան յետս , և մտան 'ի քաղաքն . և գաղանաբար յարձակեալ՝ սրով սկրսան կոտորել զամենեւեան . և առին գերի զկին և զտղայս . և լցան աւարաւ . ձգեցին զմեծ խաչքն 'ի գմբեթէն 'ի վայր . ձգեցին զպլօր կանթութիւն՝ որ էր կախած 'ի մէջ եկեղեցւոյն , և լուսեցաւ , զոր բերեալ էր Սմբատ տիեզերակալն ընդ բիւր մի ոսկի դեկանի . և ունէր կշիւս երկոտասան լիտր : Յորժամ ձգեցին զխաչն , եղև որոտումն և անձրև յոյժ , և ելից զգիակունս կո-

տորածին 'ի գետն, և մաքրեաց յարենէ զքաղաքն : Իսկ Սուլտանն յոյժ ամսոսեաց զկոտորիւ կանթեղին, զի էր կարի գեղեցիկ : Այլ զխաջն տարան 'ի Վասիջուան, դրին առաջի դրան մըզքթին . և որ մտանէր և ելննէր՝ կոխէր զնա :

Ի ժամանակին յայնմիկ էր Ղազիկ 'ի Վարս . և յուզարկեաց առ նա Սուլտանն գալ 'ի հնազանդութիւն : Այլ էր Ղազիկ իմաստուն, խորհեցաւ զերծանել 'ի նմանէ խաղաղութեամբ . հազաւ զրահ սե՝ զէտ սգաւոր, և նստաւ 'ի վերայ սե բարձի : Այլ երբ տեսաւ զնա դեսպանն, հարցաւ և ասէ . Թէ դու Թագաւոր ես, է՞ր ես սե հազեր : Այլ ասէ Ղազիկ . յորմէ հետե մեռաւ բարեկամն իմ Տօղրիւ Սուլտանն, եղբայր Աբասլանայ, ես սե եմ հազեր . քանզի խիստ սիրեաք զիրար : Այլ զարմացեալ դեսպանն՝ երթեալ պատմեաց Սուլտանին . և նա լսեց և հեացաւ յոյժ . և սիրեաց զՂազիկ վասն բարեկամութեան եղբօրն . և ելաւ ամէն հեծելովն՝ եկն 'ի Վարս առ Ղազիկ 'ի տես . և արար ընդ նա սէր և ուրախութիւն մեծ . և հազոյց նմա հալաւ Թագաւորական : Այլ արար Ղազիկ պատիւ Սուլտորնայ և զօրաց նորա : Օպայ՝ այս ցեղ արար Ղազիկ . և զերծաւ խաղաղութեամբ :

Օկնի սակաւ աւուրց դարձոյց Ղազիկ զՎարս

'ի Յոյնս . և նորքա տվին նմա զՍամնդաւ և  
 զՂաուի (\*) և զՍաւատանէքն : Արդ այսպէս  
 քանդեալ տապալեցաւ տունն Հայոց . և կատա-  
 րեցաւ առ մեզ բան մարգարէին՝ որ ասէ . եր-  
 կիր ձեր աւերակ . քաղաքք ձեր հրձիգ . զաշ-  
 խարհ ձեր առաջի ձեր օտարք կերիցեն : Աւ-  
 զնոյն բանս ասաց երանելի կաթողիկոսն սուրբն  
 Ներսէս , յորժամ անէծ զԱրշակ և զորդին  
 զՊապ : Սա այսպէս անիծեաց , թէ մի սակա-  
 սեսցէ լուծ ծառայութեան 'ի պարանոցէ ձերմէ  
 հանապազ . զվայելուչ աշխարհ ձեր առաջի ձեր  
 օտարք կերիցեն . և հարկ տան որդիք որդւոց  
 ձերոց՝ անօրինաց : Այս ամենայն վասն չար գոր-  
 ծոց իւրեանց . զի շատ խրատէր զնոսա . և նորքա  
 ոչ լսէին : Սա տրտմեալ՝ անէծք եհան . և  
 յիւր փոխումն առ Քրիստոս՝ պատմեաց զինչ  
 գալոց էր 'ի վերայ աշխարհին արեւելից . և կը-  
 րեցաք զայս կորուստ վասն մեղաց մերոց՝ 'ի  
 թոյլ տալոյ կամացն Աստուծոյ :

Ասոյն ամի մեռաւ կաթողիկոսն տէր Սա-  
 չիկ . և Պապիկ եդ կաթողիկոս զտէր Սա-  
 ռամ . այր սուրբ և գիտնական : Սա է՝ որ  
 Պրեդոբրիս վկայասէր կոչեցաւ :

(\*) Ի ձեռագրին . զՍամնդիս :

Յայսմ ժամանակի թագաւորն Յունաց Տու-  
 կիծն, և պատրիարքն Յունաց և ամենայն կլէ-  
 րիկոսքն, խորհուրդ արարեալ խորհէին եղծա-  
 նել և բառնալ զկարգս և զաւանդութիւնս Հա-  
 յոց եկեղեցեաց. և առաքեն 'ի Սեաստ՝ և կո-  
 չէն զորդիս Սենեքերիմնայ զԼ'տոմ և զԼ'պու-  
 սասլ 'ի Կոստանդնուպօլիս: Եւ նոքա ծանու-  
 ցեալ զնենդութիւն նոցա, և առեալ ընդ իւր-  
 եանս զվարդապետն Յակոբ Քարաբնացի՝ զնա-  
 ցին 'ի Կոստանդնուպօլիս: Յառաջ պատուով  
 ընկալաւ զնոսա թագաւորն. և զկնի աւուրց սկը-  
 սաւ յայտնել զչար խորհուրդն, և ասէ. հրա-  
 մայէ թագաւորութիւնս մեր, զի դուք և ամե-  
 նայն իշխանք Հայոց առնուք յանձն զմկրտութիւն  
 Յունաց ազգին: Նոքա պաշարեալ 'ի մեծ տա-  
 րակուսի՝ ասեն ցթագաւորն. մեք առանց Ղազ-  
 կայ որդւոյ Լ'շոոոյ ոչ կարեմք տալ պատաս-  
 խանի, զի այր քաջ է, և թագաւոր և փեսայ  
 մեր, առաքեան և կոչեան զնա. զի թէ առանց  
 նորա առնեմք զայս, հրով այրէ զմեզ և զազ-  
 գըն մեր: Թագաւորն չկամեցաւ զայս առնել,  
 քանզի հզօր էր Ղազիկ. 'ի գիտութիւն իմաս-  
 տից. իսկ Լ'տոմ և Լ'պուսասլ յղեցին 'ի ծա-  
 ծուկ և իմնց արարին Ղազկայ: Եւ թագաւորն  
 Տուկիծ արար քննութիւն ընդ վարդապետն Յա-

կորք . և լսեց 'ի նմանէ շատ պացխուն (\*),  
 բայց սակաւ մի առակաւ յաղաղս երկու բնու  
 թեան՝ որ ասէին ունեւ Քրիստոսի, 'ի կողմ  
 Յունաց դարձաւ : Աւ ընդ ամենայն բանս նորա  
 հաճեալ թագաւորն, հրամայեաց այնր 'ի վե  
 րայ՝ գրել զգիր միաբանութեան ընդ Հայք  
 և ընդ Յոյք . և ետ դնել զգիրն 'ի սուրբ  
 Սոփի . որպէս թէ միաբան եղեն Հայք և Յոյք :  
 Աւ նոյն ժամայն որպէս զարծիւ հասաւ Ղազիկ  
 'ի Արստանդնուպօլիս . և լուեալ թագաւորն՝  
 ուրախացաւ յոյժ : Մտաւ Ղազիկ առ թագա  
 ւորն Տուկիծ . և նա ետ բերել զգիր միաբա  
 նութեանն . զոր երբ կարդաց Ղազիկ, պա  
 տառեաց և ձգեաց առաջի թագաւորին . ընդ  
 որ յոյժ ամնչեաց Տուկիծ : Աւ ասէ Ղազիկ  
 ցՏուկիծն . ո՛վ թագաւոր, այսպիսի արք բա  
 զում կան յաշխարհին Հայոց, և ոչ ունիմ  
 զնոսա ընդ վարդապետս . և շատ բանիւ յանդի  
 մննեաց զվարդապետն, և ասէ . ընդէ՞ր այս  
 պէս իշխեցեր խօսել ընդ ամենայն Հայոց : Աւ  
 ասէ ցթագաւորն . » ո՛վ արքայ, ծանի՛ր, զի ես  
 որդի եմ թագաւորացն Հայոց, և եմ թագա  
 ւոր Հայոց . և ամենայն Հայք հնազանդեն ինձ .

(\*) դուրեք պարսպապահ :

և ամենայն հին և նոր կտակարանաց հմուտ եմ . այսօր խօսիմ ընդ Յունաց վասն ուղղափառ դաւանունս սուրբ Արրորդութեանն , և մարդեղութեանն Քրիստոսի , ըստ դաւանութեան սուրբ հարցն» . և բազում բանիւ հաւանեցոյց զԹագաւորն և զպատրիարքն , և արարին սէր : Այլ շատ իբր օժտեաց Տուկիծն՝ Ղազկայ , և որդւոցն Սենեքերիմայ , և ամենայն իշխանացն Հայոց . և փառաւորեցաւ Ղազկիկ ընդ ամենայն վարդապետաց տանն Հայոց :

Յայսմ ժամանակի պայծառանայր գիտութեամբ սուրբ և ճոխաբան վարդապետն Ղարիգորինս՝ Նարեկացին :

Յայնժամ ելաւ Ղազկիկ ՚ի Թագաւորէն , և գայր զայրացմամբ . և ընդ որ անցանէր՝ խայտառակեւ տայր զփառաւոր կանայս և զաղջկունս Յունաց . և զգանձ նոցա խլէր . քանզի եդ ՚ի մտի բնաւ չմտանեւ ՚ի կոստանդնուպօլիս . և ոչ գնաց ՚ի կոչն Յունաց , այլ խորհեցաւ գնալ առ Աբասլան Սուլտանն Պարսից , և տիրանալ աթուոյ Թագաւորութեան իւրոյ , որպէս և կոչեալ էր զնա շատ անգամ . և նա վասն Քրիստոսի հաւատոցն արգելէր :

Այր յաւուրսն յայն մետրապօլիտ մի ՚ի Արարիա՝ Սարկոս անուն՝ յոյժ անուանի և փարթամ , և հայհոյիչ աշխարհիս Հայոց : Նա

շատ աղձատէր զհայերն, և այնչափ՝ մինչ զի  
 շանն անուն տրմէն էր դրել: Իսկ Թադաւորն  
 Ղազիկ գիտէր զչարիս նորա, և սպասէր դի-  
 պող ժամն՝ առնել չար գործոց նորա փոխա-  
 րէն. և յորժամ եկն 'ի Կեսարիա, էառ իջէ-  
 վանք 'ի տուն Սարկոսի. և Սարկոս ընկալաւ  
 զնա ուրախութեամբ յոչ կամաց: Իբրև ճաշե-  
 ցին՝ և ուրախացան 'ի գինի, ասէ Ղազիկ  
 ցՍարկոս. լսել եմ՝ թէ մեծ շուն ունիս, և  
 կամիմ տեսնուլ զնա: Չայնեաց մետրապօլիտն  
 զշունն, և ասէ. արմէն արմէն. և եկն շունն:  
 Եւ ասէ Ղազիկ. արմէն է անուն շանդ: Ըսէ  
 Սարկոս. վասն բազում զօրութեանն կոչեմք  
 զնա արմէն: Եւ ակնարկեաց Ղազիկ զինուո-  
 րացն. և նոքա կալան զշունն և ածին 'ի քուրձ  
 մի՝ զոր յառաջ էին սարել: Տեսեալ զայն Սար-  
 կոս՝ բարկացեալ խէր զշունն: Եւ քրմ-  
 ծաղրեալ Ղազկայ՝ հրամայեաց բռնել զշուն  
 Սարկոսն, և ածել 'ի քուրձն ընդ շանն.  
 Եւ նոքա արարին այնպէս. կապեալ զբերան  
 քրձին՝ սկսան դալար փայտօք ծեծել զշունն.  
 և շունն բարկացեալ՝ լափէր զՍարկոս, մինչև  
 սատակեաց զնա: Եւ հրամայեաց (Ղազիկ)  
 Թաղթնել զտունն, և էառ զգանձս նորա՝ զարծաթ  
 և զոսկի, և զանասունս և զձիս և զջորիս. և զնաց

ի տուն իւր : Օչ այս այսպէս իշխեաց գործել  
Թագաւորն Հայոց Վազիկ ՚ի մէջ Յունաց .  
և ոչ գնաց ՚ի Յոյք , և ոչ ՚ի կոչն նոցա :

Արդ յաւուրս Վազկայ Շահնշահի արքայի  
Հայոց , եղև նշան զարմանալի վասն սուրբ խորհրդոյն ՚ի վանքն Պիզու , զոր շինեաց Վազիկ  
արքայ Հայոց . զի յաւուր սուրբ Պենդակոս  
տէին մասն ՚ի սուրբ խորհրդոյն անկեալ էր առ  
աջի սուրբ սեղանոյն անդիտութեամբ . և միւս  
օրն տեսին երազ ՚ի գիշերի երկու արժանաւոր  
կրօնաւորք . և եկին յառաջ քան զհարցն՝ ասեն  
հօր վանացն և ամենայն սուրբ եղբարցն զպատմ  
մութիւն երազին : Ոմն ասէր . « տեսայ զկան  
Թեղն որ կախեալ կայ ՚ի գումբէթ եկեղեցոյն՝  
զի անկեալ էր առաջի սուրբ սեղանոյն , և մնաց  
անշիջանելի լոյսն ՚ի նմա » : Մէկ այլն ասէր .  
« տեսայ՝ զի աստղ մի մեծ անկեալ էր յերկնից  
առաջի սուրբ սեղանոյն , և լոյսն առաւել բոր  
բոքէր ՚ի նմա » : Օարմացան ամենեքեան . ապա  
և հայր Սանացն գիտաց հոգւովն և ասէ .  
« տեսէք , մասն է անկեր առաջի սուրբ սեղանոյն » .  
և նոյն ժամայն մոմեր վառեցին . և աւեալ դու  
ղալով՝ գոհացան զՍտուծոյ :

ԸՃԶ. Ի Թուին շիջ մեռաւ Թագաւորն Յուն  
նաց Տուկիծն . և մնաց նորա որդի մի Միկայլ

անուն . և եկաց աթոռն տարի մի անթագաւոր .  
 և թագուհին՝ որոյ անունն էր Աւդոքսիայ՝ յեա  
 մէկ տարւոյ յոր ինքն ունէր զթագաւորութիւնն,  
 եբեր 'ի ծածուկ իշխան մի՝ անունն Ռամանոս .  
 և մականունն Տիոժէն . և ամուսնացաւ ընդ նա .  
 և պահեաց զնա 'ի սենեկին . և կոչեաց զԱի  
 սառոսն զեղբայր Տուկիծին . և ասաց փորձելով .  
 »զինչ արասցուք , զի աթոռ թագաւորութեանս  
 անտէր կայ , և Մ'իխայլն տղայ է » . և պատ-  
 ըողական բանիք կամէր կորուսանել զնա : Ասէ  
 Աիսառոսն » ինձ զինչ փոյթ է այդ . զի ես և որ-  
 դէք իմ ծառայ քո եմք . և դու քո կամօք ում  
 կամիս՝ տաս զթագաւորութիւնդ » : Ա զարմացաւ  
 թագուհին ընդ իմաստութիւն նորա . ասէ »արի  
 մուտ 'ի սենեակն , և երկիրպանգ թագաւորին » :  
 Անա մտեալ երկիրպագանէր , և գոհանայր  
 զՏեառնէ . չխօսեցաւ հակառակ նմա : Ան վա-  
 ղիւն տարեալ զՏիոժէնն 'ի սուրբ Սոփի՝ օծեցին  
 թագաւոր բազմամբոխ ժողովով :

Յայսմ ամի շարժեալ Աբասլան Սուլտանն՝  
 ահագին զօրօք գայր հասանէր 'ի վերայ քաղա-  
 քին Մանձկերտոյ . և չկայր պահօղ : Աս 'ի  
 մէկ օրն էառ զնա . և կոտորեաց զամենն վասն  
 առաջին հայհոյութեան եղբօրն իւր Տօղրիւ  
 Սուլտընայ : Ան ելաւ անտի և երեկ յԱմիթ .

և սիրով բնակեցաւ 'ի դուռն քաղաքին . և ծնաւ  
կին նորա որդի . և կոչեաց զանունն նորա Ղու  
դուշ . և գայր հասանէր մինչև 'ի սահմանս Ուու  
հայոյ . և բազում քաղաք և բերդեր էառ :

Յայսմ ամի զգեցաւ Տիոփէնն զգեստ արեւ  
դայի . և ըմբռնեալ զնա Յունաց՝ փորեցին  
զաչնն : Աւ նստաւ Թագաւոր Մեխայլն՝ որդի  
Տուկիծին . և եղև այր բարի՝ ողորմած և Աս  
տուածասէր, կեցեալ Թագաւոր ամն չորս : Աւ ու  
խացեալ ատէր զնա Թագուհին վասն մարբութեան  
վարուց իւրոց , զի էր պարկեշտ 'ի ցանկութիւն  
մարմնոյ . և առվացեալ յիշխան մի՝ որում ա  
նուն էր Առտոնիատ՝ ( \* ) յարուցանէր զնա 'ի  
վերայ Մեխայլին , ընդ նմին և զամենայն Արս  
տանդնուպօլիս . զոր երբ տեսաւ Մեխայլն չե  
կաց հակառակ նոցա , այլ՝ յայտնի անիծեաց  
զԹագուհին . և Թողեալ զԹագաւորութիւնն՝  
կրօնաւորեցաւ 'ի վանս ճգնաւորաց . և Թագա  
ւորեաց Առտոնիատն և էառ զկին Մեխայլին  
աղտեղութեամբ և պոռնկութեամբ . և գործե  
ցաւ այս 'ի շինէ :

ԸԻԶ. Ի Թուին շինգ մեռաւ կաթողիկոսն տէր

( \* ) Ի ձեռագր . ուրեք Ա ռիմիոս . և ուրեք՝ Ա ռ  
րիմիոս :

Ա՛սհրամ : Իսկ թագաւորն Ա՛ռտոնիատ մի տարի եկաց թագաւոր . և զղջացաւ յոյժ վասն նենգութեանն՝ զոր արար սուրբ թագաւորին Սիխայլին : Լ՛սպա նստոյց թագաւոր զԱ՛րեւսի անուն . և ինքն կրօնաւոր եղև :

Ի թուին շէր եղև սով սաստիկ ընդ ամե՛ ՇԻԸ.  
նայն աշխարհ հաւասար : Այլ այս՝ վասն թուրքին տարածելոյ եղև ընդ ամենայն երեսս երկրի . քանզի յաւերմանէ նոցա փախեալ ամենայն վաստակ երկրագործաց . և վասն այսորիկ տարածեցաւ սով ընդ ամէն երկիր . և ոչ գտանէին հաց , կամ հանգիստ . բայց միայն յԱւրհայ և ՚ի սահմանս Լ՛նտաքու և յաշխարհն Աիլիկեցոց : Որ և անդ դային յամենայն դաւառաց . և լցաւ մարդով զէտ մորեխ բազմախիտ . և արք և կանայք փառաւորք մուրային աղքատապէս , և ՚ի խիստ սովոյն մեռանէին . և լցաւ երկիր դիակամքք մեռելոց . և ոչ ոք թաղէր , քանզի լքան ՚ի շատութենէն . և մեռանէին ՚ի լերինս , և լինէին կերակուր գազանաց և թռչնոց : Այլ վասն մեղաց մերոց՝ այս եղև սկիզբն աւերման տանն արևելից :

Յայսմ ամի գնաց Պապիկ արքայ Հայոց հազար հեծելով ՚ի քաղաքն Տարսուս առ պարոն Լ՛սլղարիպ իշխանն յաղագս խնամութեան

բանի՝ կոչմամբ Ապղարիպին . և վասն պատ-  
 ճառի ինչ չեղև խնամունքիս : Այլ դարձաւ Պա-  
 գիկ մունչելով և բարկութեամբ . և ելեալ էջ  
 'ի դաշտն Արծիասու մերձ 'ի բերդն՝ որ կոչի  
 Արզիստուէ, զի էին բերդատերքն երեք եղբարք՝  
 Իշխանք Հոռութ՝ որդիք Սահտալէի : Այլ Պա-  
 գիկ թողեալ զզօրսն՝ մոլորեցաւ 'ի ճանապար-  
 հէն երեք մարդով . և ելան երեքեան առ նոսա :  
 Իսկ նոքա նենգութեամբ յառաջ քմին ձգեցին  
 յիսուն հեծեալ՝ Պագկայ : Այ յորժամ մերձե-  
 ցան 'ի բերդն, գային Իշխանքն 'ի բարև նմա .  
 և Պագիկ խոնարհեալ 'ի ձիոյն՝ կոչէր զնոսա  
 'ի համբոյր : Յորժամ մերձ եղէն 'ի համբոյր,  
 գրկեցին զվիզն Պագկայ, և քաշեցին 'ի ձիոյն  
 'ի վայր . և ելեալ որ 'ի քմին էին՝ բռնեցին  
 զՊագիկ, և ածին 'ի բերդն : Իմացան զայս  
 զօրքն նորա՝ և ցրուեցան : Յետ ութ աւուր  
 ժողովեցան 'ի վերայ բերդին ամենայն զօրքն  
 Հայոց, Պագիկ որդին Աբասայ, և ամենայն  
 ցեղն Անեքերիմայ, պարոն Ատով և պարոն Ա-  
 պուսասլ, և ամենայն Իշխանքն Հայոց . և շատ  
 օրեր պատերազմեալ՝ չկարացին առնուլ վասն  
 ամրութեանն : Իսկ Իշխանքն որ բռնեցին զՊա-  
 գիկ, չհամարձակեցան թողուլ զնա յահ նորա .  
 հայնց որ Ֆիլաուտոս տէրն Անտաբու գրեաց առ

նոսս՝ և ասէ . թէ »էր համարձակեցայք ընդ  
 թագաւոր մարդ գործել զայդ . ասպա թէ թո  
 ղոյք և թէ ոչ , կորուստ ձեզ գործեցիք :  
 Յայնժամ անօրէն իշխանքն խեղդեցին զթագա  
 ւորն հայոց զՂազիկ , և կախեցին ընդ պարիսպն  
 ՚ի վայր օր մի . և ասպա հանեալ թաղեցին զնա  
 դրուցն բերդին : Այլ մէկ մի Ռանիկ անուն՝ ա  
 սէին՝ գողացաւ զմարմին Ղազկայ և տարաւ ՚ի  
 քաղաքն և յազգն իւր : Այլ արարին կոծ մեծ  
 ՚ի վերայ նորա ազգն հայոց . և թաղեցին զնա  
 ՚ի վանքն Պիղու : Այլ մնաց իւր աւագ որդին  
 Յովանէս : Աստանօր խափանեցաւ թագաւորու  
 թիւն ՚ի տանէն հայոց և յազգէն Ռազ  
 ատունեաց :

Ի թուին եճլ ձեռնադրեցին կաթուղիկոս ՇԼ.  
 հայոց զարքեպիսկոպոս Անույ զտէր Ռարսեղ :

Ի թուին եճիս եղաւ շարժ սաստիկ ընդ ՇԽ.  
 սմենայն երկիր՝ յամենան Սեպտեմբերի , և  
 սրար շատ վնաս ՚ի Սճբին և յԱնտաք . և  
 բազումք սպանան ներքոյ տանն իւրեանց :

Ի թուին շիս եղև մահտարաժամ ընդ ՇԽԱ.  
 սմենայն երկիր . և ոչ կարէին թաղել զմե  
 լեալն : Այլ յորժամ սպանաւ Ղազիկ , զօրքն  
 և իշխանքն ցիր և ցան եղէն : Այլ մէկ մի յիշ  
 խանացն զոր պարոն Աոստանդին ասէին՝ որդի

պարոն Ուոլբինի (\*), սա երեկ 'ի լեառն Տորոս, և քաջութեամբ խլեց զմեծ մասն լերինն, որ է առաջին բերդ Սահկայն :

ԸԽԹ. Ի Թուին շխթ հանգեալ 'ի Քրիստոս մեծ իշխանն պարոն Աոստանդին : Այլ յառաջ քան զմեռանելն նորա եղև զարմանալի նշան 'ի բերդըն սորա Սահկայն. ցոլաց կայծակն 'ի Մաթառոստանն . եզարկ զարծաթի սինին . և տարալ 'ի տանն 'ի մէկ այլ կողմն ու մտոյց եօթն սկուտեղի ներքև . յորում ասէին զայն գուշակումն մահուն պարոն Աոստանդին . որ և 'ի նոյն ամի մեռաւ և Թաղեցաւ 'ի սորբ ուխտն Ասատաղոն : Այլ եղև պարոն՝ որդին իւր Թորոս :

Ի սոյն ամի եղև սով ընդ ամենայն երկիր, և 'ի քաղաքն Ուրհայ նեղութիւն մեծ. զի տարի մի անձրև չերեկ, մինչև խստեց սովն, մինչ կին մի Յոյն խաշեաց զիւր տղայն և կերաւ, և Տաճիկ մի զիւր կինն կերաւ . վասն զի եբարձ Աստուած զզօրութիւն հացի . ուտէին և չկշտանալին : Այլ 'ի նոյն տարուջ եղև յԱստուծոյ առատութիւն կերակրոց և ըմպելեաց :

ԸԾԵ. Ի Թուին շճե վլաւ սուրբ Սոփի 'ի քաղաքըն յՈւրհայ . և երևեցաւ աստղն գիսաւոր :

(\*) Ի ձեռ. Սուրբինի .

Ի Թուին շճէ եղև նշան սոսկալի 'ի յաշ ՇճԷ.  
 Խարհն Հայոց, 'ի գաւառն Սասպուրականի .  
 զի հուր ցոլաց յերկնից, և անկաւ 'ի ծովն Սաս-  
 պուրականի մեծ որոտմամբ. և սատակեցան ամե-  
 նայն ձկունք ծովուն. և հոտեցան վայրքն 'ի հո-  
 տոյն, և 'ի տեղիս տեղիս սրատուեցան :

Յայսմ ամի խնդրեցաւ վրէժ արեան Գազ-  
 կայ 'ի սպանողաց իւրոց . և այսպէս եղև : Ու-  
 նէին որդիքն Սանտալէի բերդ մի ամուր մերձ  
 'ի Չկնջուրն լեւնահայեաց Գամրաց աշխարհին .  
 և դեռ կենդանի էին երեքին եղբարքն . և ա-  
 նուն բերդին կիզխտուէ՝ խիստ ամուր . և մէկ  
 'ի նոցանէ ունէր ընդ պարոն թափոսի սէր և միա-  
 բանութիւն՝ ընդ որդւոյն կոստանդնի որ էր տէր  
 Սահկային : Աւ խոստացեալ էին թափոսի՝  
 տալ 'ի նա զբերդն զայն . զի մերձ և սահմա-  
 նակից էր նորա : Աւ ելաւ իշխանն Հայոց պա-  
 րոն թափոս սակաւ զօրօք, եկն առ նոսա սի-  
 բով . և իջեալ 'ի սահմանքն՝ յիմաց արար նո-  
 ցա զգալն իւր : Յայնժամ մէկ եղբայրն էառ  
 ընծայս, և գայ առ պարոն թափոս, և դաշնակ  
 մի պատուական և հալաւ մի դնէր առաջի :  
 Յորժամ կերան և խմեցին, յիշեաց պարոն թափ-  
 օս զխոստումն բերդին՝ զոր ունէին յառաջ,  
 և ուզէր կատարել . և նա ստեալ երդմանն՝

ասէ . » չկարեմք տալ , զի մեր հայրենիք է » :  
 Յորժամ տեսաւ պարոն թափոս՝ թէ խաբեցաւ  
 'ի նոցանէ , ասէ սրտմտութեամբ . » արի՛ ան  
 զքո ընծայքդ , և զնա՛ . և յայտմ հետէ պատ  
 ընտ կացէք յիմէ » : Աւ դարձաւ պարոն թափ  
 րոս դիմօք 'ի տուն առաջի աչաց նորա : Իսկ 'ի  
 գիշերին դարձաւ յետս ծածուկ , և եղիւ զհե  
 տեակքն շուրջ բերդին . և ինքն հեծելովն հե  
 ոանայր : Ի լուսանալ առաւօտին՝ ելին բնակիչք  
 բերդին՝ ամէն մարդ յիւր գործն . և յանկարծա  
 կի տեսան զքմին , և փախչէին դար 'ի վեր 'ի  
 բերդն , և պարոն թափոսն վարէր զնոսա . որ ոչ  
 ժամանեալ 'ի բերդն՝ զներքսի դուռն փակեցին  
 դէմ հետեակացն , և զդրուցինն չկարացին փա  
 կել . հետեակն խլեց զդուռն . և հուր բորբո  
 քեցին 'ի բերդն , և յոյժ բռնկեց : Այսեցան  
 բնակիչք բերդին , բացին զգաղտ դուռն , և սկը  
 սան փախչել : Պարոն թափոս խիստ ուրա  
 խացաւ , եկաւ մտաւ 'ի բերդն . ապա սկսաւ քն  
 նել զգանձս նոցա , քանզի ամենայն գաւառին  
 ոսկի և արծաթն անդ էր ժողովեալ : Աւ ասէ  
 պարոն թափոս ցորդինն Սանտալէի . » բերէք  
 զթուրն Ղազկայ , և զսրտմոռնանն թագաւորա  
 կան» . և նոքա բերին : Աւ տեսեալ պարոն թափոս  
 և զօրք իւր՝ լացին դառն : Աւ սրտմտեալ պարոն

Թուրոս՝ հրամայեաց ցուցանել զտուն գանձուցն  
 իւրեանց . և նոքա ոչ ցուցանէին : Աւ ասաց  
 չարչարել զնոսա . և մինն նեղեալ 'ի չարչա-  
 րանացն՝ անկաւ ընդ բերդն 'ի վայր , և մեռաւ :  
 Աւ սկսաւ զաւագ եղբայրն չարչարել . և նա  
 լրբէնի երեսօք ասէ . » դու՝ հայ մարդ ես . և  
 մեք հոռոմ իշխանք , ինչ պացխուն տաս մեր  
 Թագաւորին , որ կու դատես զհոռոմ մարդ » :  
 Յայնժամ բարկացաւ պարոն Թուրոս , և ասէ .  
 » և դուք որ զայր հզօր և զօճեալ Թագաւոր  
 սպանիք , ինչ պացխուն տայք հայոց ազգիս » .  
 և էաւ կռան մի 'ի ձեռն , գնաց 'ի վերայ լալիսա-  
 ուրն , եզարկ զնա 'ի գլուխն և սատակեաց :  
 Յայնժամ գոհացաւ պարոն Թուրոս զԱստուծոյ ,  
 որ արժանի արար զինքն առնուլ 'ի նոցանէ զվրէժ  
 արեանն Ղազկայ . քանզի մեծ հայրն նորա Ռու-  
 բէն յիշխանացն Ղազկայ էր : Ապա էաւ բազում  
 գանձս ոսկի և արծաթ , և զմէկ եղբայրն , և  
 եկն 'ի Ասհկայն . և զբնակիչն բերդին բնա-  
 կեցոյց առ ամն գետոյն Պառատիսոյ . որ այժմ  
 Արակկա կոչի անուն տեղեացն :

Ի Թուին շէա մեռաւ մեծ իշխանն հայոց ԱԿԱ .  
 և տէրն հռոմկային Ղոզ Ասիւն . և եղև  
 սուգ մեծ ամենայն հայոց . զի մնացեալ իշ-  
 խանքն հայոց առ նա էին ժողովեալ . և աթոռ

հայրապետութեան հայոց անդ էր: Այլ էր խոստովանահայր նորա տէր Ռարսեղ կաթողիկոսըն, զոր եղ հոգաբարձու ընչից իւրոց. և յանձնեաց (նմա) դնել 'ի յիւր տեղն զաղայ Աստիւն, որ էր սնեալ 'ի տունն որպէս զիւր որդի: Այլ յայտմ' ամի մեռաւ տէր Ռարսեղ. և դրին կաթողիկոս զտէր Գրիգորիս:

ԸԿԳ. Ի Թուին շնոր շարժեցաւ երկիր 'ի բարկութենէն Ռատուծոյ. յամնեանն Սարերի 'ի տօնի Սաչգիւտին 'ի մէջ գիշերի երեւայր երկիր, և գոչումն և որոտումն լինէր յանդնդոց. խուովեցաւ ծովն. հեծեծային լերինք և բլուրք. և շատ քաղաքք կործանեցան: Փլաւ Լնտաք, Սսիս, հասանմուր, Վեսոն, Լպլաթայն, Ուապան, Սամոսատ և Սարաշ հիմն 'ի վեր շրջեցաւ, և կորեան ոգիք քառասուն հազար: Այլ 'ի Աւ լեառն յանապատն Ռարսեղեանց ժողովեալ էին եկեղեցի օրհնել՝ վարդապետք և կրօնաւորք. յորոց վերայ փլաւ եկեղեցին, և սպան երեսուն աբեղայ և երկու վարդապետ:

Յայտմ' ամի փոխեցաւ 'ի Վրիստոս վարդապետն Գեորգ Սեղրիկն: Սա ետ զկանոնսն 'ի Ղրազարկն. և ինքն անդ թաղեցաւ:

ԸԿԴ. Ի Թուին շնոր եղև նշան սոսկալի 'ի յԱմիթ քաղաք Տաճկաց. զի հուր էջ յերկնից 'ի

վերայ իւրեանց մղկթին . և վառէր քարն զէտ  
փայտ . և ամենայն քաղաքն անդ կուտեցաւ անցը  
նէլ զկրակն , և չկարացին , զի չէր զգալի կը  
րակ . և բորբոքեալ այրեաց զաղօթարանն զայն :

Ի սոյն ամի եկն Ռուզուլին բազում զօրօք  
'ի վերայ Սեզլին , որ էր Ֆուանկաց . և էառ  
զՍեզարն . և աւերեաց զերկիրն Մնտաքու :

Ի թուին շՅ կոտորեաց թագաւորն Սրաց ԱԶ .  
զմեծ Մմիրայն Պարսից՝ որում ասէին Սյազի .  
որ եկն յաշխարհն Սրաց , որ էր համարն հա  
րիւր յիսուն հազար :

Ի սոյն ամի եղև պատերազմ թուչնոց 'ի  
դաշտն Սելտինոյ . ժողովեցան արագիւլք և  
կուունկք և արօսք , և կուտեցան ընդ իրեար .  
և յաղթեաց կուունկն , և փախոյց զնոսա :

Ի թուին շՅԸ մեռաւ պարոն թարոս որդին ԱԶԸ .  
կոստանդնի և թոռն Ռուբինայ . և էառ զիշ  
խանութիւնն եղբայրն իւր պարոն Սեռն :

Ի թուին շՃա պարոն Սեռն էառ զքա  
ղաքսն Աիլիկեցւոց՝ զՏարսոն և զՄտանա և զՍը  
սիս . և յարեան ազգն Ֆուանկաց 'ի վերայ նորա .  
և անձնընտիր լինելով տապալեցին զերկիրն :

Ի թուին շՃբ զՍորայ երկիրն առին և ա  
ւերեցին զօրքն հայոց :

Ի թուին շՃդ պարոն Սեռն էառ զՍա  
ւերեցին զօրքն հայոց :

ըուանդի քարն • և եղև խռովութիւն 'ի մէջ  
Ֆրանկոսոյն և պարոն Լևոնի : Եւ եղև պարոն  
Լևոնն և իւր քեռ որդին 'ի մի կողմն , և Թա-  
գաւորն Երուսաղէմի և Լ'նտիոքայ 'ի մի կողմն •  
և աւերեցին զերկիրս Կիլիկեցւոց • և ազգն Թուր-  
քին զկնի նոցա գերեաց զազգն Քրիստոնէից ան-  
համար և շատ :

ՀԶԵ.

Ի Թուին շճե պարոն Լևոն խանգարեաց  
զպարոն Պաղտին տէրն Սարաշայ : Եւ յետ ե-  
րեք տարւոյ որդի Պեմդին Պեդեին տէրն  
Լ'նտաքոյ , կալաւ զպարոն Լևոն • և որդիքն  
Լևոնի յարեան միմեանց հակառակ • և կալեալ  
զեղբայրն ( իւրեանց ) Կոստանդին՝ հանին զաչ-  
քըն , և յետ երկու ամսոյ էառ ( Պեդեին ) զորդի-  
սըն պարոն Լևոնի պանտանդ , և գին վաթսուն  
հազար դեկան , և զՍսիս , և զԼտանա , և զՍա-  
րուանդի քարն , և արձակեաց զԼևոն :

Յայսմ ամի ել Թագաւորն Յունաց Պերսիե-  
ռօժէնն • և եկն էառ զՍալիճն , և զԼ'նաւարզա ,  
և զՍահկայն , և զԼ'մոյքն , և զՅախուտն , և  
զամոլը ամրոցանիս նոցա • և ետ բռնել զկինն և  
զորդիսն պարոն Լևոնի • և ինքն պարոն Լևոն  
եկն առ Թագաւորն • և նա յղեաց զնա ընտա-  
նեօք 'ի Կոստանդնուպօլիս , և զսրտկեր սուրբ  
Լստուածածնին Լ'նաւարզոյ : Եւ Թագաւորն

եկաց 'ի Արիւկեայ տարի մի և վեց ամիս . և  
գնաց մինչ 'ի Հալայ և 'ի Սիզարն . ոչինչ ա-  
րիուլթիւն եցոյց :

Ի թուին շճէ եկն Մհմէտ մէլիքն . և առ ՇԱԿ.  
զԱ ևոնին տեղիքն 'ի Հոռմէն զԱ ասկայն և  
և զԿապայնն և զԿարմիր լեառն :

Ի թուին շճը մեռաւ պարոն Ա ևոն 'ի ՇԱԿ.  
Աոստանդնուպօլիս :

Ի թուին շճթ ել Պերփեռօժէնն 'ի վերին ՇԱԿ.  
կողմն Պոնտոսի և Գամբաց . և բնակիչք Տորոսի  
'ի նա ապաստան եղէն . և մուտեցին 'ի Թուր-  
քէն . և յորժամ գնաց Թազաւորն , մնացին  
ցիր և ցան , և եղէն փախստական . և մնաց եր-  
կիրն Ա ևոնի աւեր .

Ի թուին շՂ գնաց կաթուղիկոսն տէր ՇԱ.  
Գրեգոր 'ի Արուսաղէմ : Այլ եկն առ նա Ա ի-  
կաթն և խօսեցան ընդ միմեանս բան հաւատոյ :  
Այլ զոր ասաց հայրապետն՝ հաւանեցաւ Ա իկա-  
թըն , և մեծարեցին զՏէրն 'ի տօն զատկին :

Հայսմ՝ ամի մանուկ մի Թուրոս՝ յորդուցն  
Ա ևոնի որդւոյ Աոստանդեայ՝ զոր առաքեաց  
Թազաւորն կապանօք 'ի Աոստանդնուպօլիս : Մյս  
Թուրոս փախեաւ 'ի ծառայութէնէ . գայ 'ի  
սահմանս Ա ասկային . ծածկեալ զինքն՝ թէ ու-  
կեր , իմաստութեամբ քիչ քիչ ձգէր առ ինքն

արս աջողակս 'ի քահանայից և յաշխարհակա-  
նաց . քանզի էր այր խոհեմ և զգօն , և 'ի  
կուիւս յաջողակաձեռն , տեսովն թխամորթ ,  
յերկայն և գեղեցիկ և ահարկու , գանգրահեր ,  
և լի ամենայն շնորհօք : Որ և օգնութեամբ  
Լստուծոյ 'ի քիչ օրեր տիրեաց հայրենեաց  
իւրոց . և էառ զՍահկայն և զՍմնւտայն և  
զՍիմնակլայն և զՍոխիւծ բերդ : Իսկ յօրերս  
երեւոյիսնս պարոն Ղոսնին զհռոմկայն՝ սուրբ  
կաթողիկոսին տէր Ղարիգորիսի ձեռնադրով ,  
զի մնացէ աթոռ հայրապետութեանն հայոց .  
և կայ գիրն մինչև ցայսօր :

Ո . Ի թուին չՃ յամենն Նաւասարդի քսան  
երեք եկն ձիւն կարմիր մոխրախաւն . և 'ի տա-  
րիս ( յայս ) էառ պարոն թաորոսն 'ի հռոմէն  
զՍսիս . և զթալէն և բռնեց զՏուկն թառմաս :  
Եւ գուքսն Լնդրոնիկէ՝ որ ունէր զպահպանու-  
թիւն կիլիկեցոց աշխարհին , հրամանաւ թա-  
գաւորին Յունաց եկն երկոտասան հազար հե-  
ծելով 'ի վերայ պարոն թաորոսի 'ի քաղաքն  
Սսիս , և նախատանօք ձայնէր առ թաորոս և  
ասէր , թէ ահա ունիմք զերկաթի կապանք  
հօրն քո Լևոնի . սովաւ կապեմք զքեզ և տա-  
նիմք ծաւայ : Երբ լեց զայն պարոն թաորոս ,  
չկարաց համբերել . այլ՝ յուսացաւ յԼստուած .

Ժողովեաց զգօրանն իւր . և պատառեաց զպարիսպ  
քաղաքին Սսայ . և գիշերի յարձակեալ առիւ  
ծաբար 'ի վերայ նոցա՝ կոտորեաց զնոսա և խան  
գարեաց : Այլ մեռան 'ի կռիւնն առաջի դրան  
քաղաքին պարոն Սբատ՝ տէր Պապառոնին .  
պարոն Ասիլ՝ տէրն Ռարձրբերդոյ և պարոն  
Տերին և պարոն Տիգրան , որ էին 'ի կողմ ( \* )  
Յունաց Թագաւորին : Այլ զԹուլամորթ Յոյն  
սըն կալեալ՝ 'ի դադարեւ կռուոյն մերկա  
ցնէին և Թողէին : Այլ տիրեաց պարոն Թորոս  
Սսայ անհոգութեամբ , և ամենայն գաւառաց  
նորա : Բայց պարոն ( ) շին տէր Ամբրոնին  
կտրեց գին անձին իւրոյ ոսկի դեկան քառասուն  
հազար , և ետ զքսան հազարն . և կիսոյն գրաւա  
կան երեստ զտղայ որդին իւր Հեթում՝ առ պարոն  
Թորոս . և ինքն ազատեալ զնաց 'ի տունն իւր :

Ասկ Հեթում կացաւ առ պարոն Թորոս . և  
սիրեց զնա Թորոս . զի էր տեսական դեղե  
ցիկ . և իմաստուն : Այլ առաքեաց պարոն ( ) շին ,  
և ուղեց առնել խնամորթիւն ընդ իրարս , զի  
տացէ պարոն Թորոս զդուստրն՝ տղային Հեթ  
մոյ . և քսան հազար դեկանն զոր պարտ էր 'ի  
գնոջէն՝ նա մնայր . հաշուէ թէ՛ պւոյգ երեստ

( \* ) Ի ձեռ . Դ Կողմ :

իւր դատերն : Ալ կամեցաւ պարոն թաորոս . և մկրտէր շէթութում, զի անկնունք էր . և այն էր ձիաւոր . և պսակեաց ընդ դուստրն . և յղարկեաց առ հայրն 'ի խամբրոնն :

Յետ այս յաղթութեանս զոր արար պարոն թաորոս՝ հեծծէին Յոյնք նախանձով . և զի իւրեանք չկարէին քէն հանել, յորդորէին զՄ'աղսուտ Սուլտան Խկոնին (\*), տային շատ գանձ և ասէն . արն զթաորոս բնաջինջ և զազգն իւր : Ալ ելաւ Մ'աղսուտն՝ գայր 'ի վերայ պարոն թաորոսի, պատրեալ 'ի շատ ընչիցն որ տուին : Խսկ պարոն թաորոս էառ զզօրս իւր՝ գնաց ընդդէմ նոցա : Խմացան Տաճիկքն և զարմացան ընդ համարձակութիւն նորա : Ալ առաքէ Սուլտանն առ պարոն թաորոս, և ասէ . « ի՛նչ եկի աւերել զերկիր քո . այլ հնազանդեաց մեզ . և դարձն զերկիրն զոր առեր 'ի հողմէն . և մնաս սիրելի մեզ » : Օչայս լսեց պարոն թաորոս և ուրախացաւ . և առնէ պատասխանի և ասէ . « յանձն առնում հնազանդել քեզ որպէս թագաւորի, վասն զի չես նախանձիր ընդ յառաջանալս մեր . այլ երկիր դարձնել 'ի հողոմն անհնար է » : Ալ լուեալ Սուլտանն՝ ի՛նչ ներկեաց զնա . այլ

(\*) Ի ձեռ. Արամեի :

հաստատեաց պայման սիրոյ, և դարձաւ 'ի տուն  
իւր, և վնաս չարար: Լ՛յս եղև 'ի Թուին ֆր:

Վարձեալ եկն Սուլտանն Խկոնիոյ յերկիրն  
պարոն Թորոսի միւսանդամ • և բանակեցան 'ի  
վերայ Թուին: Այլ եղև բարկութիւն 'ի Տեառնէ  
'ի վերայ նոցա • Թէպէտ և ամառն էր, սակայն  
որոտմունք և հրաձգութիւնք լինէին, և հողմ  
ուժով՝ որ զճառս շրջէր, և յահաւոր բար-  
կութենէն՝ ամէնն յ՛ստուած ապաւինէին, և  
զողորմութիւն յ՛ստուծոյ խնդրէին: Այլ յետ  
երեք առւր խաղաղացան երկինք և երկիր • և  
Սուլտանն դարձաւ ամօթով, և ապրեցաւ ամիս  
տասն, և մեռաւ • և եդ յաթունն զորդին իւր  
Խլիճ՝ Լ՛սլան:

Լ՛յս Խլիճ՝ Լ՛սլանս ունէր ընդ պարոն Թորոսն  
անարատ սէր, և առաքեաց դեսպան յԱրուսաղէմ  
և յ՛նտաք • և առ պարոն Թորոս առաւել ամ-  
րացոյց զսէրն: Վարձեաց և այլ գործ պարոն  
Թորոս • քանզի Բրինձն Լ՛նտաքոյ Լ՛նաղտն յոր-  
դորմամբ Թորոսի, և ինքն պարոն Թորոս կազմե-  
ցին նաւ, և գնացին 'ի կղզիս Արարոսայ, և զէտ  
'ի վերայ Թուրքի գնացին • զի գտին զնոսա  
անհոգ, և աւերեցին զքաղաքս, և զգետս նոցա  
դատարկ Թողին 'ի գոմէ, և խայտառակ խրա-  
տեալ զնոսա, և շատոց կտրեալ զձեռս և զոտս

և զականջս և զքիթս՝ ոչ թէ աշխարհականաց  
(միայն), այլ և եկեղեցականաց բաղմնց, թողին  
զնոսա և զնացին : Օ՛ր երբ լսեց թագաւոր  
Յունաց Մանիլն՝ բարկացաւ յոյժ, այլ առ  
ժամն իրք չկարաց առնել :

ՈՒԿ.

Ի թուին ո՛րք սպանաւ պարոն Ստեֆանէ  
եղբայր պարոն Թորոսի՝ նենգութեամբ անօրէն  
Տուկին Համուսին, որ ձայնեաց զնա սիրով . և  
բռնեցին և խաշեցին ՚ի պլինձն : Եւ մնաց Ստեֆանէի  
երկու տղայ Ռուբէն և Լևոն : Իսկ եղբայրն  
նորա պարոն Թորոս և պարոն Մլէհն  
զայրացեալ ընդ գործ նոցա՝ առին վրէժ արեան  
նորա հազարապատիկ յաւելուածով . որոց պարտական  
անմեղացն լիցի անօրէն Տուկն յարդար  
դատաստանին Լստուծոյ : Եւ յայնմ ժամանակի  
յաղթողն պարոն Թորոսն կայր քաջութեամբ,  
և պահէր զգաւառս լեառնակողմանց Տորոսի .  
որոյ աէր էր զօրութեամբն Լստուծոյ . և անուանեցաւ  
Սեաստոս Մսայ և Լնաւարդոյ և Սահկային :

Իսկ եղբայրն նորա պարոն Մլէհն էր այր  
չարաբարոյ . ուղէր որ սպանէր զպարոն Թորոս .  
և յարոյց յինքն այլ ոմանս օգնականս իւրոյ  
չարութեանն : Եւ օր մի ելան երկուքն ՚ի յորս  
՚ի մէջ Մսայ և Լտանոյ . և կամէր Մլէհն

զչար խորհուրդն իւր անդ կատարել, և սպա-  
 նել զէղբայրն : Եւ պարոն թօրոս գիտաց՝ և  
 կալաւ զպարոն Մլէհ, և առաջի իշխանացն  
 քչփեց խիստ զնա. և ետ նմա շատ ոսկի և ար-  
 ծաթ, ձի և ջորի, և եհան զնա յերկրէն, և  
 այլ չար չարար փոխարէն նմա : Իսկ նա զնաց  
 առ Սուրտանն Հալպայ Սուրատինն, և եմնւտ ՚ի  
 ծառայութիւն նորա : Եւ նա ետ նմա զՎիւրոս (\*)  
 և զգաւառն իւր : Իսկ կինն Ստեփանէ էր  
 դուստր պարոն Սմբատայ Պապառոնի տիրոջն,  
 և քոյր պարոն Տաղուրնայ, որ տիրեց յետ սպան-  
 ման պարոն Սմբատայ հօրն իւրոյ՝ առաջև Մասայ  
 դրանն՝ Պապառոնին : Որ էաւ զտղայքն իւր,  
 և զնաց ՚ի Պապառոնն առ իւր եղբայրն պարոն  
 Տաղուրան, և անդ սնուցանէր զտղայքն իւր :  
 Եւ էր նա կին իմաստուն. և անուն նորա՝  
 Բուխթա. էր և պարոն Սասակ եղբայր Տա-  
 կուրնայ տէր բերդին Լսկուռոյ և Լամոսոյ, և  
 կողմանց նոցա. և պարոն Տաղուրան տէր Պա-  
 պառոնին՝ էր այր բարի և առատ, և սիրելի  
 Լստուծոյ և մարդոյ :

Յայտմ՝ ժամանակի՝ որ էր թուականն ո՛՜՜ ՈՒԶ.  
 տէր Գրեգորիա ծերացեալ էր, և կալեալ էր

(\*) Գուցէ. Կոմիտի :

զաթող հայրապետութեանն ամն յիսուն չորս :  
 Աւ ապա յազգմանէ Հոգւոյն ժողով առնէ եւ  
 պիսկոպոսաց եւ վարդապետաց եւ ամենայն վանա-  
 կանաց , եւ ձեռնադրէ 'ի տեղի իւր զեղբայր իւր  
 զտէր Ներսէս կաթողիկոս Հայոց՝ մեծ աղա-  
 չանօք . զի հրաժարէր (նա) 'ի պատուոյն , եւ էր  
 լցեալ ամենեւին շնորհօքն Աստուծոյ , զոր չը-  
 կարացի գրել զվարս նորա : Վնաց համբաւ  
 նորա 'ի Կոստանդնուպօլ եւ 'ի Հռոմ՝ առ պատ-  
 րիարզունքն եւ առ կայսերքն . եւ նովաւ հաստաւ  
 տեցան ամենայն ազգ 'ի դաւանութիւնն Հայոց :

ՈՃԷ. Ի թուին ո՛յէ մեռաւ պարոն Թորոս որ-  
 դին Աւոնի՝ տէրն Սասայ . որոյ ողորմեսցի  
 Քրիստոս : Իսկ 'ի մեռանիլն՝ եղ պարոն Թորո-  
 րոս Պայլ տղային իւրոյ որ կոչէրն Ռուբէն՝  
 զիշխանն պարոն Թուամաս . որ կալաւ զաշխարհն  
 պարոն Թորոս տարի մի :

ՈՃԸ. Ի թուին ո՛յը էաւ պարոն Սլէհն եղ-  
 բայր պարոն Թորոսի օգնութիւն հեծել 'ի  
 Հալպայ տիրոջէն . եւ շատ Թուրքով եմնաւ  
 յերկիր Արիկեցւոց , եւ տիրապետեաց իշխա-  
 նութեան եղբօրն իւրոյ , եւ շատ առ եւ աւար ետ  
 'ի ձեռս Թուրքին . եւ զիւր հակառակսն բռնեց  
 եղ 'ի բանդ . եւ բռնեալ զեպիսկոպոսունս՝ ա-  
 տամնաթափ արար զնոսա : Աւր կարծէր՝ թէ

դոյ ոսկի կամ արծաթ, խէր և դնէր 'ի ջամբու  
 իւր. և զկանայս համեստս խայտառակէր աղտեղի  
 պոռնկութեամբ: Ալ լցաւ զանձով և ոսկւով  
 և արծաթով 'ի զրկանաց անմեղացն: Ալ էր  
 այր զազանամիտ և չար և անողորմ. և ատէին  
 զնա ամենեքեան, և ցանկային փախչիլ 'ի նմա  
 նէ. բայց առ ժամն չգտանէին տեղի:

Ա թուին ո՞՞թ 'ի Յունիսի քսան ինն եղև ՈՒԹ  
 շարժ սաստիկ, և փլոյց զպարիսպն Անտաքու  
 և Հալպայ. և փառաւոր տաճարն որ յԱնտաք  
 էր՝ փլաւ և եսպան շատք:

Ասկ յորժամ տիրեաց Ս'լէհն իշխանութեան  
 եղբօրն, փախաւ պարոն թաւմաս որ Պայլն էր,  
 և գնաց յԱնտաք: Ալ զտղայն պարոն թաւրոսի  
 տարան 'ի Հռոմկլայն. և անդ մեռաւ: Ալ որ  
 դի պարոն ( )նի պարոն Հեթում՝ որ ունէր  
 զդուստր պարոն թաւրոսի 'ի կնութիւն, նա  
 ատէր զնա. և յահէն պարոն թաւրոսի 'ի կեն  
 դանութեանն իրք չիշխէր առնել. իսկ զինի  
 մահուան հօրն՝ եհան 'ի տանէն իւրմէ: Յա  
 ղազս որոյ զայրացեալ պարոն Ս'լէհն, գնաց  
 պաշարեաց զօրօք զԱմբրոն. և շատ նեղու  
 թիւն հասոյց 'ի բնակիչս նորա: Քանզի վաղուց  
 հեռէ Ռուբինեանք և Հեթումեանք մասային  
 ընդ միմեանս. և եղև այս կրկին խուլութեան

պատճառք • ընդ որում խիստ նեղէր զնոսա  
սրով և սովով :

ՈՒՅ.

Ի Թուին ո՛րք սուրբ լուսաւորիչն տէր  
Ներսէս Արայեցին փոխի առ Քրիստոս • և պա  
տուիրեաց նստուցանել յաթուն զտէր Պարիզո  
րիս մահանուն Տղայ :

Իսկ յետ եօթն ամի տէրութեան պարոն  
Մլէհին , որ էր Թինն ո՛րդ , իշխանք նորա  
սպանին զնա 'ի նորաշէն քաղաքն Սիս վանս վատ  
բարուց նորա : Աւ առաքէն 'ի Պապաւոնն , և  
բերէն զաւագ որդին Ստեֆանէի զՌուբէն  
դնել յաթուն , զոր անդանդաղ առաքեաց քե  
ռին իւր պարոն Քաղուրան : Աւ եկն Ռուբէն  
տիրեաց հայրենեաց իւրոց : Ի՛ր նա բարեմիտ ,  
աւատ , տեսլեամբ գեղեցիկ , և 'ի զինուորու  
Թինն արի , և աջող 'ի նետելն : Աւ սկսաւ տալ  
պարգևս ամենեցուն աւատապէս • և էառ զգան  
ծրն պարոն Մլէհին , սկսաւ սփռել 'ի պէտս և  
յանպէտս • և աւատ սեղանով անուշացնէր զսիրտ  
իշխանացն և զինուորացն • և ուր դիպէր՝ նոքօք  
զհոյլս Թշնամեացն մղէր • որով էառ զՄտանա  
և զՏարսուս : Աւ օր մի արար պատիւ իշխա  
նացն , և շնորհակալեցաւ ամենեցուն՝ վանս  
երախտեացն զոր արարին նմա , և սպանին զհօր  
եղբայրն իւր , և դրին զնա 'ի տեղ նորա : Աւ

այնոր առաւել բարիս խոստանայր՝ որ ձեռօք  
 եսպան զպարոն Սլէհն , թէ ծանիցէ : Ալ յա-  
 րեան երկու մարդ՝ խաբեալք , և ասեն . » մեք  
 սպանաք ձեռօք մերովք զնա վասն սիրոյ քո » :  
 Ալ նա խիստ շնորհակալեցաւ նոցա . և հրա-  
 մայէր քար կապել 'ի վիզ նոցա , և ձգել 'ի  
 խորս ջրոց : Ալ անուն էր մէկին՝ Պահան , և  
 մէկին՝ Ապղարիպ , որ էր ներքինի : Ալ յոր-  
 ժամ հաստատեցաւ Ուռքէն յիշխանութիւնն ,  
 սկսաւ նեղել զԱմբրոն կռուով և սղարիւ ամն  
 երեք . և յոյժ տառապեցոյց զնոսա վասն հին  
 մտխանացն՝ զոր յառաջ ունէին ընդ միմեանս .  
 բայց չկարաց առնուլ :

Ի թուին ո՛րէ խաւարեցաւ արեգակն . և ՌԻԵ.  
 եղև տիւն գիշեր . և երևեցան աստեղք :

Յայսմ ամի Սլիճ՝ Ասլանն Սուլտան Իկոնին  
 խանդարեաց զկէս Մանին զՅունաց թագաւոր  
 Իկոնին առաջի աւերեալ բերդին՝ որ կոչի  
 Մեւրանիս , և կալեթող : Դարձեալ դաշն  
 սիրոյ հաստատեաց ընդ նա :

Ի թուին ո՛րչ մեռաւ կէս Մանին և թաւ ՌԻԶ.  
 դաւորեաց որդի նորա Ալէքս :

Ի թուին ո՛րէ ելաւ Անդրոնիկէն հակառակ ՌԻԵ.  
 Ալէքսին , և եսպան զնա , և ինքն թագաւորեաց :

Ի թուին ո՛ր թ սպանին զԱնդրոնիկէն . և ՌԻԹ.

Թագաւորեաց Մնկելունն :

ՈՒ. Ի Թուին ո՛ր զնաց պարոն Ռուբէն յԵրուսաղէմ շատ ծախօք, և առ իւր կին զդուստրն Քարաքոյ տիրոջն : Եւ Եւոն եղբայր նորա վախաց 'ի նմանէ վասն քաջութեան ոմանց, որ մատնէին զնա եղբօրն, և ասէին՝ Թէ խորհի յառնել հակառակ քեզ, փախաւ զնաց 'ի Տարսուս, և անտի 'ի Աոստանդնուպօլիս . և զօրութիւն Մսուրի պահեաց զնա . և ընկալաւ բազում սէր 'ի Թագաւորէնն :

ՈՒԱ. Ի Թուին ո՛րա դարձաւ Եւոն 'ի Աոստանդնուպօլսէ, և եկն առ եղբայրն իւր պարոն Ռուբէն . և նա սիրով ընկալաւ զնա, և ետ նմա զԿապանն : Իսկ պարոն Ռուբէն կայր պարապեալ վաճառոտ ցանկութեանց և պոռնկական խորհրդոց, և վասն այնր զնաց յՄատաք ուտել և ըմպել ընդ պոռնիկ կանայս : Ուր և Մատաքոյ Քրինձն բռնեց զնա և եղ 'ի բանդ . և իշխանք որ 'ի հետ էին՝ փախեան, և զնացին 'ի տունս իւրեանց : Եւ այս եղև 'ի Թուին ո՛ր :

Այս առաքեաց պարոն Ռուբէն 'ի քեռին իւր 'ի պարոն Քաղուրան տէր Պապառոնին . յղեց պանտանդ, զի դիցէ փոխանակ իւր առ Քրինձն, և ելեալ տացէ զին անձին իւրոյ : Եւ նա առաքեաց զմայր պարոն Ռուբէնի, և

այլ յազգականաց նորա : Եւ կտրեաց պարոն Ռուբէն գին իւր անձինն . որ տայր զՍարուանդի քարն , զԹալին և զՂկերն , և հազար դեկան ոսկի . և արձակեաց զնա Բրինձն : Եւ եկն 'ի տուն իւր , և ետ զոր խոստացան , և ազատեաց զպանտանդան :

Ի Թուին ո՛ղ մեռաւ պարոն Ռուբէն . և ևառ զիշխանութիւնն պարոն Լևոն եղբայրն իւր , որ էր բարի և աննեղ բնութեամբ : ՈւՁ .

Ի սոյն ամի Թուրքման ոմն՝ անուն Ռոստոմ՝ ժողովեաց շատ Թուրքման , և եմնւտ յաշխարհն Ալիկեցւոց , և խրոխտալով կամէր բառնալ զքրիստոնէութիւն : Գնաց մինչև 'ի Սիս , և իջաւ առաջի քաղաքին յ'ուօինն , և ծածկեց զերեսս երկրի : Յայնժամ Լստուա ծաղօրն պարոն Լևոն քչիկ կուռեալ ընդ նոսա՝ ձգեց յառաջ զգլխաւոր նոցա զՌոստոմ . և ամենեքեան փախեան : Եւ նա զհետ մտեալ՝ կոտորեաց զնոսա մինչև 'ի Սարուանդի քարն :

Ի Թուին ո՛ղ սպանաւ ամենագովելի ձիաւորն Սիր Պաղտին Գունդուստապլն՝ 'ի բերդն Պուականա , որ գնացեալ էր՝ որ գողնայր զբերդըն : Իսկ զկնի երկուց ամնոց ևառ գողութեամբ պարոն Լևոն զՊուականա . և սպան 'ի ներս երկոտասան մարդ : ՈւԷ .

ՈՒԸ .

Ի Թուին ո՛րք էաւ Սալահատին Սուլտանն զԱրուսաղէմ 'ի քրիստոնէից : Օայս ժամանակաւ եկին որդիքն Ղորտուանելի 'ի Սանոյ քոյրորդիք տէր Գրիգոր կաթողիկոսի Հայոց առ պարոն Լևոն, արք բարետեսք : Որ աւագին երեա (Լևոն) զգուստը եղբօրն իւրոյ Ռուբինի՝ զանուանեալն Լիծ, և ետ նմա զՄսիս, որոյ անուն էր Հեթում . և Շահնշահին երեա զՍելեկիս . և կրտսեր դուստրն Ռօբէնի Ֆիլիսն կայր առ մայրն Լևոնի : Եւ էաւ պարոն Լևոն կին յՆտաքու զգուստը եղբօր տիկնոջ Բրընձին, զոր երեա տիկինն յօժարութեամբ նմա . և պարոն Լևոն ուրախութեամբ էաւ վասն երկերի Բրընձին, յորմէ կասկածէրն հանապաղ . զի տիկինն վասն ազգականութեան կնոջն Լևոնի՝ պահեսցէզնա 'ի չարէ Բրընձին . որպէս եղև իսկ :

Իսկ զկնի երեց ամսոց 'ի Մայիսի վեշտասանն փոխեցաւ 'ի Քրիստոս կաթողիկոսն Հայոց տէր Գրիգորիս՝ մականունն Տղայ, և Թաղեցաւ 'ի Ղարազարկն . և նտաւ յաթուն տէր Գրիգորիս՝ որ ասի Սահրամ, տղայ գորու : Մեռան և մեծ իշխանքն՝ քոյրորդիքն կաթողիկոսին՝ պարոն Հեթում և պարոն Շահնշահն . 'ի մէկ ամիս՝ քեռին և քոյրորդիքն : Եւ զոր

լուաք վասն մահուանն՝ չկարեմ աստ գրել .  
 զի ասէն թէ պարոն Լևոն եղև պատճառ . այլ  
 զՃշմարիտն Լստուած գիտէ :

Իսկ տղայ կաթուղիկոսն տէր Պրիգորիս՝  
 յորժամ եղև կաթուղիկոս՝ չհնազանդէր ամե-  
 նեցուն զառաջինն, այլ ինքնիշխանութեամբ տա-  
 նէր զհայրապետութիւնն : Յայնժամ մատացեալ  
 ընդ նա առաջ մարդիկն՝ գրեն առ Լևոն, թէ ոչ  
 ունի սա իմաստութիւն՝ վարել զհայրապետու-  
 թիւնս զէտ արժանն է . և չարախօսեցին զնմա-  
 նէ երեք չորս անգամ, մինչև շարժեցին զպարոն  
 Լևոն՝ ի կամն իւրեանց : Եւ նա առաքէ ՚ի  
 հռովմայն զարք եպիսկոպոս Ստյ զտէր Յոհանն  
 նէս՝ առնել ըստ իմաստութեան իւրում : Եւ  
 նա գնաց անդ, և մտաւ առ կաթուղիկոսն . և նա  
 պատուով մեծարեաց զնա որպէս զհիւր : Իսկ  
 նա ձեռն տուելով սպասաւորացն, մինչ նստեալ  
 էին ՚ի սեղան ճաշոյն՝ ետ բռնել զդուռն բեր-  
 դին . և տարածեցաւ աղմուկն : Իսկ կաթուղի-  
 կոսն զարմացաւ և ասէ . « տէր Յոհաննէս, այս  
 ինչ իրք է » : Եւ նա ասէ « բռնած ես » :  
 Յայնժամ անօրէնքն բռնեցին զնա, և եդին ՚ի  
 զնտան և ամրացուցին : Իբրև ելաւ համբաւն  
 ՚ի դրուցին բերդն և ՚ի ներքին շէնն, հասին  
 ամէնն ՚ի վերայ Ալային ՚ի յօգն հայրապետին

իւրեանց . և երեք օր նետելով մնրտեան , և ոչինչ կարացին առնել : Այլ առ տէր Յոհանն նէս զկաթուղիկոսն՝ եբեր առ պարոն Աւոն . և դրին զնա 'ի բերդն Արպիտառա ժամանակ մի : Ասկ Հռոմկլացիքն աղէկիզեալք ընդ անիրաւ դատապարտութիւն տեառն իւրեանց , յղեն առ նա 'ի ծածուկ , զի թէ հնարեսցէ զէն իւր 'ի բերդէն՝ մատուցեն նմա ձի , և տարեալ արասցեն զնա տէր բերդին և աթուոյն իւրոյ : Այլ նա անկաւ 'ի բանս նոցա մանկաբար , կախուեցաւ կտաւով 'ի գիշերի՝ իջանել . և կտաւն պատառեցաւ . և անկաւ և մեռաւ . և թաղեցին զնա 'ի Վրազարկն :

ՈՒՅԳ. Ղարծեցաւ այս 'ի թուին ո՛րք : Այլ զկնի նորա դրին կաթուղիկոս զտէր Ղարեգօր Ապիրատն , որ էր որդի Օօրավարին՝ եղբօր կաթուղիկոսացն Ղարեգօրիսի և Մերսէսի Ալայեցւոյն , այր իմաստուն և գիտուն , և ծեր :

Այլ յաւուրքս ըմբռնեաց պարոն Աւոն զՎրինս ձրն , և եղ 'ի բանդ աւուրս ինչ : Այլ երեկ յԱբայոյ թագաւորազարմ՝ իշխանն Ղարնդ Հերի . և ինդրեաց զնա պարգևս 'ի պարոն Աւոնէ և նա ետ նմա : Այլ հաստատեցին ուխտ սիրոյ ընդ միմեանս ինամութեամբ : Այլ ետ պարոն Աւոն զդուստրն եղբօրն իւրոյ Ռուբենի զՎիծն (զոր

յառաջն տուեալ էր Հիթմոյ Սասընցւոյ) աւագ  
որդւոյ Ռընձին Ռեմնդին, այս պայմանովս՝ որ թէ  
լինէր յիւրմէ կտրիճ՝, լինէր ժառանգ պարոն  
Սեոնի . և զհնի մահուան հօրն իւրոյ Ռեմնն  
դըն լինէր տէր Անտաբու : Այլ հաստատեցին  
զայս գրով : Այլ էր որդի Ռընձին առ պարոն  
Սեոն . և կացեալ ժամանակ ինչ՝ մեռաւ . և  
մնաց կինն յղի , և ծնաւ կտրիճ գեղեցիկ տես  
լեամբ : Այլ ուրախացաւ պարոն Սեոն . քանզի  
տղայ չունէր , որ լինէր ժառանգ հայրենեաց  
իւրոց . և ետ սնուցանել զնա զգուշութեամբ ,  
և մկրտեաց զնա յանուն եղբօրն Ռուբէն :

Ի թուին ո՛րք յղեաց Թագաւորն Յունաց Ոսե.  
պարոն Սեոնի Թագ պատուական , և խնդրէր  
'ի նմանէ զմիաբանութիւն սիրոյ : Այլ նա առ և  
ընկալաւ ուրախութեամբ :

Այլ 'ի թուին ո՛րք յղէ 'ի Կոստանդնու Ոսե.  
պօլիս ընծայիւք զարքեպիսկոպոս Տարսոնի զտէր  
'Սերսէս Ամբրոնացին՝ զորդի պարոն Օնի ,  
և զմեծազարմ իշխանն պարոն Հալկամ , և ըզ  
քեւին իւր զեղբայր պարոն Ռակուրնայ , և 'ի  
դրանէն իւրոյ զպարոն Պօղոս , որք գնացին և  
ցուցին զկամն սիրոյ Սեոնի յօժարութեամբ  
առ նոսա : Այլ էր տէր 'Սերսէս իմաստուն և  
գիտուն , և ամենայն իրօք զարդարած : Եւ

զովեցան առ նա իմաստունքն Յունաց, և խօսեցան ընդ նա շատ օրեր վասն հաւատոյ և եկեղեցւոյ կարգաց . զորս հաւանեցոյց զնոսա խելօքն իւր :

Ի սոյն ամի մոլորեցան Յոյնք 'ի զատկէն : Այլ յայտ ամի յղեաց Լևոն զարքեպիսկոպոսն Սոյ զտէր Յովանէս յԱբքայ 'ի խնդիր Թագին, զոր Թագաւորն Ալամանայ յուղարկէր նմա զհետ զօրացն՝ որ եկեալ էին անդ . և եկն անտից արծվէսքն (\*), որ եկեալ էր հրամանաւ Պապուն հռոմայ :

ՈՒՍԷ. Ի Թուին ո՛խէ Յունւարի վեց յօր յայտնու թեանն օծեցին զԼևոն Թագաւոր հայոց 'ի հնազանդութիւն եկեղեցւոյն հռոմայ, և ( )ն բրունին Ալամանաց : Այլ եղև ուրախութիւն հայոց . զի յաւուրս յետինս զանկեալ տէրութիւն իւրեանց տեսին կանգնեալ և նորոգեալ յերեսս Լևոնի արքայի հայոց :

Ի սոյն ամի մեռաւ տէր Աերսէս Ամբրոնացին :

Այլ արդ պարտ է պատմել փոքր 'ի շատէ զոր 'ի տարաժամն վայելչացեալ էր հայք : Օր էր արքայն Լևոն իմաստուն և հանճարեղ,

(\*) Գուցէ՛ Արքեպիսկոպոսն :

դուարթ տեսով , և առատասիրտ 'ի հեռաւորս  
 և 'ի մերձաւորս՝ 'ի մեծամեծս և 'ի փոքունս՝  
 'ի վաներս և յեկեղեցիս՝ յիշխանս և յուամիկս :  
 Օտարդարեաց զտօն զատկաց մեծ ժողովով , և  
 մեծածախ սեղանով . և երեւելի արար զօր տօ-  
 նից Տեառն : Եւ ուր իմանայր՝ թէ գոյ այր  
 իմաստուն և գիտուն , և աջող 'ի գործ կամ  
 'ի զինուորութիւն , կամ 'ի խօսս և 'ի պատաս-  
 խանիս , յղէր և կոչէր խոստմամբ , և հանգու-  
 ցանէր պարգևօք . յորոց մի ես եմ՝ Սմբատ սպա-  
 րապետ թարգմանող տառիս և պատմութեանս :

Եւ յօժումն թագաւորին | Լոնի էին եպիս-  
 կոպոսունք և իշխանք շատք . զոր քիչ մի գրե-  
 ցի աստ՝ առ 'ի գիտելոյ կարդացողացդ :

Նախ սկիզբն արասցուք յառաջնորդայ .

Տէր Գրեգօր կաթողիկոս՝ որ մականուն  
 Լպիրատ : Տէր Գլախիթ՝ արքեպիսկոպոս Սըւ-  
 սայ , և առաջնորդ Լըքայկաղնոյ : Տէր Յոհան-  
 նէս՝ արքեպիսկոպոս Սոյ , և տէր Գրազարկուն :  
 Տէր Սինաս՝ արքեպիսկոպոս Լըրուսաղէմի : Տէր  
 Յուսէփ՝ արքեպիսկոպոս Լնտիօքայ և տէր Յե-  
 սուանց վանիցն : Տէր Կոստանդին՝ արքեպիսկոպոս  
 Լնաւարզոյ , և տէր Կաստաղոնին : Տէր Ար-  
 դան՝ արքեպիսկոպոս Լամբրոնին , և առաջնորդ

ԱԿԼՈՒՆ: Տէր Ստեփաննոս՝ արքեպիսկոպոս Սարսոնի (\*), և տէր Մլիճոյն: Տէր Թաորոս՝ եպիսկոպոս Մեւկիոյ: Տէր Գրեգոր՝ եպիսկոպոս Կապնուն, և տէր Լորեանն: Տէր Լստուածատուր՝ եպիսկոպոս Մեծքրուն: Տէր Յոհաննէս՝ եպիսկոպոս Սանվեւայ: Տէր Կոստանդին՝ եպիսկոպոս Փիլիպոսայ: Տէր Ստեփաննոս՝ եպիսկոպոս Բերդուսին: Տէր Մխիթար՝ եպիսկոպոս Բնկուզուտին: Եւ շատ վարդապետք և հարք վանաց և քահանայք:

Ի շինից սր էին բերդատերք՝ այս են.

Պարոն Լտան՝ տէր Պաղբրու: Պարոն ( )ստէր՝ տէր Ղկերոյն: Պարոն Լրեգոյն՝ տէր Համուսին: Պարոն Սմբատ՝ տէր Սարուանդիքարին: Պարոն Լևոն՝ տէր Հարունոյն: Պարոն Սիրուհի՝ տէր Սմանկալին: Պարոն Հերի՝ տէր Լնէոյն: Պարոն Լպղարիպ Գունդուստապլն՝ տէր Կուտոյ: Պարոն Պաղտին՝ տէր Բնկուզուտին: Պարոն Ստեֆ՝ տէր Թաունկային: Պարոն Լևոն՝ տէր Բերդուսին: Պարոն Գրեգոր՝ իւր որդին: Պարոն Լշոտ՝ տէր Եւանջոյն (\*\*): Պարոն Լպղարիպ՝ տէր Ֆուստոսոյ:

(\*) Գուցե Տարսնի: (\*\*) Գուցե Կանչոյն:

Պարոն Մանկրի՝ տէր Կապնուն : Պարոն Կոս-  
 տանդին՝ տէր Ճանձոյն : Պարոն Ճօֆրի՝  
 տէր Շողականն : Պարոն Սիմոն՝ տէր Մա-  
 զոտխաչին : Պարոն Սիմոն՝ տէր Լճնուոյն :  
 Պարոն Ռուպերտ՝ տէր Թալին : Պարոն Թորոս՝  
 տէր Թալասոյ (\*): Պարոն Ասիւ Մարա-  
 ջխան՝ տէր Ամերոյն : Պարոն Գեորգ՝ տէր  
 Քարծր բերդոյ : Պարոն Կոստանդին՝ տէր Կո-  
 պիտաուոյ : Պարոն Լճաուոս՝ տէր Մոլիվոնին :  
 Պարոն Սմբատ՝ տէր Կուկկայ : Պարոն Հե-  
 թում՝ տէրն Ամբրոնին : Պարոն Շահէնչահ՝  
 տէր Աուլվայոյ : Պարոն Քարուրան՝ (\*\*)  
 տէր Պապաու : Պարոն Ասակ՝ տէր Քերդեկանն :  
 Պարոն Տիգրան՝ տէր Պուսկանոյ : Պարոն Կոս-  
 տան՝ տէր Սելիֆոյ : Պարոն Ճոսլին՝ տէր Սի-  
 նիտոյ : Պարոն Սիմոն՝ տէր Կուիկոսի : Պարոն  
 Լճանոս՝ (\*\*\*) տէր Լճաուոսոյ : Պարոն Նիկի-  
 ֆու՝ տէր Աեւկիտոյ : Պարոն Խոսաֆ՝ տէր  
 Աազատոյ : Պարոն Հալիամ՝ տէր Աամոսոյ և  
 Դամեկանն և Լճամոնին : Պարոն Հերի Սևաս,  
 տոս՝ տէրն Նոր բերդոյ : Պարոն Պաղտին՝ տէր  
 Լճուղծին և Կուպային : Պարոն Կեոսակ՝ տէր

(\*) Գուցէ Թալասոյ : (\*\*) Գուցէ Քաղաքան :

(\*\*\*) Գուցէ Ռամանոս :

Մաղվոյ և Սեկոյ: Պարոն Մեխայլ՝ տէր Մա  
նուշատին և Լ՛ւարոյ: Պարոն Կոստանդին՝ տէր  
Լ՛ազուաւենոյ: Պարոն Սեկեֆու՝ իւր եղբայրն:  
Պարոն Կեռվարդ՝ տէրն Լ՛ղօլին և Կոտրատոյ:

Եւ յետ մահուն Պամունդ Բրնձին շատ իշ-  
խանք եկին յԼ՛նաաքու ՚ի ծառայութիւն Թազա-  
ւորին Լ՛ւնի, որ են այսօրեկ. Սեր Աւլէր  
Ջամբլայն: Սեր Բուռձէրտը Մութն: Սեր  
Լուարան: Սեր Թուամաս Մլէհ Լ՛պրունն: Սեր  
Պամունդէրն: Սեր Կելամուլին: Եւ այսպիսի  
խոհեմ՝ իշխանօք և քաջ զօրօք և առատ պար-  
զեօք և ընդարձակ սեղանով զամէնն յօժար կազ-  
մէր ՚ի կուիւ: Ուր և դիպէր՝ քաջապէս վարէր  
զԹ՛նամիսն, և չգաղարէր ՚ի գերեւոյ և յա-  
փըշտակելոյ զազգն անօրինաց: Օ՛ր ամնումն ճա-  
նապարհ հեռու յիշէին զանուն Թազաւորին  
Լ՛ւնի. անտես դողային: Եւ զօրդիս Խլիճ Լ՛ս-  
լանին՝ որ էին տեարք Հուամնց, նեղեալ անձ-  
կացոյց յոյժ. առնլով ՚ի նոցանէ բերդորայս՝  
քանդեց զերկիր նոցա: Եւ այս ցեղ քաջու-  
թեամբ կայր ՚ի մէջ Թ՛նամեացն իբրև զխո-  
յեան անսպարտելի, և սիրելի էր հեռաւորաց  
և մերձաւորաց: Ունէր ՚ի մտի զչարսն Լ՛ամբ-  
րունեցւոց, զոր անցուցեալ էին ընդ Հայս  
Կիլիկեցւոց և ընդ ազգն Ռուբինեանց. զէտ

Երբեմն պարոն ( ) շին՝ հայր Հեթումյ՝ առաջ  
 նորդ եղև թուրքին, տարաւ 'ի յԼուսանոյ գերի  
 աղջիկս հինդ հարիւր կոյս . թող զայլ առ և  
 զաւար : Խորհէր իմաստութեամբ փետել ըզ-  
 թևս նոցա , և խօսէր ընդ Հեթում՝ որդի ( ) շ-  
 նին՝ բանս ախորժս մտաց նորա : Լսէ . կամիմ  
 առնել կապակցութիւն սիրոյ ընդ քեզ , տալ  
 զեղբօր դուստրն իմ զՖելիպ 'ի կնութիւն աւագ  
 որդւոյն քո ( ) շնի : Այլ պարոն Հեթում ընկա-  
 լաւ զբանն , և ուրախացաւ խիստ : Այլ 'ի քա-  
 ղաքն Տարսուս սարեցին զպէտս հարսանեացն :  
 Այլ եկին Հեթումնք ամենայն տամբ և զաւակովք  
 'ի Տարսուս : Յայնժամ թագաւորն ] և ոն կա-  
 լաւ զնոսս , և էաւ զ] ամբուն առանց կռուոյ .  
 եդ զՀեթումն 'ի բանդ ժամանակ մի , և ապա  
 Եհան Էտ նմն շատ գեղերք , և ընդունէր զնա  
 սիրով . և նա ծառայէր նմն հնազանդութեամբ :  
 Դարձեալ յետ տարեց ( \* ) . կալաւ զնա եդ 'ի  
 բանդ . և նա հագաւ 'ի հօն միակեցնակ : Այլ  
 զնաց թագաւորն առ ինքն 'ի բանդն . և թողու-  
 թիւն արարին իրերաց . և Եհան զնա թագա-  
 ւորն , և Էտ նմն զԴրազարին : Այլ անդ կեցաւ  
 ( նա ) , մինչև մեռաւ :

(\*) Իմն Յետ ամոց Էնչ :

118.Բ.

Ի թուին ո՞՞ք մեռաւ տէր Գրիգոր կաթողիկոսն և թաղեցաւ Մարջայկաղնին: Ի նոյն ամի ժողովեաց թագաւոր Լևոն շատ եպիսկոպոս, և եղիւր կաթողիկոս զտէր Յոհաննէս Սոյ եպիսկոպոսն, որ էր այր իմաստուն և առատ, և սեղանով արքայակերպ, խոնարհ սրտիւ և նենգաւոր, և անպաճոյճ անձամբ, այլ 'ի հոգևորս անփոյթ: Օլառաքինիս յոյժ սիրէր, և ոչ հրապարակէր զվնասս կարգաւորաց. շինասէր էր և տան յարդարիչ, և պիտոյից պատրաստիչ յոյժ գովէլի. քակեաց յեկեղեցական սպասուց բազում անօթս ոսկեղէնս, զպահարան սրբոցն յոսկւոյ և յարծաթոյ և յականց զարդարած, զոր տէր Ներսէսն յառաջ էր շինեալ, և յետոյ տէր Գրիգոր Լպիրատն փարթամացոյց. և գրեաց 'ի վերայ զերկոցունց անուանան: Օմեծ խաչն ոսկեղէն զպարոն Սասին քակեաց. և հալեաց զձոյլ ոսկի սուրբ նշանն տէր Գրիգորիսի. և էառ ակունս և մնրգարիտս շատ. քակեց զոսկիակազմ տուփ աւետարանին տէր Գրիգորիսի, որ էր ակամբ և մնրգարտով. քակեաց զօքսին տուիզ վլատ նափորտն տէր Ներսէսի, որ շար ոսկւով կարած էր, որ զէտ ձոյլածոյան կանգնէր. քակեաց զոսկին և զքարին սրն և զմնրգարիտն 'ի գօտւոյ սուրբ սեղանին,

զոր շինեալ էր տէր Պարիզոր. հառ զմեծ լուսակալն արծաթի, զոր շինեալ էր տէր Պարիզորիս և կախեալ 'ի գումբէթ սրբոյն Պարիզորի. քակեաց զկամարն տէր Պարիզորի, զոր շինեալ էր ոսկեով և մարգարտով և ակամբք: Լ՝յլ մի՛ վասն գրեւոյս մեղ դնէք մեղ. զի չէթէ 'ի համբաւէ լուսաք, այլ տեսաք և շօշափեցաք ձեռօք 'ի քակելն, և լացաք ընդ այն վայելչութեանն անզարդ մնալն: Լ՝յլ զբերդն շինութեամբ կարի ամրացոյց, և զամէն եկեալսն առ ինքն գոհութեամբ դարձոյց: Լ՝'ր սա ազգաւ Հեթմնցի, որդի Կոստանդեայ որդւոյ ( ) շնի:

Ի թուին ո՞ճդ գնաց Լևոն թագաւոր 'ի վերայ Լ՝սլասթին, և չկարաց առնուլ: Եւ եկն 'ի Կոստանդնուպօլսէ Խոսրով Եւազն՝ որդի Խլիճ Լ՝սլանին, և տիրեաց հայրենեաց իւր:

ՈՒԾԴ.

Օայսու ժամանակաւ գնաց տէր Յոհաննէս կաթողիկոս առ թագաւորն Լևոն. և լսեց վասն Լ՝նտաքացի թագուհւոյն զոր ունէր թագաւորն՝ բանս բամբասանաց. և յոյժ բարկացաւ թագաւորն, և ետ սպանել շատք 'ի մերձաւորաց նորա. և զթագուհին իւր ձեռօքն ծեծեց խիստ: Հազիւ կարաց որդի քեռոյն իւրոյ Ասակայ Կոստանդին՝ պրծուցանել զնա 'ի ձեռացն կիսամաս. զոր յղարկեց 'ի զնդան 'ի բերդն Ահկայն:

Եւ ունէր 'ի նմանէ դուստր մի տղայ Ռիթայ  
անուն, զոր սնուցանէր մայր թագաւորին տիկ-  
նաց տիկինն՝ զՌիթայն . որոյ յիշատակ նորա՝  
օրհնութեամբ :

ՈՃԵ. Ի թուին ո՞ճէ եկն Տուին Սէնտիկաց Գու-  
թըն (\*) և Քլանտրն . և առին զԿոստանդնու-  
պօլիս 'ի Յունաց, և կոտորեցին և փախուցին  
զնոսա: Յայսմ հետէ բարձաւ թագաւորութիւնն  
'ի Կոստանդնուպօլսէ :

ՈՃԵ. Ի թուին ո՞ճէ ծնաւ Սմբատ Գառնդու-  
տապըն թարգմանող պատմութեանս :

Եւ յորժամ առաւ Կոստանդնուպօլիս 'ի  
Հոռոմնց, փախեալ էշխան մի Յոյն յայս կոյս .  
և տիրեալ կարաւ զՆիկիա և զՆիգորամիտն,  
զՂփեսոս, զՕմիււնա, և զոր 'ի նոսա կայր  
բերդեր, և զՖիլատելֆն, և զՊիղաս . և թա-  
գաւորեաց նոքօք, որ կոչեցան Սաքարի:

ՈՃԹ. Ի թուին ո՞ճթ գնաց Սեոն թագաւորն  
'ի Կիպրոս, և առ իւր կին զԿիպրոսայ թա-  
գաւորին քոյրն Օպպիլն (\*\*), կին իմաստուն  
և համեստ :

ՈՎԵ. Ի թուին ո՞կէ էառ թագաւորն Սեոն

(\*) Գուցէ. Գառնիպոնն :

(\*\*) Ի ձեռ. Օպպիլն :

զԼ՚նտաք իմնստուԹեամբ , զի առատ պարգևօք  
 խոստմամբ հաւանեցոյց զոմնսս յիշխանացն . և  
 նորա բացին զդուռն գիշերն , յորում եմնւա  
 շատ զօրօք : Իսկ ոմննք մտին 'ի Ալայն և ամ  
 րացան , և յետ աւուրց եկին 'ի հնազանդու  
 Թիւն : Այլ 'ի ժամնակս Լ ևոնի ժողովեաց զօր  
 Սուլտանն Աոնին ( \* ) . որ էր 'ի Սալչուքիցն ,  
 որ անուռն է Լ՚զըտին՝ Քայքայուզ : Այլ 'ի ծե  
 րուԹեան Լ ևոնի՝ որ ցաւոտեալ էր 'ի նըկրի  
 սէն , և աւերեալ էր ձեռքն ու ոտքն , կամեցան  
 քէն հանել վանն շատ ուժերոյն , զոր արարեալ  
 էր Լ ևոն Թազաւորն իւրեանց , և առեալ էր  
 զԼ՚բակլի և զԼ՚առընդա , և Աեսարիոյ սղարեւն՝  
 զոր 'ի յառ էաժ , և դարձաւ ծախեց իւրեանց :  
 Նա Սուլտանն երեկ սղարեաց զԱպպանն զբերդն .  
 նա զպարոն Աոստանդին սպարապետն , և զպարոն  
 Լ՚տանն Պայլ Թազաւորն Լ ևոն եդ զօրագլուխ .  
 որ առին զամէն հայոց հեծեալն , և գնացին իջան  
 'ի Շոշականն՝ վերև 'ի լեառն : Այլ Սուլտանն  
 սկսաւ սերտ կռուիլ 'ի վերայ բերդին : Բայց պա  
 րոն Լ ևոն տէրն Աապնուռն , և այլ իշխանք որ կա  
 յին 'ի ներս՝ ելան 'ի դուրս , ու զարկին իւր  
 եանք , ու զիւրեանց պահերն ընդ աք տարան ,

(\*) Այսինքն՝ Իգնիտայ , որ ըստ Տաճկաց՝ Լ՚բակլի :

ու այրեցին զբաբնին . ու այնուլ պրծան զէտ  
 քաջ մարդիկ : Եւ Սուլտանն խորհեցաւ ի ջու-  
 ցանել 'ի զօրացն 'ի դաշան . և ելան եկին ա-  
 ռաւօտուն 'ի տեղի մի 'ի Շողակն , որ կոչի  
 Լազտի : Եւ պարոն Աոստանդին Գոնդուս  
 տապըն ընդդէմ՝ գնաց , և եզարկ զիւրեանք իւր  
 զօրօքն ու խառնեցաւ . ու պարոն Լտանիրի  
 զօրքն չօգնէր իւրեանց , հանց որ շատ էր թաւը-  
 քըն : Եւ 'ի տեղն առին ծառայ զպարոն Աոս-  
 տանդին զորդին Հեթմոյ Լամբրոնին տիրոջն ,  
 որ էր իւր աներ , և զԿեռսակ զՍիկոյ տէրն ,  
 զԼսիւ Լօքսենց , և այլ իշխանք և ձիաւորք :  
 Եւ եղև կոտորածք 'ի զօրքն Հայոց . և տարան  
 զամէնն առ Սուլտանն 'ի Կապանն : Եւ Սուլ-  
 տանն ասաց , թէ այս՝ ինձ շահ հերիք է , և  
 չէաւ զԿապանն . և ելեալ գնաց յիւր աշխարհն ,  
 և եդ երկաթէ կապուլ զնոսա 'ի բանդ : Եւ  
 անդ կացին ( նոքա ) տարի մի և չորս ամիս : Եւ  
 թագաւորն Լեոն գթացաւ յիւրեանք , որ զիւ-  
 րեանք սնուցել էր . և իւր ետ զԼուվայ և զԼա-  
 սավրիոյ գեան և զանաւիկ ծագն Լօզատի ,  
 և էաւ զիւր իշխանքն : Յետ մահուան թագա-  
 ւրին Լեոնի , արար իւր փոխարէն Աոստանդին  
 Գոնդուստապըն հարիւրապատիկ և իւր դրս-  
 տերն . զի լաւ է թագաւորի աղէկ ճորտ պա-

հէ՛ւ քան զայլ հարստութիւն :

Իսկ յետ մահուան թագաւորին, և սպանման, պարոն Լ՛տանայ, մեռաւ Սուլտան Լ՛զրտին . և նստաւ իւր եղբայրն Լ՛լատին, այր իմաստուն և աստղաբաշխ : Երբ ջորացաւ սա բազում՝ ջորօք յամենայն աշգաց Քրիստոնէից և Տաճկաց, և առ յԼ՛տոմայ թուռնէն՝ ՚ի կէռ Ս՛արդէն զբերուդրն կալոնոօրոս, և զգուստր նորա՝ ՚ի կնութիւն յոչ կամնց . և վասն քրիստոնէութեանն չհանգաւ ՚ի հետն աղջիկն : Իսառ զՍաֆրիոյ երկիրն մինչ ՚ի Սէլէկիոյ դուռն . բայց զՍէլէկիա Ուսպիթլուն Ֆրէրքն պահեն օգնականութեամբ Հալոց : Իսկ պարոն կոստանդին Պայլն զի խելօք էր՝ իմաստութեամբ անցոյց զաւուրքն . և իւր թապըրովն էառ ՚ի վերայն հարկ . որ տայ ամէն տարի հեծե՛ւ ՚ի ծառայութիւն՝ չորս հարիւր մարդ . և զինչ գտնոյր Ֆուանկցի օժտնի՝ նա քնքշեցնէր :

Եւ Սուլտանին խորհելով՝ թէ կելիկիա մծտեոր է, առնում էրբ ուզեմ՝ ապա թող երթամ յայլ դէհ ինձ երկիր բանամ, գնաց շատ ջորօք և էառ զԱ՛զնկայն, և կորոյս զայնոր Սուլտանն : Լ՛նտի (գնաց) ՚ի յԼ՛ուզուումն, և զայն այլ էառ, և զՍ՛անծկերա մինչ ՚ի կարուց դաւառն : Լ՛պա ոլորեցաւ անտի, և երեկ

էաւ զՍեւթինի և զՍարբերդ և զՉմշկածագքն  
 և զՂմիթ և զՕուվքն . և մինչ Եփրատ կտրէ  
 զամէնն մլքեց . և կորոյս զՍոււրնայքն : Հայնց  
 որ ելաւ եկաւ Սորայ Սոււտանն Լնթփայ տի-  
 րոջն 'ի յօգն , ու չկարաց իրք աւնել , խան-  
 գարեաց զամէնն ու փախոյց :

Ի սորա տէրութիւնն ելաւ Թաթարին համ-  
 բաւն ու ձայնն , որ գայր ու աւնոյր զվերի  
 Թուրքաստանն՝ զբերդերն ու քաղաքներն . և  
 երեկ մինչ 'ի Սուրազմն : Եւ խանգարեաց ըզ  
 Սուրազմն Շահն Տարպայնի , և փախոյց . որ  
 գնացին անցան ընդ Ջահուն մեծ գետն , և  
 նստան 'ի վերայ գետափին . և լուծեց յիւրեանք  
 զամէն երկու գետամէջքն , որ է ընդ Ջահուն և  
 ընդ Ղահննի մէջ . և է մեծ մայրաքաղաքն Սը-  
 մըրղանդ և Պսուրա և Բէշ և Նախշուպ և  
 Բըրմինա , և շատ քաղաքք՝ զոր չկարացի ընդ  
 գրով արկանել : Եւ ինքն Սորազմ Շահն կայր  
 զէտ ջրած 'ի վերայ գետին . և կարծէր՝ թէ  
 զՍորասան և զինչ մեծ գետն կտրէ՝ յայս դէհս  
 փրկել : Նա Չընկըզխանն որ գլուխ էր Թա-  
 թարուն՝ կապեաց 'ի վերայ նաւերով կանգա-  
 րայնի , ու անցաւ ընդ Ղահնն , ու երեկ էաւ  
 զմեծ քաղաքն Սմըղանդ 'ի չորս օրն , և 'ի չորս  
 տարին չկարաց աւերել . վասն զի Սմըղանդս

'ի թուութք լեզուն Պէր քաղաք ասէ . յերաւի  
որ գէր էր և մեծ . և էառ այլ շատ քաղաքք :

Բայց պարտ է դառնալ 'ի Կիլիկոյ զրոյցն ,  
և գրել : Օ՛ր պարոն Կոստանդին Պայլ ժռ  
զովեաց զամէն եկեղեցականքն և զօրքն Հայոց  
և ասաց . Թէ » պարոնայք դուք գիտէք , Թէ  
յինչ նեղութիւն գտի զաշխարհս ու զմեր պա-  
րոնին յետմնացքն , ու Լ'ստուծով ինչպի յայս  
բերի , ու մեր պարոնադուստրս կարգման եղաւ .  
ամէնդ Թէտպիրովեցո՛ւք որ մեզ պարոն բերեմք .  
զի ես ուզեմ՝ որ իմ տանն և իմ որդւոցն ան-  
դորրութիւն աունեմ : Եւ ամէնն Թէտպիրեցան  
շատ օրեր , և հայնց պատեհեցին՝ որ քան 'ի  
յայլ տեղաց՝ բերեն զԼ'ստաքոյ Բըրնձին որդին  
զԻիլիպն , զի 'ի մօտս է , և լաւ կարէ օգնել  
մեզ 'ի մեր ամէն կարիք : »

Ի Թուին ո՛հա բերին 'ի պայման (\*) որ Հառ Ո՛հԱ .  
յենակ կենայր , ու զեկեղեցին և զսեղանն Հայե-  
նակ տանէր , և զամէն մարդ յիւր իրաւունքն պա-  
հէր : Երբ մեծացաւ և եղև քսան տարւոյ , նա իւր  
հօրն Թէտպրով կուղէր՝ որ ձգէր զՀայոց զամէն  
իշխանքն , և իւրոյն դնէր , այնչափ՝ որ չկարացին  
ժուժել (\*\* ) իւրեանս . բռնեցին զինքն 'ի թախն և

(\*) Ի ձեռ . Ի պոմոն : (\*\*) Ի ձեռ . Ո-ժէլի :

յաթուռոյն ձգեցին, և արարին բերդարդեւ որ  
 մեռաւ: Եւ այլ Պայլ դրին զպարոն Կոստանդին:  
 1126. Ի թուին ոչե ժողովեցան տէր Կոստանդին  
 կաթուղիկոս և եպիսկոպոսք և իշխանքն 'ի Տարս  
 սուս, և դրին թագաւոր յորդեացն պարոն Կոս  
 տանդեայ զպատանին շեթում, և տուին իւր կին  
 զդուստր թագաւորին Ի ևոնի Օ ապէլ: Եւ եղև  
 ուրախութիւն շայոց. և եղին մեծ սէր ընդ  
 շոումայ Պասն, և ընդ Լճամնաց ( )նբրունն.  
 և ընդ Լճատին Սուլտանն շոումաց: Եւ յաւուր  
 քրս յայս շարժեցաւ դիւական բարկութիւն 'ի  
 թագուհին Օ ապէլ. և ուզեց երթալ տեսնուլ  
 զիւր մայրն յԼսպիթլուն բերդն 'ի Սելեկիա,  
 և գնաց. և խուովեցաւ ընդ թագաւորն և ընդ  
 ամէն շայք: Եւ պարոն Կոստանդին ժողովեց  
 չեծեւ, ու գնաց իջաւ առաջի Սելեկիոյ. նա  
 ոսպիթալն վանց որ շատ կու ծախվորէր զինքն  
 Սելեկիայ, ու կու վախին 'ի Լճատին Սուլ  
 տանէն, նա ուզեց տալ զբերդն թագուհեւն ու  
 սէր ունենալ ընդ շայք: Եւ Ֆրէրբեր դրանն  
 այս կերպովս ետ, և ասէ՝ թէ » զբերդս Ի ևոն  
 թագաւորն ետ մեզ. մեք չկարեմք ասել ընդ  
 իւր դստերն՝ թէ եւ 'ի բերդէս. ապա մեք կու  
 ելնենք, դուք առէք զբերդն ու զինք: » Եւ այս  
 ցեղ առին զՍելեկայու զթագուհին:

Ի յայս առուրքս երեկ Հալայ Սուլտանն շատ  
հեծելով 'ի վերայ Պաղրսայ, և չկարաց առնուլ :

Ի սոյն ամ ծնաւ Թազուհին Օսպէլ զան  
դրանիկ որդին Լևոն :

Եւ յառուրքս մտաւ Թաթարն 'ի Հոռովք .  
նա Սուլտնին մայրն էաւ զիւր դուստրն , ու  
փախաւ 'ի Կիլիկայս : Եւ Թաթարն յղարկեց  
'ի հետ 'ի Հեթում Թազաւոր , Թէ տուր ըզ  
փախստականդ . Թէ չէ՝ քո ամէն սէրն որ հետ  
մեզ դրիր՝ նա սուտ է : 'Սա վախեցին՝ որ Թաթ  
արն չլցուեր յերկիրս՝ տուին : 'Սա ոխացաւ  
Սուլտանն , Քայի Սոսրով Շահն և ամէն Տաճ  
կունք , Ժողովեաց հեծել , և առաջնորդութեամբ  
պարոն Կոստանդնայ Լամբրոնի տիրոջ՝ մտաւ  
ընդ Պապառոնին լեառն 'ի վայր , ու այրեաց զա  
մէնն : Եւ Թազաւորահայրն պարոն Կոստանդին  
ու Սմբատ Գառնդուստապըն եկին մտան 'ի Տար  
սուս . և Թազաւորն իւր հեծելովն կայր 'ի  
Ղտանա : Թաթարքն սղարեաց զՏարսուս . իջան  
'ի դարոտն հետ գետին , գերեցին զամէն եր  
կիրն . և կեցան վեց օր . և ապա ել ածին որ  
եղնէին ընդ Կուկլիայ կապանն : Թազաւորն հե  
ծելովն 'ի հետ ել , և Թազաւորահայրն , և  
Սմբատ Գառնդուստապըն , և հասին 'ի տեղ մի՝  
որ Սայծառ ասէն : 'Սա դարձան անթիւ շատ

'ի յետ. մեք դիպաք ու Մատուծով խանդրեցաք.  
 և կոտորելով վարեցաք ինչպի Պուտանդէ :

ՈՂԵ. 'Սա հետ մի 'ի դալ (\*) տարւոյն 'ի թուին ո՞ղէ  
 արարին շատ ժողովք, ու եկին մտան ընդ Սու  
 կըլկայ կապանն երկու հարիւր և վաթսուն հա  
 զար մարդ. և բոլոր պատեցին զՏարսուս :  
 Թագաւորահայրն, և ես Սմբատ Ղունդուս  
 տապլս, մտաք 'ի Տարսուս : Այլ եթէ զամէն  
 նեղութիւն բաբնաց ու զկուիւ գրեալ էաք,  
 նա կարի շատ էր լեալ : Հենց որ 'ի Չըմտին  
 դէհն ու 'ի Չըրեղին՝ աղէկ նետընկէց մի՝ փլուցին  
 զպարիսպն, շատք մեռան յերկուց կողմանցն, բայց  
 'ի դրացէ՝ հարիւրապատիկ. զի ունէաք ընդ  
 ներքս աղէկ Ֆուանկի չարսուորք :

Այլ ապա եկին դեսպան 'ի Թաթարէն՝ որ  
 թողէին ելանել. նա չէաք 'ի լեւ. վասն զի  
 զքաղաքն առած ունէին. նա զայդ որ շատ է  
 խնայել Մատուծ 'ի քրիստոնէայքն՝ զնոյն և  
 յայնժամն. որ նստեալ էր Սուլտանն Խիաթա  
 տինն յիւր բերդն 'ի Ալանսուտն. ու կու խմէր  
 լաւ, ասաց »քովս քովս« ու մեռաւ : 'Սա Մ  
 միրայք որ 'ի վերայ Տարսուսու կային՝ երբ լը  
 սեցին՝ նա 'ի զրոյց մտան ընդ Թագաւորն, ու

(\*) Ի ձեռ. կոյլ :

ուզեցին զՊուականա, որ սիրով 'ի տուն երթա-  
 յին. նա թագաւորն երեա. որ ելան ու գնա-  
 ցին: Եւ չէաք յիմացեր զՍուլտանին մահն.  
 չիկադէկներ լել. յետ երկու տարւոյ գողացաք  
 զՊուականա: Եւ ընդ կամքն Մատուծոյ մի՛ ոք  
 պարծեցի փախչել. զի որչափ 'ի վերայ մեզ  
 կացին՝ կաթ մի անձրև չեկաւ. երբ որ սերն  
 եղաւ՝ նա 'ի քսան օր գիշեր և ցերեկ չկտրե-  
 ցաւ. և եղև ամէն աշխարհ ծով: Յայնժամն որ  
 ելան՝ տասն հազար մարդ աւելի ոտով սպանին.  
 և ջրախեղդ սատկեցան. շատ պիղծ էաք այրել  
 իւրեանց՝ թէ չէաք երդուել:

Ի թուին ո՞ղէ գնացի ես Սմբատ Ղաուն, ՈՂԵ.  
 դուստապլս 'ի թաթարն. և 'ի թուին ո՞ղթ ՈՂԹ.  
 դարձայ առ իմ եղբայրն Նիթում թագաւորն:

Ի թուին է՛ճը Նիթում թագաւոր էաւ ՉԸ.  
 զբերդն Սունդաս. և արար ձիաւոր զիւր երկու  
 որդին զՂ և ոն ու զԹորոս:

Ի թուին չ՛իդ մեռաւ պարոն ( ) շին Կուի ՉԺԴ.  
 կոսոյ տերն:

Ի թուին չ՛իէ էաւ թաթարն զՍեւտինէ, ՉԺԵ  
 զՂմիթ և զՈււհայ. և ծնաւ Նիթում Մազ  
 պարոն:

Ի յայտմ ամի էաւ Նիթում թագաւոր ըզ-  
 Սարաշ: Ի սոյն ամի առին զօրքն Սարայ ըզ-

- Հէթում Թագաւորին զորդին ծառայ՝ զպարոն  
 Լևոն. և զպարոն Թորոս զիւր եղբայրն սպանին:
262. Ի Թուին չԺզ էառ Պալաւոն (\* ) զՎոս-  
 տանդնուպօլիս 'ի Ֆուանկնոյն :
263. Ի Թուին չԺէ էառ Սարայ Սուլտանն զՄն-  
 տաք և զՂաֆն : Ի սոյն ամի ազատեցաւ պարոն  
 Լևոն. և դրին կաթուղիկոս զաէր Յակօբ 'ի  
 Սիս (\*\*):
264. Ի Թուին չԺթ հանգեաւ 'ի Վրիստոս Հե-  
 21. Թում Թագաւոր : Եւ 'ի Թուին էճի օժեցին  
 Թագաւոր զորդին նորա Լևոն :
265. Ի Թուին չԺգ Պստուխտար Սուլտանն ա-  
 լերեաց զՍասական դարայն ու գնաց մինչ 'ի  
 Կուրիկոս :

(\*) Այն է. Սեփոյէլ Պալէոլոգ:

(\*\*) Ի ձեռ. 'ի Սոփո:



ՀԱՐՈՒՆԱՅՈՒԹՒԻՒՆ ՅԱՅԼՄԻ :

Ի թուին չլէ մեռաւ տէր Յակոբ կա ՉԼԵ.  
Թուղիկոսն . և եղին յաթուն զտէր Աոստանդին  
Պրօնագործ (\*):

Ի թուին չլէ ծնաւ պարոն Թորոս՝ որ ՉԼԵ.  
դի Լ և ոն Թագաւորի:

Ի թուին չլր մեռաւ Լ և ոն Թագաւոր . ՉԼԵ.  
և նստաւ իւր որդին՝ պարոն շէթում . և վասն  
տէր Աոստանդնայ սուտ վկայս բերեալ՝ ձգեցին  
յաթունոյն :

Ի թուին չլթ դրին կաթուղիկոս զտէր ՉԼԹ.  
Ստեփաննոս շուովկայեցին (\*\*):

Ի թուին էճիս Լ շրաֆն ջնջեաց զբրիստու ԽՉ.  
նեայքն 'ի Սեհլէն . և էառ զԼ Ք. քա (\*\*\*):

Ի թուին չլսա եկն Լ շրաֆ Սուլտանն Ս ըւ ՉԽԱ.  
րայ 'ի վերայ շուովկային շատ զօրօք, և կուռե

(\*) Ի ձեռ. Պրոնէ գործոց:

(\*\*) Ի ձեռ. շուովկայեցին :

(\*\*\*) Ի ձեռ. պտղոս:

ցաւ 'ի վերայ բերդին շատ օրեր, էառ զնա, և զամենայն սուրբ մասունսն որ անդ էին, և զաջ սուրբ Գրեգորի. և զկաթուղիկոսն և զեպիսկոպոսքն և զքահանայք և զսարկաւազունք շատք ծառայ տարաւ 'ի Մսր: Եւ անդ մեռաւ կաթուղիկոս տէր Ստեփաննոս: Կարծեմ թէ՛ յանիրաւ իրաւանց եղև վասն տէր Կոստանդեայ պքսորեւոյն. զի այս ամէնս վասն նախանձու եղև: Եւ մեռաւ պարոն ( ) շին Մարաջատն, և կարգեցին զՈւիթայն, և տուին թագաւորու թեանն տիրոջն:

Եւ 'ի սոյն աւուրքս պարոն Հայոց Հեթում գնեց զաջն Առսաւորչին և զամենայն մասունս 'ի յանօրինաց, և եբեր 'ի Սիս: Եւ դրին կաթուղիկոս զտէր Գրեգոր:

ՁԽԶ.

Ի թուին չիսլ եդեր պարոն Հեթում թագաւոր Հայոց զՍմբատ զիւր եղբայրն, և ինքն էառ զմէկայլ եղբայրն պարոն Թորոս ըզ տէր Պապառնին, և գնաց 'ի Կոստանդնուպօլիս 'ի քոյրն իւրեանց Ուիթայն 'ի տես: Եւ յորժամ դարձաւ, բռնեց Սմբատ զերկուսն և եդ 'ի բանդ:

ՁԽԸ.

Ի թուին չիսլ ետ խեղդեւ Սմբատ զեղբայրն իւր պարոն Թորոս 'ի Ռարձր բերդ. և զպարոն Հեթմոյ աչքն ետ առնեւ 'ի Սօլիսին:

Ի սոյն ամի միւս եղբայրն պարոն Կոստան, դին՝ տէր Կապնուն ժողովեց հեծել, և փախոյց զՍմբատն. և եհան զաւագ եղբայրն իւր Հեթում. և հրամանաւ նորա ինքն թագաւորեաց: Եւ յետ սակաւ աւուրց բունեց զպարոն Կոստանդին պարոն Հեթում. և զՍմբատն եհան յերկրէ իւրմէ: Եւ յետ աւուրց եղ թագաւոր զորդին պարոն Թորոսին զտղայն Եւոն:

Ի սորա աւուրքն կոտրեցին զօրքն Հայոց և պարոն Հուսամաց Խաղանձունն զզօրքն Սարայ 'ի մօտ Ղ, յաս. որ էր թիւ հեծելին Սարայ չորեքասան հազար այր:

Եւ մեռաւ տէր Պրիգոր կաթուղիկոս. և դրին զտէր Կոստանդին կեսարացին:

Ի թուին չճ յպան Պիլարդուն զտղայ 282. թագաւորն Եւոն, և զհօր եղբայրն իւր պարոն Հեթում՝ Ղ, նաւարդոյ առջևն. որոց ազորմեսցի Քրիստոս:

Ի սոյն ամի կրտեր եղբայրն պարոն Հեթմոյ՝ տէրն Տարսոյ՝ պարոն Լինասն գնաց առ Խարպանտա Խանն, և ետ սպանանել զՊիլարդունն. և հառ զվճար անմեղացն. և դարձաւ առ իւր եղբայրն ( ) շին:

Ի թուին չճէ օժեցին թագաւոր Հայոց 283. զ( ) շին 'ի Տարսուս քաղաք:

ՉԾԸ. Ի Թուին չճը մեռաւ պարոն Լ՛ւինախն ,  
որոյ ողորմեսցի Վրիստոս :

ՉԾԹ. Ի Թուին չճԹ ծնաւ Թագուհին Օ՛ւպէլ  
զորդի ( )շին Թագաւորին զԼ՛ւոն , և ինքն  
հանգեաւ 'ի Վրիստոս :

ՉԿԵ. Ի Թուին չկէ ուղարկեաց եբեր ( )շին Թա-  
գաւորն զեղբօր դուստրն Բ՛ուէ Բ՛ուուպերտին ,  
և պսակուեցաւ 'ի Տարսուս :

ՉԿԵ. Ի Թուին չկէ ելաւ Խարամանն շատ հե-  
ծելով , և գերեաց զսահմանն Տարսոնի . և  
դարձաւ էջ 'ի Տամբօլու կանդարայն : Սա  
գունդն կողիկոսոյ պարոն ( )շին երեք հարիւր  
մարդով հասաւ նոցա , և կոտորեաց զնոսա Լ՛ս-  
տուծով , և դարձաւ ուրախութեամբ :

ՉԿԹ. Ի Թուին չկԹ հանգեաւ 'ի Վրիստոս  
Թագաւորն ( )շին . Եւ 'ի սոյն ամի եղև շմիր :  
զի զօրք Ս՛ւրայ աւերեցին զԿիլիկայս : Ի Թուին  
չկԹ կոտորեցին զօրքն հայոց զզօրսն Ս՛ւրայ  
առաջև Տարիքարկու և 'ի սահմանս Լ՛յասու .  
և խոցեալ յանօրինացն մեծ իշխանն տէր կան-  
չոյն պարոն կիօդին և մեռաւ :

ՉԿ. Ի Թուին է՛ճճ օճեցին Թագաւոր հայոց  
զդեռաբոյսն զորդի ( )շին Թագաւորին զԼ՛ւոն ,  
( որոյ տացէ ամն Լ՛ստուած ժամանակս բազու-  
մքս ) , և էառ ( Լ՛ւոն ) իւր Թագուհի զդուստրն

Գուճնդին Կուսիկոսոյ պարոն ( ) շնի, որ էր  
Պայլ Հայոց :

Ի սոյն ամի եմնւտ շատ զօրօք Հոռմաց  
պարոն Տամուրտաշն 'ի Կիլիկայս՝ առ 'ի բառ-  
նալ զքրիստոնէութիւնն. և զբազումս գերեաց,  
և ել ամաչեցեալ՝ և դնաց :

Ի Թուին չհա եկն զօրքն Սուրայ 'ի Կիւ ԶԿԱ.  
լիկեցւոց յաշխարհս 'ի վերայ քաղաքին՝ որ կոչի  
Լյաս. և պաշարեաց զնա, և հառ զմին զայն.  
և բազում քրիստոնէայս գերեցին : Եւ զկնի  
երկոտասան աւուր շատ ազգեր հնարիւք և բաբ-  
նիւք մարտեան 'ի վերայ Ղզրին : Եւ բեկեցան  
զլիսաւորք տեղոյն, գաղտ 'ի գիշերի մտան 'ի  
զաւէքն Կիպրոսայ տիրոջն, որ և եկեալ էին իւր  
հրամանօք յօգն քաղաքին, և նաւով փախան՝  
ումանք 'ի Կիպրոս, և ոմանք 'ի Կուսիկոս : Եւ  
զկնի այս աւերածոյս եկին իջան 'ի գետեզրն՝  
որ կոչի Պասան. և հրաման տուեալ զօրացն  
յարձակիլ առ ստորոտ լերանց աշխարհիս՝ շատք  
գերեցին : Իսկ զօրք Թագաւորին ] և ոնի սըր-  
տախոց եղէն ընդ աւերումն երկրիս. քիչ մի  
մարդով գնացին 'ի վերայ իջեվանի նոցա, և  
արարին խիստ կոտորուած : Իսկ հեծելն որ  
իջեալ էր առջև կուուոյ՝ կամուրջ կապեալ  
էին նաւերով 'ի վերայ գետին. իմացան զգալ

զօրացն մեր, և անցան յայս կողմն անհամար շատ: Իսկ զօրք մեր վախեցան. դարձան յետս առաջի Սասայ՝ իւրեանց զօրագլխովն. և ահօրէնքն ՚ի յետե. և զբազումն սպանին: Սեւան այն օրն յիշխանացն հայոց. Պարոն հեթում՝ Ջղինոցին տէրն, և իւր եղբայրն պարոն Կոստանդին. և պարոն Սահրամ Զօտիկ. պարոն ( )շին՝ Սարաջախտուն որդին. և ձիաւոր քսան և մի. և փոքր մարդ շատք. որոց ողորմեսցի նոցա Մտուած:

245. Ի սոյն ամի չհա մեռաւ տէր Կոստանդին Կեսարացին կաթողիկոսն: Եւ ՚ի սոյն ամի ՚ի տօն ծննդեան Քրիստոսի դրին կաթողիկոս հրամանաւ Թագաւորին Լեոնի և շատ եպիսկոպոսաց՝ զՍոյ եպիսկոպոսն զտէր Կոստանդին Լամբրոնցին:

246. Ի Թուին չհ հանգեաւ ՚ի Քրիստոս մանուկն պարոն հեթում. և եթող մեծ սուգ հօր իւր պարոն ( )շնի Կուիկիսոյ Գունթին:

247. Ի Թուին չհե մեռաւ կաթողիկոսն տէր Կոստանդին Լամբրոնցին:

248. Ի Թուին չհզ դրին կաթողիկոս զարհե եպիսկոպոս Մնաւարզոյ զտէր Յակոբ ՚ի Սես՝ զբոլորդի տէր Գրիգորի՝ տուրք իրեցանց:

Յորժամ մեռաւ տէր Արստանդին կաթուղի  
կոնն, նա տարան 'ի Ղարազարին և բացին զհող-  
քըն տէր Արստանդին Տարձրբերդցի կաթու-  
ղիկոսին. նա գտան զշուրջաուն փոած, և ըզ  
պավլին խայտնին շէն, և զգաւազանն և զմազն.  
և ոսկր ամենեկն չգտան. և փառք տուին Մ,ս,  
տուծոյ, որ աւնէ զսքանչելիս 'ի սուրբս:

Ի Թուին չճէ ամբարիշտ պարոն Հոռմաց 24Է.  
Տամուրտաշն 'ի համբաւէ վախաց 'ի զօրաց Խա-  
նին Սուղլաց. փախաւ և գնաց առ Սուլտանն  
Սորայ Մէլիք Նասրն. և կամէր նովաւ կըռ-  
ուել ընդ ազգն իւր, և ընդ Թագաւորն Հա-  
յոց Լևոն: Նա Մստուած խափանեաց զինքն  
և զհամնխոհք իւր. և յետ ութ ամնոյ եսպան  
զինքն Սուլտանն. և զգլուխն յուղարկեաց առ  
Պուսայիտ Խանն:

Ի Թուին չճը Յունւարի քսան և վեցն յան 24Ը.  
Լարծ առաքեաց պատանին Լևոն Թագաւորն Հա-  
յոց իշխանք սակաւ հեծելով վասն բռնելոյ Ղուն-  
դին Առուիկոսոյ և իւր եղբօրն: Ալ դիպեցան յՄ,  
ոանոյ սահմանքն Ղունդին՝ որ առ Թագաւորն  
Երթայր հինգ մարդով. և բռնեցին զինքն և  
բարձուցին յետ, և դրին յարգելք 'ի յեկեղե-  
շին սուրբ Սօրօթաւ 'ի մծտ Մտանոյ: Ալ  
չնաց հեծելն ու բռնեց զեղբայր Ղունդին 'ի

գեղն տղայ Լևոնին՝ զՊոլսոստապէն, և բերին յԱտանա. և ՚ի մէկ օրն սպանին զերկուսն: Պատճառք զայս դրին, թէ յետ մահուան ( ) շին թագաւորին շատ բերդեր ապրանք առին, որ չէր իւրեանց սահմանով ապրանք. և այլ շատ բան ասացին փոքր մարդիկն վասն նոցա, ինչպիսի սպանել տուին. որ զճշմարիտն Լստուած գիտէ: Եւ Լևոն թագաւոր անմեղ է ՚ի նոցա արեւնէն. որոց ողորմեսցի նոցա Լստուած. և սահեսցէ երկար ժամանակաւ զթագաւորս մեր ըզ Լևոն:

220. Ի թուին չճ թեկն շատ անձրև ընդ ամէն աշխարհս և ելաւ բազում գետեր. և ՚ի նոյն աւուրս Նոյեմբերի տասն և վեցն ՚ի Կիպրոսայ կղզին ելաւ մեծ խանդակն հեղեղով. և տարաւ ըզ Լեքօսիոյ քաղաքին մի մասն. և կորան ոգիք աւելի քան վեց հազար:

22. Ի թուին էճճ եբեր թագաւորն Հայոց Լևոն զդուստր թագաւորին Սիւնիոյ զՌուֆըւտըրկայ իւր թագուհի, որ է կին համեստ և իմաստուն. որ տացէ Լստուած թագաւորին մերոյ և թագուհւոյն ժամանակս բազումս. և տեսցեն զորդիս որդւոց իւրեանց. ամէն:

Մեծին Անտիքայ հրամանաւ պատրիարքին  
աթուռոյն են այս վիճակնս:

Կաթողիկոսք և մետրապօլտեր և առաջին  
եպիսկոպոսք, որ են կաթողիկոսք: և եպիսկո-  
պոսեր: և դաւաղանք սոցա: Կաթողիկոս Արաց  
սանն: Կաթողիկոս Իւրինապօլսի, որ է Պաղտատ:  
Կաթողիկոս Բուսի Կերիօս, որ է Պարսիկք:  
Սեպրապօլսի էն այս: Սրոյ ունի եպիսկոպոս երեք-  
տասան: Տարսուս ունի եպիսկոպոս եօթն: Ուռհա  
ունի եպիսկոպոս մետասան: Համն ունի եպիս-  
կոպոս եօթն: Իւրապօլիս ունի եպիսկոպոս ութ:  
Պսրէնն ունի եպիսկոպոս իննետասան: Բնա-  
ւարզայ ունի եպիսկոպոս ինն: Սելեկիա ունի  
եպիսկոպոս քսան և չորս: Ղազխ ունի եպիսկո-  
պոս տասն: Բիտա՝ որ է Մելիտնի, ունի ե-  
պիսկոպոս տասն: Տրապօլիս ունի եպիսկոպոս  
չորս: Թաւրէթ ունի եպիսկոպոս եօթն: Համն  
ունի եպիսկոպոս չորս: Պերութ. . . . . : Իլիա-  
պօլիս՝ որ է Պաղլպաք, . . . . : Էատիկն. . . . .  
Տար սամծսադա՝ որ է Սամիտոն. . . . . : Կե-  
րիօս. . . . . : Մարդերուպօլիս. . . . . : Մը-  
սիս. . . . . : Բտանա. . . . . : Բանապօլիս. . . . .  
Բուաջին եպիսկոպոսեր՝ որ են փոքր կաթող-  
ղիկոսք, ա Խաւքիս. բ Ղաւլաւ. գ Սալեկիա

'ի շամբնէ. Դ Երազարեթ. Ե Լապալթաս. Զ  
 Երմանապօլիս. Է Գաւուզա. Ը Սալամիա. Թ  
 Սարկուսա. Ժ Լըասուս. Իա Տանափաղայ:

Սեճ կաթուղիկոսք մետրապօլսեր քսան երկու. փոքր կաթուղիկոսք մետասան: Գաւազանքնէ. Հուովայ աթուոն՝ սուրբ Պետրոսի վիմին է. . . . : Ի սորա հայրապետին առջև տանին խաչ, և 'ի դաւազանի տեղ՝ ճոկան. զի հովուի օրինակ է:

Չորս պատրիարգութեան աթուո կիսալ յաշխարհս հրամանաւ սուրբ առաքելոցն, զոր յետոյ սուրբ սիւնհոգոսքն առաւել հաստատեցին. որ է օրինակ չորեքկերպեան աթուոյ Լստուածութեանն:

Լուաջին աթուոն Երուսաղէմի. յորում էրն Գուկաս աւետարանիչ: Յայտոր պատրիարգին առաջև տանին դաւազան. ու 'ի դաստրուկի տեղի կախ 'ի դլուսն՝ եպիսկոպոսի կոնքեուն. որ գուշակէ թէ առաջին եպիսկոպոսութիւնն յԵրուսաղէմ կիսաւ. ու այս եպիսկոպոսութեան նշան է:

Երրորդն Լնտիոք է, յորում էրն Սատթէոս աւետարանիչ: Ի սորա առջև տանին խաչ ձողով, որ գուշակէ թէ զխաչեւեալս Քրիստոս յառաջ յԼնտիոք քարողեցին:

Երրորդն Կոստանդնուպօլիս. յորում էրն Յոհաննէս յԱփետոս. նա վասն կայսերութեանն

անդ եղաւ աւագութիւնն : Ի սորա պատրիար-  
 գին առջև տանին երեք մեծ մոմ սպիտակ 'ի  
 վառ : որ գուշակէ թէ զերրորդութիւնն և զմի  
 Մստուածութիւնն և զքնութիւնն 'ի յայտոր  
 վիճակն քարոզեցին , և հաստատեցին սուրբ  
 հարքն 'ի սուրբ ժողովնին 'ի Նիկիա . 'ի կոս-  
 տանդնուպօլիս և Ղփեսոս :

Չորան Մղէքսանդրում է , ուր էրն Մար-  
 կոս աւետարանիչ . զոր յետոյ մեծ վարդապետն  
 Մթանասիոս արիական ջանիւ հալածեաց զհեր-  
 ծուածողսն : Յայտոր առջև տանին գաւազան  
 մէն , զի գաւազանն վարդապետի աստիճան է :

Հայոց կաթողիկոսն հրամանաւ սուրբ հայ-  
 րապետին Հռոմայ Սեղբեստրոսի . և պատրի-  
 արգին կոստանդնուպօլսի Մեարոփանոսի , և  
 այլ երեց պատրիարգացն կամօք եղաւ : Սուրբ  
 Գրիգոր Ղուսաւորիչն յաթոն ( \* ) թաղեո-  
 սի առաքելոյն կաթողիկոս ամենայն Հայոց : Ի  
 սորա առջև տանին խաչ ձողով և գաւազան . ( որ  
 գուշակէ ) թէ է' եպիսկոպոսապետ և վարդապետ :

Հրամանաւ սուրբ Գրիգորի եղաւ սուրբ  
 Յակոբ Մծբնայ հայրապետն պատրիարգ Մսո-  
 րոց . զի վանն անուան հայրապետին Յակոբիկը

(\*) Ի մեռ. յոտ-ոտն :

անուանին: Օ՞ր չորս պատրիարքունքն և Փափն  
Հռոմայ ոչ ընդունին, բայց միայն Հայք.  
Օ՞ր Յոյնք սուրբ Յակոբայ մականուն՝ Յակոբ  
Նանծալոս ասեն:

Եյլ գիտացիք եղբարք՝ որ երբ կամենան հայրապետքն ժողով աունել վասն հաւատոյ կամ այլ ինչ բանի, նա երբ Երուսաղէմի եպիսկոպոսն չկենայ, չէ ընդունած ժողովն այն: Օ՞ր զսուրբ ծննդեանն ու զխաչելութեանն և զյարութեանն տեղապահութիւն ունի, և ամենայն ինչ նովաւ հաստատի: Թէ և ինքն մէն կենայ, նա կարէ տիեզերական ժողով աունել՝ առանց այլ պատրիարքացն և Պապուն. ու չկարեն հակառակել, զի յամենայն ժողովնին զԵրուսաղէմի եպիսկոպոսն բարձր նստուցանեն:

Օ՞ր կնի մահուանն Պապկայ արքայի Հայոց, եկին յարեւելից որդիք մեծազարմ՝ իշխանին պարոն Ռուբինայ. Պարոն Կոստանդինու՝ Լստուծոյ օգնութեամբն՝ ի Սսրլմնաց ուչաք մի՝ ի Հումէն, մեծ մասն աշխարհիս Կիլիկոյ, որ էր առաջին բերդ՝ Սահկայն՝ ի Թուին Հայոց շէն:

Անուանքն են Պարոնաց և Թադաւորացն Հայոց.

Պարոն Կոստանդին ամն չորեքտասան: Պարոն Թադորոսի որդին ամն քսան ինն: Պարոն Լևոս

նի եղբայրն ամն տասն: Յետ այսոր Փեռպե-  
 ոսօթէն կայսրն իրեկէ էառ զաշխարհս ու Մհմատ  
 մելիքն 'ի հետ ու երեք տարի խլած կեցաւ ինչպի  
 եկ պարոն թաորոս, էառ զՄահայն. որդի Պա-  
 րոն Լևոնի: Պարոն թաորոս՝ որդի Լևոնի ամն  
 քսան և վեց: Պարոն Ռուբէն՝ որդի թաորոսի  
 ամ մի: Պարոն Մլէհ՝ եղբայր թաորոսի ամն  
 եօթն: Պարոն Ռուբէն՝ որդի Ստեֆանէի ամն  
 երկոտասան: Լևոն Թազաւոր՝ որդի Ստեփա-  
 նէի ամն քսան երկու: Ֆիլիպ Թազաւոր ամն  
 չորս: Հեթում Թազաւոր ամն քառասուն և  
 հինգ: Լևոն Թազաւոր ամն ինն և տասն: Պարոն  
 Հեթում ամն ութ: Սմբատ Թազաւոր ամն եր-  
 կու: Պարոն Կոստանդին ամ մի: Չորս տարի մի-  
 ջոց մինչ 'ի Լևոն Թազաւոր: Լևոն Թազաւոր  
 ամն երեք: ( ) շին (\*) Թազաւոր ամն երեքտասան:  
 Լևոն Թազաւոր. սրահեցէ զսա Մստուած 'ի  
 բարի՝ ամն հարիւր:

Ապարապետէն են Հայոց 'ի Լևոն Թազաւորէն ընդ այս.

Պարոն Պաղտին: Պարոն Մսլղալիպ՝ տէր  
 Կոստաֆոյն: Կոստանդին՝ Մլազ Պարոն: Պարոն  
 Սմբատ Կոստանդուստապլ՝ տէր Պապաւոնին: Պա-

(\*) Ի մեռ. Ե-շէն:

րոն Լ ևոն իւր որդին: Պարոն ( ) շին Սինիջաւն:  
 Պարոն չեթուժ՝ Կուռիկոսոյ տէրն: Պարոն Կոս  
 տանդին՝ իւր որդին՝ տէր Լ ամբրոնին: Պարոն  
 Ճուան՝ Սրոյ տէրոջն որդին:

Մարաջախքն են.

Պարոն Ս ասիլ՝ վաներոջն տէրն: Պարոն ( )  
 շին Լ ամբրոնցին՝ Մառնիշոյ տէրն: Պարոն  
 չեթուժ՝ իւր որդին: Պարոն թճորոս՝ Սմանակ  
 լին տէրն: Պարոն Սմբատ՝ Պինակին տէրն: Պա  
 րոն Պաղտին՝ Նղրցի:

Կայսերք Հռոմայ է.

Յուլիոս Թագաւորն շինեաց զՀռոմ. որ էր  
 Հայր մօրն Լ ղէքսանդրու Մակեդոնացւոյ և ՚ի  
 Հետ ճ ամաց եմուտ կայսրութիւն ՚ի Հռոմ:

Առաւելք Կայսերացն.

Գայիոս ամն զ: Լ ղգոստոս ամն ծղ և կէս:  
 Տիբերոս ամն Ժգ: Գայիոս ամն զ: Կլոդէոս  
 ամն ծղ: Ներոն ամն Ժգ: Ս Եսպիանոս ամն Ժ:  
 Տիտոս ամն Ժ: Ղոմէտիանոս ամն Է: Ներուաս  
 ամն զ: Տրիանոս ամն ԺԺ: Լ ղնդրիանոս ամն Էա:  
 Տիտոս ամն Էե: Մարկոս ամն ԺԺ: Կոտոս ամն  
 Ժգ: Լ ղիոս ամն յ: Սեւերիոս ամն Ժը: Լ ղստո  
 նինոս ամն զ: Մակաբիոս ամն ԺԺ: Լ ղէքսիոս

ամն Ֆզ: Մաքսիմիանոս ամն ղ: Գորգիանոս  
 ամն ղ: Փիլիպոս ամն ն: Գեկոս ամն ն: Գա-  
 ղիոս ամն ը: Սաղերիանոս ամն Ֆե: Աղօղիոս  
 ամն ն: Լւրեղիանոս ամն Ֆզ: Պրովբոս ամն  
 ղ: Կարոս ամն բ: Գիողղետիանոս ամն ի: Աոս-  
 տանդիանոս ամն լղ: Աոստաս ամն լե: Յուլիա-  
 նոս ամն ն: Յորիանոս ամիս ղ: Սաղէս ամն  
 Ֆզ: Գրատիանոս ամն է: Թէոդոս ամն Ֆզ:  
 Լւրկադէս ամն լբ: Թէոդոս ամն լե: Մար-  
 կիանոս ամն Ֆե: Օկենոն ամն Ֆզ: Լնաստաս  
 ամն իե: Յուստիանոս ամն Ֆթ: Յուստինոս  
 ամն լթ: Տիբերոս ամն ը: Սուրիկ ամն իզ:  
 Ֆուկաս ամն ը: Հերակլ ամն լա: Աոստանդին  
 ամն ղ: Աոստանդին ամն Ֆ: Յուստիանոս ամն  
 է: Յուստիանոս ամն Ֆ: Աոստանդին ամն ի: Աե-  
 կէփոր ամն լ: Լրիստափոր ամն Ֆէ: Լևոն  
 ամն ղ: Աոստանդին ամն է: Տիբերոս ամն Ֆ:  
 Թէոփիլոս ամն լ: Միքայէլ ամն ի: Լևոն  
 ամն իը: Լւէբս ամն ն: Աոստանդին ամն Ֆզ:  
 Ռամանոս ամն ղ: Աեկիֆօս ամն է: Յոհաննէս  
 Չըմըշկիկ ամն է: Սասիլ յաղթօղն ամն ծը:  
 Աոստանդին ամն ղ: Ռամանոս ամն ղ: Մե-  
 խայլն ամն Ֆա: Աեսառոս ամիս է: Սուլուաման  
 ամն Ֆզ: Թոմոսոն ամն բ: Մեխայլ Լւլորն  
 ամիս ղ: Աոմանոս ամն ն: Տուկիծն ամն ը: Տիո-

Ժենն ամն ղ: Սիխայն ամն ղ: Սօտիանսս  
 ամ ն: Սեղեսիանոս՝ ամն ղ: Մէքսն ամն շ:  
 Կալօժան ամն Ճը: Պեռփեռօժէնն ամն ը: Կեռ  
 Սանիլն ամն խբ: Լնդրօնիկէն ամն շ: Լնկե  
 լոսըն ամն խ: Լասքարի ամն խա: Պալալօղն  
 ՚ի Թուին չՃղ նստաւ Թագաւոր: Լնդրօնի  
 կէն . . . : Լնդրօնիկէ Թռն սորա՝ որդի Կիր  
 Լնքսին, բռնութեամբ տիրեաց Թագաւորու  
 Թեանն, և եղ ՚ի բանդ զմեծ հայրն իւր զԼն  
 դրօնիկէն: Լսս եղև ՚ի Թուին հայոց չՃղ:

Կոստանդնուպօլսի Պատրիարքներն են .

Յորժամ Կոստանդիանոս հաւատաց ,

մինչ ՚ի ղ ժողովն .

Սեարոփանէս: Լնքսանդրոս: Սուրբ Պօ  
 ղոս խոստովանօղն: Սակեդոն: Լըդրքսիոս: Պիե  
 մոփիլիոս: Սեքտաուիոս: Սուրբ Յոհան Ասկի  
 բերանն: Լտտիկոս: Սինիս: Սեստոր: Սաքսի  
 միանոս: Պրոկղ: Փլաբիանոս: Լնաստօլիս: Սուրբ  
 Պերմանոս:

Ի հռոմայ շինութենէն մինչ ՚ի մեծն Կոս  
 տանդիանոս ամն շՃ: Լը ՚ի Կոստանդիանոս  
 Թագաւորէն մինչ ՚ի Թուականն հայոց չՃթ՝  
 է ամն ռլգ . որ է ջումն ՚ի հռոմայ շինու  
 Թենէն մինչ Թուականն չՃթ՝ ամն ռշխէ: Ի

Քաղկեդոնի ժողովոյն մինչ 'ի Թուականն չճԹ՝  
ամն ըճկ :

Ի Թուին Հայոց կգ յարեաւ Սահմեա, և ԿԳ.  
մոլորեցոյց զՍ՝ ըսմանքն: Ի՛ր կայսր յայն ժամն  
նակումն Հերակլէս, և կաթուղիկոս՝ տէր Սա-  
հակ, որ 'ի Խառան մեռաւ:

Ի յԼ՝ դամայ մինչ 'ի Քրիստոսի ծնունդն՝  
ամք ըճճ: Ի ծննդենէն Քրիստոսի մինչ 'ի  
Թուականն չճԹ՝ ամք ո՛յ լա. ջումն է յԼ՝ դամայ  
մինչ 'ի Թուականն չճԹ՝ ամք ց՛պ լէ: Յադամայ  
մինչ 'ի Հայոց Թիւն՝ է ամ ց՛ծԹ: Ի Թուէն  
չճԹ՝ ջումի ամք ց՛պ լը: Ի ծննդենէն Քրիստո-  
սի մինչ 'ի Հայոց Թիւն՝ է ամն շ՛ծա :


Ի Թուին չճբ գնաց տէր Կաստանդին կա ԶԿԲ.  
Թուղիկոսն առ Սուլտանն Սարայ. և արար սէր  
և խաղաղութիւն. և դարձաւ մեծ պատուով . և  
երեստ կաթուղիկոսին երէք ձիաւոր այլ՝ որ 'ի  
հոն ծառայ կային, և այլ ծառայք այլ 'ի փոք-  
րագունից, և դարձաւ 'ի Սիս:

Ի Թուին չճդ 'ի Սայիս եբ հինգ շաբաթի ընդ ԶԿԴ.  
լոյսն: Արիտասարդ մի կոյր եօթն ամ էր որ կոյր  
էր երկու աջօք. գնաց անկաւ առ ջև Կուսին Լ՝ ս.

տուածածնին . և լայր՝ զի բժշկեսցի: Մա ընդ  
 առաւօտքն յայտնի երևեցաւ Մստուածածին ,  
 ու կոչէր զնա և ասէր . » Գրեգոր Գրեգոր ,  
 էր կու լաս . յորժամ կուրացար , դու էր չեկիր  
 առիս՝ որ բժշկեալ էի զքեզ » : Այլ նա ասէ .  
 » ոչ գիտէի զյարկ քո » : Այլ եդ սուրբ Կոյսն ըզ  
 ձեռն , և ձեղքեաց զթարթիչքն , նոր պտուղ  
 շինեաց . և կալեալ փոքր շիշ և դեղդիր՝ ան  
 ցոյց զդեղդիրն յաչքն : Այլ (նա) առժամայն բժըշ  
 կեցաւ , և տեսաւ յայտնի զսուրբ Կոյսն ծիրա  
 նազգեստ , և երկու հրեշտակ առաջի : Այլ ու  
 մանք որ տեսեալ էին զնա յառաջն թուխակն ,  
 և այժմ խայտակն եղև , և ամենայն բնակիչք  
 քաղաքին և դաւառին տեսան և գոհութիւն տու  
 ին Մստուծոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն :



Ա. Ն. Պ.







ՀՀ Ազգային գրադարան



NL0342516

